ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

պատմվածքների, հեքիաթների, զրույցների, բանաստեղծությունների, փաստական նյութերի միջոցով

Ուսումնաօժանդակ ձեռնարկ
հասարակագիտական բնագավառի առարկաների
ուսուցիչների, դասղեկների և կազմակերպիչների համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2016

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 37.016:94(479.25)(07)
ԳՄԴ 74.266.3 g7
Հ 282

Կազմեց **ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆԸ**
Համագործակցությամբ՝ **ԹԵՀՄԻՆԱ ՔՈՉԱՐՅԱՆԻ**

Հ 282 Հայոց ցեղասպանության դասավանդումը պատմվածքների, հեքիաթների, զրույցների, բանաստեղծությունների, փաստական նյութերի միջոցով: Ուսումնաօժանդակ ձեռնարկ հասարակագիտական բնագավառի առարկաների ուսուցիչների, դասղեկների և կազմակերպիչների համար/Կազմեց Ռուբինա Փիրումյանը՝ Թեհմինա Քոչարյանի համագործակցությամբ.— Եր.: «Զանգակ» հրատ., 2016.— 164 էջ:

Ձեռնարկում դասերի ձևով ներկայացված է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը՝ համապատասխանեցված դասածրագրերին՝ ըստ թեմաների և դասանյութերի: Նախատեսված է 1–9–րդ դասարանների համար: Կարող է օգտակար լինել ինչպես դասվարների, դասղեկների, կազմակերպիչների, այնպես էլ պատմության, հասարակագիտության, հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար:

ՀՏԴ 37.016:94(479.25)(07)
ԳՄԴ 74.266.3 g7

ISBN 978–9939–68–513–7

© Փիրումյան Ռ., 2016
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2016

Պետականության ամրապնդումը և հայ ժողովրդի ազգային նկարագրի կայացումն ու պահպանումն ապահովելու ամենից ազդու միջոցը մտածված, ծրագրված և մանկավարժական ու մեթոդաբանական սկզբունքներով պատրաստված ազգային լիակատար դաստիարակությունն է, որը պիտի կիրարկվի դպրոցական առաջին իսկ դասարանից:

Որպես մի ժողովուրդ, որի դեմ կատարված անմարդկային անարդարությունը՝ Հայոց ցեղասպանությունը, անհատույց և անպատիժ է մնացել, որպես մի ժողովուրդ, որի առօրյա կյանքի, ազգային ինքնության և հավաքական հոգեբանության վրա առկա է ազդեցությունը այդ իրողության, և վերջապես, որպես մի երկիր, որի հարևան երկրների հետ ունեցած հարաբերությունների և նույնիսկ պետական արտաքին քաղաքականության մեջ նրա ժողովրդի աղետալի անցյալի ստվերն է ճնշում, մենք պարտավոր ենք կրթական համակարգի միջոցով անդրադառնալ ազգային շահերին, արժեքներին ավելի, քան ցանկացած այլ երկիր:

Ելնելով այս իրողությունից՝ նպատակահարմար է նկատում հայոց լեզվի, գրականության, պատմության և այլ հասարակագիտական առարկաների շրջանակներում գրագետ և մեթոդապես հիմնավորված ձևով, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, առանձին անդրադառնալ Հայոց ցեղասպանության հարցերին և իրականացնել նպատակադիր ուսուցում այդ ոլորտում:

Սույն մեթոդական նյութը տարիների փորձի և ուսումնասիրությունների արդյունք է: Հեղինակը հաշվի է առել միջազգայնորեն ընդունված միտումները ցեղասպանությունների մասին ուսուցման գործում, տարիքային առանձնահատկությունները և ուսումնական նյութերի իմաստավորումներն ազգային համատեքստում: Այն կազմված է այնպես, որ չի կարող հակառակ ազդեցություն ունենալ աշակերտի գիտակցության վրա և վտանգել նրա հոգու անդորրը:

Հավատում եմ, որ այստեղ ներկայացված ուսումնաօժանդակ ձեռնարկն իր առաջադրած հատուկ նյութերով և մեթոդաբանությամբ լավագույնս կկատարի մեր կողմից ակնկալվող դերը և կծառայի իր նպատակներին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ կրթության և գիտության նախարար

ՆԱԽԱԲԱՆ

Խոսք ուսուցիչներին

Յուրաքանչյուր ապրիլ ամիս, երբ Մեծ եղեռնի զոհերի հիշատակը ոգեկոչող հանդիսությունները լցնում են մթնոլորտը, երբ զգացումներն ավելի են սրվում ու Մեծ եղեռնի վերազարթնած հուշերի ճնշումը ավելի զգալի է դառնում, երբ ծաղիկներ առած, մեր փոքրիկների ձեռքից բռնած դեպի Մեծ եղեռնի հուշակոթող ենք քայլում, նույն հարցը գալիս է նեղելու մեզ: Հայ մանուկին և պատանուն ինչպե՞ս ասել մեր աղետալի անցյալի մասին՝ տանը կամ դասարանում: Ինչպե՞ս արծարծել հայ ժողովրդի դեմ կատարված սոսկալի անարդարությունը, որ իր ազդեցությունն է թողել և շարունակում է թողնել մեր հավաքական կյանքի վրա: Թեման արծարծե՞նք, թե ոչ, հայ մանուկները որևէ կերպով առնչվում են նյութին, հաղորդվում են մեր պատմության այս սև էջին և նրա պարփակած տխուր ու արյունալի տեսարաններին: Նրանց մեջ փոքր տարիքից առաջանում է հետաքրքրություն ի՞նչ պատահեց, ինչպե՞ս պատահեց և ինչո՞ւ պատահեց: Ծնող և ուսուցիչ պետք է պատասխանեն այս հարցումներին: Բայց ինչպե՞ս: Որոշ ծնողներ կամ ուսուցիչներ երեխաների հոգեկանը չվնասելու համար ոչինչ չեն ասում: Անպատասխան թողնված այս խորհրդավոր հարցը կարող է անորոշ մտահոգության, նույնիսկ ընդվզումի պատճառ դառնալ: Ուրիշներն էլ երեխայի տարիքին անհարմար բացատրություններով անցանկալի տպավորություն են թողնում նրա վրա, իսկ դա կարող է չափազանցված հակազդեցության պատճառ դառնալ, կամ հարատև սարսափ, շրջապատի նկատմամբ կասկած և անվստահություն, նույնիսկ թեմայի շուրջ անզգա անտարբերություն առաջացնել:

Ո՞րն է հավասարակշռված և երեխայի տարիքին հարմար ծրագրված փոխանցումը Հայոց ցեղասպանության՝ որպես անկյունադարձը մեր պատմության, որպես պատճառը, հետևանքը մեր այսօրվա ազգային լինելիության: Ո՞րն է հավասարակշռված ու հարմարագույն մեթոդաբանությունը, որով հնարավոր կլինի պահպանել փոխանցման իմաստն ու նպատակը՝ առանց անհարիր մոտեցումներով հակառակ ազդեցություններ թողնելու, առանց վտանգելու երեխայի մեջ ձևավորվող առողջ հոգին և ստվերի տակ առնելու հետապնդված իմաստն ու նպատակը: Ահա այս մտահոգություններն են, որոնք խթան հանդիսացան և ծնունդ տվեցին այս ձեռնարկին:

Մասնագետների քննարկումները և ընդհանրապես ցեղասպանության ուսուցման այլ օրինակների շուրջ կատարված խոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցեղասպանության մասին կարելի է խոսել բոլոր տարիքի երեխաների հետ, եթե մոտեցումը ճիշտ լինի, եթե նյութը տարիքին համապատասխան լինի: Օգտվելով նմանօրինակ անցյալ ունեցող ժողովուրդների իրենց աղետալի անցյալը սերունդներին փոխանցելու փորձից՝ եկանք այն եզրակացության, որ հատկապես ցածր դասարաններում «ցեղասպանություն» բարդ հասկացության ընկալումը դյուրացնելու համար, նախ պետք է մատուցել որոշ ավելի պարզ հասկացություններ, ինչպես օրինակ՝ «Համագործակցություն և հարատև աշխատանք», «Բարեկամություն և փոխադարձ հարգանք», «Արդարություն», «Ազատություն», «Իրավունքներ և պատասխանատվություններ» և այլն: Այդ թեմաներն ընդգրկված են այս ձեռնարկում և յուրաքանչյուրի համար առաջարկված է բովանդակային նյութ (պատմվածք, հեքիաթ, զրույց, կամ բանաստեղծություն) և դրան կից՝ այդ նյութը դասավանդելու մեթոդներ

ու միջոցներ: Թեմաները կարելի է դասավանդել տարվա ընթացքում, ըստ ուսուցչի կամ դասղեկի հայեցողության: Ապա՝ ապրիլ ամսին անցնել դարձյալ աշակերտի տարիքին հարմար ուղղակի ցեղասպանությանն առնչվող նյութին:

Նման դաստիարակություն անհրաժեշտ է մեզ հայերիս թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում, իհարկե, նպատակադրված և ճիշտ մեթոդաբանությամբ: Իսկ նպատակն այն չէ, որ զոհի հոգեբանություն ներշնչենք երեխային, որ ստորադասության բարդույթ առաջացնենք՝ իբրև փոքր ու խեղճ ազգի, որին տարան ու կոտորեցին: Նպատակն այն չէ, որ սգանք, լացենք ու լացացնենք: Նպատակը արդար պահանջատիրություն ներշնչելն է:

Մեր ժողովրդի դեմ հսկայական անարդարություն է կատարվել, և այդ անարդարությունը՝ համաշխարհային իմաստով անմարդկային ոճիրը, աշխարհին ճանաչել տալու և մեր արդար դատը խլելու համար պետք է պայքարենք ազգովի, փոքրից մեծ: Պետք է այնպիսի սերունդ դաստիարակենք, որ այդ դատի լուծումը դառնա ազգային գերագույն նպատակ, և դա պիտի սկսենք հենց ցածր դասարանների նստարաններից:

Իսկ այդ նպատակին հասնելու նախադրյալները պետք է լինեն՝

- Զգուշանալ երեխայի մեջ թերարժեքության բարդույթ առաջացնելուց. խուսափել այն գաղափարից, թե՝ «մենք փոքր ու խեղճ ազգ ենք, մեզ վրա տիրեցին, ու երբ մենք փորձեցինք մեր իրավունքները պաշտպանել, քշեցին մեզ ու ոչխարի պես կոտորեցին»:
- Ցեղասպանությունը կատարվել է թուրքերի ձեռքով, բայց ճիշտ չէ երեխային մի ամբողջ ժողովրդի դեմ ատելություն ներշնչելը:
- Որքան էլ, որ խոսելու լինենք մեր անմեղ զոհերի մասին, պիտի կարողանանք խուսափել զոհի հոգեբանությունից և այդ անառողջ հոգեբանությունը երեխայի մեջ սերմանելուց: Մենք այսօր հաղթող ազգ ենք և պահանջատեր:
- Եվ վերջապես, մատուցումը պիտի կատարվի սառն, տրամաբանորեն և առանց սուգ ու լացի:

Այս ուսումնաօժանդակ ձեռնարկը պատրաստված է 2010–ից ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքէջում, dasagirq.am հասցեում «Հայրենագիտական գրականություն» բաժնի տակ տեղադրված, իմ պատրաստած «Հայոց ցեղասպանություն, դասավանդման ծրագիր դպրոցական բոլոր դասարանների համար» էլեկտրոնային ձեռնարկի հիման վրա և խտացնում է այդ ձեռնարկում ուսուցիչներին ուղղված առաջադրանքները: Ներկա ձեռնարկի նպատակն է օգտակար լինել ուսուցիչներին և օգնել նրանց որոշելու, թե «Հայոց ցեղասպանություն» թեմայի մասին խոսելիս, աշակերտներին ի՞նչ ասել, որքա՞ն և ինչպե՞ս ասել:

Ռ. Փ.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ձեռնարկում ընդգրկվել են հետևյալ թեմաները և դասանյութերը, որոնցից յուրաքանչյուրի համար տրված է դասածրագիր (դասի պլան):

Մ Ա Ս – 1

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թեմա 1. Համագործակցություն և հարատև աշխատանք

«Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»

Թեմա 2. Արդարություն

«Ոսկու կարասը»

Թեմա 3. Բարեկամություն (ընկերասիրություն) և փոխադարձ հարգանք

«Երկու այծ»

«Երկու ընկերներ»

Թեմա 4. Եղեռն

«Կակաչները»

ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԵՐՐՈՐԴԻՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թեմա 5. Ազատություն

«Կյանքից թանկ բանը»

Թեմա 6. Գթասրտություն և համագործակցություն

«Եղջերուն ու ծառը»

Թեմա 7. Ազնվություն, արդարամտություն

«Ազնիվ փղան»

Թեմա 8. Կորուստ և քաջություն՝ պատճառած ցավը դիմագրավելու

«Հրանտ պապիկն ապրում է հավիտյան»

Թեմա 9. Եղեռն (երրորդ դասարանի համար)

«Գարնանային մի օր»

«Շուշանը»

Թեմա 10. Եղեռն (չորրորդ դասարանի համար)

«Անպարտելի ոգին»

Թեմա 11. Եղեռն (հինգերորդ դասարանի համար)

«Տանտանը»

«Պզտիկ հերոսը»

«Հեռավոր, բայց սրտակից բարեկամը»

«Դերենիկը»

Մ Ա Ս – 2

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

12. *Հայ ժողովուրդը ազատագրման հույսով պայքարի է դիմում*
13. *Հայոց ցեղասպանության պատմությունից*
14. *Ընթերցում – Ավետիս Ահարոնյանի «Հազրեն»*

ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

15. *Ինչպե՞ս գործադրվեց Հայոց ցեղասպանությունը*
16. *Ինքնապաշտպանական կռիվներ*
17. *Ընթերցում – Մուշեղ Իշխանի «Սարսափի գիշեր»*

ԲԱԺԻՆ 3. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

18. *Անպատիժ մնացած ոճրագործների դատաստանը*
19. *Թուրքերն ուրանում են Հայոց ցեղասպանությունը*
20. *Ընթերցում – Լևոն Բաշալյանի «Ցեղին ձայնը» և Սարմենի «Հայրենի տուն»*

ԲԱԺԻՆ 4. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

21. *Մշակութային ցեղասպանություն*
22. *Հայասպանության հարցը Միավորված ազգերի կազմակերպության մեջ*
23. *Ընթերցում – Շահան Շահնուրի «Հայոց զանգակները» և Արամ Անտոնյանի «Բան չկա»*
24. *Օրինակներ 20 –րդ դարի ցեղասպանություններից և մարդկային իրավունքների մեծածավալ խախտումներից*

Յուրաքանչյուր պատմվածք աշակերտի համար մի հնարավորություն է յուրացնելու Հայոց ցեղասպանության մեկ երեսը՝ իր պարփակած թեմաներով:

Այսպիսով, աստիճանաբար աշակերտները որոշակի գաղափար կունենան հայ ժողովրդի պատմության այս տխուր ու աննկարագրելի էջի մասին, որն էլ կանվանեն **«Ցեղասպանություն»** բառի լայն իմաստը լիովին ըմբռնելով:

Այս ձեռնարկը պատրաստված է առաջինից իններորդ դասարաններում սովորող աշակերտների տարիքային լեզվաիմացության և մտավոր կարողության մակարդակը նկատի ունենալով: Ավագ դպրոցի աշակերտների համար խորհուրդ է տրվում պարապել «Հայկական հարցի պատմություն» դասագրքով և օգտագործել դասագրքին կից ուսուցչի ուղեցույց և աշխատանքային տետր ձեռնարկները:

ՄԱՍ I

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՏԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» *(ժողովրդական զրույց)*

Դասանյութը պատրաստված է «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» ժողովրդական զրույցի հիման վրա:

Ուսուցչի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ զրույցի վերջին խրատական եզրակացությունը «Թշնամիդ, թեկուզ մրջյուն լինի, մի՛ արհամարհիր», նպատակադրված թեմայի շրջագծում չի շեշտված: Այստեղ շեշտը պետք է դնել առանց հուսահատվելու, համագործակցաբար հարատև աշխատանքի վրա: Դասածրագիրն արդեն խոսում է այդ մասին: Ուսուցիչը պետք է շեշտի, թե ինչպես հայերն իրենց հայրենիքից և ծննդավայրից դուրս կարողացան հարատևել, իրար օգնելով, դպրոցներ, եկեղեցիներ և միություններ կազմելով՝ իրար շուրջ հավաքվեցին ու հայ մնացին: Մենք էլ պետք է շարունակենք մեր նախորդների գործը, պետք է հայ մնանք և փաստենք թուրքերին, որ թեև մեզանից թվով շատ էին, բայց մեզ չկարողացան ոչնչացնել: Մենք կանք և թուրքերի գրաված մեր հայրենիքը հետ պետք է պահանջենք: Հայերն այսօր ապրում են Հայաստանում և աշխարհի շատ երկրներում և եթե իրար միանան, խելք խելքի տան, համագործակցեն, կարող են շատ բաներում հաջողել, աշխարհում առաջանալ, հզոր ազգ դառնալ ու մեծ թշնամուն հաղթելու հնարը գտնել:

ՈՒՍ ՈՒՍԻ ՈՐ ՏԱՆՔ, ՍԱՐԵՐ ՇՈՒՌ ԿՏԱՆՔ

Սողոմոն թագավորը մի փիղ ուներ: Էնքան հսկա էր, որ ամեն ինչ ոտնատակ էր տալիս: Բայց քանի որ թագավորի սիրած փիղն էր, անպատիժ էր մնում: Մեծ վնաս էր հասցնում էս հսկան, մանավանդ մրջյուններին: Պառկում ու մի քանի մրջնապալատ միանգամից էր ավերում, ոտը դնում ու մի պալատ մրջյուն էր ջնջում, կնճիթով քաշում ու մի պալատ էր երկինք փչում: Ճարահատյալ՝ մրջյունները գնացին Սողոմոն թագավորի մոտ:

— Իմաստուն թագավորն ապրած կենա,— ասացին,— քո փիղը մեր տներն ավերում, մեր ցեղը ջնջում է, արգելի՛ր:

— Ի՞նչ,— գոռաց,— մրջյունները ո՞վ են, որ նրանց համար իմ փղի առջև արգելք դնեմ:

Երկրորդ, երրորդ անգամ գնացին գանգատի, թագավորը դարձյալ չլսեց: Եվ տեր թագավորից հույսները կտրած՝ մրջյունները որոշեցին մեծ ժողովի հավաքվել: Եկան աշխարհի բոլոր մրջյունները՝ մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ, անգետ ու գիտուն: Եկան խելք խելքի տվին ու փղին հաղթելու հնարը գտան: Մրջնավարի լուռ՝ գործի կպան ու փղին վայել գերեզման փորեցին:

Ծանր փնչոց ու խուլ ոտնաձայներ եկան՝ մրջյունները սսկվեցին:

Դրփ, դրփ, դրփ – փիղը գալիս էր ավերելու: Ու մին էլ թըմփ... հսկան փոսն ընկավ, ոտքերը տնկեց, մնաց ու մնաց: Օրեր անցան, փիղը չկար: Թագավորը ծառաներին ուղարկեց փնտրելու: Էստեղ փիղ, էնտեղ փիղ՝ փիղը չկար: Մրջյունների մոտից ծանր ժանտահոտ էր գալիս, գնացին տեսան փիղը սատկել է: Ծառաները Սողոմոն Իմաստունին հայտնեցին.

— Մեր թագավորը թող շատ ապրի, մրջյունները թակարդ են սարքել, փիղն ընկել է մեջը, սատկել: Սողոմոն իմաստունը ողբաց իր փղի մահը, ափսոսաց, բայց և մտածեց իրենից հետո եկողների համար.

— Թշնամիդ, թեկուզ մրջյուն լինի, մի՛ արհամարհիր:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել «հարատև աշխատանք» և «համագործակցություն» հասկացությունները, որոնք կարևոր են, օրինակ՝ որևէ նպատակի հասնելու համար:

Նյութեր և միջոցներ: «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» ժողովրդական զրույցը:

Հետաքրքրություն ստեղծելու համար (խթանում): «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» ժողովրդական զրույցը դասարանի առջև կարդալ կամ ցուցադրել համակարգչով: Այս զրույցի նկարազարդված և գունավոր տարբերակը կարելի է ներբեռնել «Նախաբան»–ում հիշված կայքէջից:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը բացատրում է «հարատև աշխատանք» և «համագործակցություն» բառերի իմաստը և զանազան օրինակներ բերում: Ստորև բերված օրինակները կարող են օգտակար լինել.

- Մի շատ դժվար ու նոր մարզանք փորձել ու հաջողել:
- Հիվանդության պատճառով աշակերտը բացակայում է դպրոցից և դասերից հետ է մնում, բայց հարատև (անընդհատ, երկարատև) աշխատանքով ամեն երեկո մի քիչ ավելի երկար աշխատելով կարողանում է հասնել դասարանին:
- Մեկը դրամ է խնայում, ամեն ինչից կտրում և զոհողություններ է կատարում, որպեսզի դրամ հավաքի և իր շատ ցանկացած իրը գնի:
- Աշակերտը երկար ժամեր վարժություն է անում, խաղից ու հաճույքից զրկվում, որպեսզի կարողանա դպրոցի նվագախմբի մեջ ջութակ նվագել:
- Աշակերտը երկար ժամեր ու անընդհատ աշխատում է որևէ առարկայից ստացած իր ցածր թվանշանը բարելավելու համար:
- Աշակերտը համագործակցում է մեկ այլ աշակերտի հետ և միասին պատրաստվում են մասնակցելու դպրոցի գիտական ցուցահանդեսին:
- Մեկն օգնում է տան աշխատանքներին, որպեսզի տան մեջ ամեն ինչ սահուն ընթանա:

- Աշակերտները դասարանում որոշված մի տոնակատարության համար միասնական աշխատանք են կատարում և նպատակ իրագործում:
- Երեխաները միասին համագործակցում են՝ մաքրելու իրենց հարևան զբոսայգին կամ մոտիկ բակը, կամ հարևան գետի կամ ծովի ափը:

Վերջում շեշտել այն իրողությունը, որ հայերն իրենց հայրենիքից կամ ծննդավայրից դուրս ինչպես կարողացան հարատևել, բոլոր դժվարությունները հաղթահարել և նոր կյանք ստեղծել: (Այստեղ կարելի է հիշել 1915 թ. ջարդերից ու տեղահանությունից ազատված և օտար երկրներում հաջողած հայերի):

Ուսուցչի այս օրինակները լսելուց հետո աշակերտները իրենք են օրինակներ բերում, ուր իրենք՝

ա. հարատև (երկարատև, անընդհատ) աշխատել են տանը կամ դպրոցում, բացատրում են, թե ինչ զգացում են ունեցել, երբ երկար ու դժվարին աշխատանքից հետո վերջապես հասել են իրենց նպատակին,

բ. համագործակցել են ընտանիքի այլ անդամների հետ մի գործ գլուխ բերելու համար,

գ. համագործակցել են դպրոցում այլ աշակերտների հետ և մի դժվարին պարտականություն հաջողությամբ կատարել:

Անհատական աշխատանք: Աշակերտները բեմադրում են «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» պատմությունը, ցույց տալու համար, թե ինչպես մրջյուններն, իրար հետ համագործակցելով, կարողացան փղին հաղթել:

Հավելյալ աշխատանք: Աշակերտները հարցազրույց են վարում իրենց ընտանիքի մի չափահաս անդամի հետ, որ պատմում է իր մանկությունից մի դեպք, ուր ինքն արտակարգ կամք է ցուցաբերել կամ մեկի հետ համագործակցելով՝ մի հաջողության է հասել: Ապա, այս պատմածի վրա հիմնված, աշակերտները մի կարճ պատմություն են գրում կամ նկարում (աշակերտները կարող են այս հարցազրույցն անցկացնել՝ նյութ ունենալով օտար երկրներում գաղթական դարձած հայերի կյանքը, թե ինչպես ջարդից հետո վերապրող հայ գաղթականները կարողացան, իրար օգնելով, հարատևել, նոր կյանք ստեղծել ու հաջողել):

«Հարատև աշխատանք»–«համագործակցություն» կոլաժ պատրաստել. աշակերտները հին թերթերից կտրատում են բառեր, նախադասություններ ու նկարներ, որոնք այդ երկու հասկացություններն են խորհրդանշում և դասարանում, դրանք միացնելով, կոլաժ են պատրաստում:

Գնահատում/Արժևորում: Զանազան աշխատանքներին աշակերտների մասնակցությունը չափելով՝ ուսուցիչը արժևորում է, թե որքանով են նրանք ըմբռնել տվյալ հասկացությունները:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆ *(լրացուցիչ նյութ)*
Մեկ այլ օրինակ համագործակցության կարևորությունը երեխաներին հասկացնելու համար

Օգնենք իրար, որ գործը շուտ վերջացնենք

Ուսուցիչը նախ բացատրում է համագործակցություն բառի իմաստը և օրինակ բերում, թե ինչպես մրջյունները «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» պատմության մեջ համագործակցեցին, իրար օգնեցին: Հետո, ուսուցիչը հարց է տալիս երեխաներին և հարցումը գրում է գրատախտակին.

Եթե համագործակցենք, կարո՞ղ ենք ավելի արագ սովորել կամ հանձնարարված որևէ աշխատանք ավելի շուտ ավարտել.

Ուսուցիչը գրատախտակը երկու մասի է բաժանում՝ ***Այո*** կամ ***Ոչ***: Երեխաները երկու բաժանումների տակ գրում են իրենց անունը՝ արտահայտելով իրենց կարծիքը.

Հիմա սկսում ենք աշխատանքը: Պետք է սարքենք սրտիկներով զարդարված կտրոններ: Երեխաների մի խումբ մենակ է աշխատելու. իսկ 9 հոգի մտնելու են համագործակցության մեջ: Մենակ աշխատողները ամբողջ գործը կատարում են մենակ, իսկ համագործակցության խմբի ամեն մի երեխա կատարում է իրեն տրվածը միայն և հանձնում հաջորդին՝ գործը շարունակելու: Այսպես՝

1. թիվ 1 աշակերտը թղթից 13x8 սանտիմետր քառանկյունիներ է կտրում.

2. թիվ 2 աշակերտը երկու փոքր սրտիկ է կտրում.

3. թիվ 3 աշակերտը երկու փոքր սրտիկ է կտրում.

4. թիվ 4 աշակերտը մեկ մեծ սրտիկ է կտրում.

5–6. թիվ 5 և 6 աշակերտները սրտիկները սոսնձում են քառանկյունու վրա.

7. թիվ 7 աշակերտը ստացված կտրոնի վրա գրում է «Սիրո կտրոն».

8. թիվ 8 աշակերտը մեծ սրտիկի վրա սոսինձ է քսում.

9. թիվ 9 աշակերտը սոսնձած սրտիկի վրա փայլ է շաղ տալիս:

Աշխատանքին տրվում է 10 րոպե: Ուսուցիչը հավաքում է կտրոնները և հաշվում, թե նույն ընթացքում քանի կտրոն են սարքել առանձին աշխատողները և քանի կտրոն է սարքել խումբը:

Իհարկե, ուսուցիչը աշակերտներին պետք է տրամադրի սպիտակ և կարմիր թղթեր (սովորական թղթից հաստ, խավաքարտից բարակ), մեծ և փոքր սրտիկների նմուշ (մոդել), մկրատ, սոսինձ, սև մատիտ, շաղ տալիք փայլ:

2
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Ոսկու կարասը»

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Հովհաննես Թումանյան

Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ: Ձմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարունը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզ չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին: Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը լիքը ոսկի: Եզները լծած թողնում է, վազում է գյուղը՝ հողատիրոջ մոտ:

— Հեյ, աչքդ լուս,— ասում է,— քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

— Չէ՛, ախպեր, էդ իմը չի,— պատասխանում է հողատերը,— հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողում ինչ էլ դուրս գա, քունն է. ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է քունն է, նա՝ թե՝ չէ՛, քո՛ւ նը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ: Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ, աչքերը չորս է բաց անում:

Ասում է.

— Ոչ քունն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել՝ իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում է ի՞նչ ոսկի, կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած ետ է գալի: Հրամայում է պատժեն անգետ ռանչ-պարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

— Չէ՛, թագավորն ապրած կենա,— գոռում են խեղճերը,— մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի, թե՝ ճշմարիտ, ոսկի է:

— Վա՜հ, զարմանում է թագավորը: Ասում է.— Երևի լավ չտեսա, կամ տեսածս էն կարասը չէր:

Վեր է կենում մին էլ գնում:

Կարասը բաց է անում, դարձյալ մեջը լիքը օձ:

Էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի, չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է երկրի իմաստուններին:

— Բացատրեցե՛ք,— ասում է,— ո՛վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: Էս հողագործները իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում, կարասը լիքը օձ է դառնում, սրանք են գնում՝ ոսկի է: Էս ի՞նչ կնշանակի:

— Դրա բացատրությունը էս է, թագավո՛ր, եթե չես բարկանա,— ասում են իմաստունները:

— Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

— Լա՜վ,— ասում է,— դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից որի՞ն է պատկանում գտած ոսկին:

— Իհարկե, հողատիրոջը,— ձայն է տալիս վարող գյուղացին:

— Չէ՛, վարողինն է,— մեջ է մտնում հողատերը:

Ու նորից սկսում են կռվել:

— Լա՜վ, լա՜վ, կացե՛ք,— կանգնեցնում են իմաստունները,— ի՞նչ ունեք դուք՝ տղա կամ աղջիկ:

Դուրս է գալիս, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ:

Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկը. ուրախանում են ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին էստեղ, չարն էն ագահ թագավորի մոտ:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Ոսկու կարասը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել արդարության գաղափարը՝ հեքիաթը կարդալով, վերապատմելով և պատմության հաջորդականությունը պահելով:

Նյութեր և միջոցներ: Հովհաննես Թումանյանի «Ոսկու կարասը» հեքիաթը և գործնական աշխատանքի թղթեր, գունավոր մատիտներ, սոսինձ:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը կարդում է գիրքը (անհասկանալի բառերը բացատրելով) կամ աշակերտներն են կարդում հերթականությամբ: Կարելի է նաև համակարգչով ցուցադրել հեքիաթը:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը հարց է տալիս, թե ինչ հասկացան «արդարություն» գաղափարից, և աշակերտներն իրենց կարծիքներն են հայտնում: Երբ ուսուցիչն արդեն վստահ է, թե աշակերտները գիտեն ինչ է նշանակում «արդարություն», առաջարկում է, որ աշակերտները օրինակներ պատմեն իրենց փորձից, երբ մեկը արդար չի եղել իրենց հանդեպ: Կամ՝ եթե իրենք մի բան գտնեն, ինչպե՞ս կվերաբերվեն:

Ուսուցիչը օրինակ է տալիս. եթե մի երկրում կառավարությունը որոշի որոշ մարդկանց իրենց տներից դուրս հանել և հեռու ճամփաներ ուղարկել, դա անարդա՞ր է: Այստեղ ուսուցիչը կարող է օրինակ բերել հայերի տեղահանության մասին:

Անհատական աշխատանք: Պատմության հաջորդականությունը սերտելու համար, աշակերտները կներկեն նկարներով ներկայացված և բաժան–բաժան եղած և փոքրացրած թերթերը, ապա հերթականությամբ կփակցնեն քառակուսի տուփերով թղթի վրա, դրանով ցույց տալով, թե կարողացել են հետևել պատմվածքի ժամանակագրությանը:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը ստուգում է, թե յուրաքանչյուր աշակերտ որքանով է հասկացել պատմությունը և նրա արտահայտած գաղափարները՝ դատելով թե՛ գործնական առաջադրանքի կատարման և թե՛ դասավանդման հերթականության բաժնի առաջադրանքների ընթացքում աշակերտի մասնակցությունից ու տված պատասխաններից:

3
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ (ընկերասիրություն) ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Երկու այծ» և «Երկու ընկերներ» զրույցները

ԵՐԿՈՒ ԱՅԾ

Ղազարոս Աղայան

Գետակի վրա որպես կամուրջ մի նեղ գերան էր դրված: Մեկ անգամ երկու կամակոր այծ իրար հանդիպեցին այդ նեղ կամուրջի վրա: Երկուսը մեկ անգամից չէին կարող անցնել այդ նեղ կամուրջի վրայով. պետք է նրանցից մեկը հետ կանգներ և մյուսին ճանապարհ տար:

— Դու ետ գնա, որ ես անցնեմ,— ասաց մեկը:

— Ինչո՞ւ դու ետ չես քաշվում և ինձ ես առաջարկում,— պատասխանեց մյուսը:

— Քեզ ասում եմ ետ քաշվիր, առաջ ես եմ բարձրացել կամուրջի վրա:

— Ներողություն, բարեկա՛մս, գիտե՞ս ում հետ ես խոսում և դեռ բարկանում էլ ես:

Այծերը ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին և վերջը երկուսն էլ կամրջից սայթաքեցին, ջուրը գլորվեցին:

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ

Ղազարոս Աղայան

Երկու ընկերներ իրիկնապահին, հրացան առած՝ որսի գնացին, որ մի բան որսան, շուտով ետ դառնան: Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ ու կատաղությամբ նրանց վրա վազեց: Մեկը շտապով ծառը բարձրացավ, մյուսն անճարացած, գետնի վրա պառկեց, շունչն իրեն քաշեց ու անշարժ մնաց, որ արջը կարծի՝ թե նա մեռած է: Արջը մոռալով մոտեցավ նրան, ականջը կամաց դրավ բերնի վրան: Ականջ դրեց, հոտ քաշեց: Վերջապես նրան մեռած կարծելով՝ հեռացավ, գնաց՝ դունչը լիզելով: Փախած ընկերը ծառից իջավ ցած, ընկերոջը հարցրեց, թե արջն ի՞նչ ասաց.

— Արջն ինձ պատվիրեց, որ մեկէլ անգամ քեզ պես մարդու հետ որսի չգնամ, որ մի վտանգ, բան պատահելիս՝ մենակ չթողնես ու ինքդ փախչես հեռանաս:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Երկու այծ» և «Երկու ընկերներ» զրույցները

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Առաջարկված երկու կարճ զրույցների միջոցով աշակերտները պետք է կարողանան ըմբռնել ընկերասիրության և փոխադարձ հարգանքի գաղափարները: «Իմ ընկերը» հավելյալ աշխատանքը գործնականորեն կօգնի նրանց յուրացնելու թեման:

Նյութեր և միջոցներ: Ղազարոս Աղայանի «Երկու այծ» և «Երկու ընկերներ» զրույցները, թուղթ, գունավոր մատիտներ և «Իմ ընկերը» առաջադրանքի կրկնօրինակները տրված են:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը դասարանի առջև կարդում է Ղազարոս Աղայանի «Երկու այծ» և «Երկու ընկերներ» զրույցները կամ համակարգչով ցուցադրում:

Դասավանդման հերթականություն: Աշակերտները իրենց կարծիքն են հայտնում, թե որո՞նք են լավ ընկերոջ հատկությունները:

Օգնել աշակերտներին հասկանալու, թե համադասարանցի երեխաները, ընտանիքի անդամները, հարևան երեխաները և նույնիսկ կենդանիները կարող են նրանց ընկերները համարվել. երեխաների արտահայտությունները այս նյութի շուրջ գրել գրատախտակին:

Աշակերտները բացատրում են, թե ինչ են հասկանում «հարգանք» բառն ասելով. օրինակ են բերում, թե երբ են հատկապես մեկին հարգել. աշակերտները կարող են դերակատարել մի քանի նման դեպքեր:

Քննարկել, թե ինչպես երկու զրույցների «հերոսները» պետք է փոխեն իրենց բնավորությունն ու վարվելակերպը, ընկերներ լինեն և հարգեն իրար:

Այս բոլորից հետո, «Իմ ընկերը» թերթիկը և մի քանի միացված թերթիկներից կազմած գիրքը առիթ կտա աշակերտներին գրավոր արտահայտվելու իրենց ընկերների մասին: Յուրաքանչյուր ընկերոջ մասին աշակերտը կլրացնի մեկ թերթիկ: Գիրքը կկազմի գունավոր թղթով և կվերնագրի «Իմ ընկերները»: Աշակերտները կփոխանակեն գրքերը և կծանոթանան մյուսների աշխատանքի հետ:

Հարմար լինելու դեպքում, ուսուցիչը կարող է ուսուցանած գաղափարները կապել 1915 թ. ընթացքում եղած հայ և թուրք հարաբերությունների հետ և բացատրել, որ թուրքերն ընդհանրապես չէին հարգում իրենց հայ հպատակներին. ուրեմն և նրանց սպանելը կամ երկրից քշելը դյուրին միջոց էր թուրք կառավարության համար՝ իր ստոր նպատակին հասնելու ճանապարհին:

Անհատական աշխատանք: Աշակերտներին տալ 22x5 սանտիմետր գունավոր թղթեր՝ իրենց մեկ սիրելի ընկերոջ մասին մի նախադասություն գրելու համար: Աշակերտները դասարանում կկարդան իրենց նախադասությունները: Կարելի է այդ գունավոր թղթերը կլորացնել, տոնածառի շղթաների պես, իրար միացնել և կախել դասարանում:

Հավելյալ աշխատանք: Աշակերտներին հանձնարարություն տալ իրար օգնելով մի աշխատանք լրացնելու: Կարելի է ներքևի անգլերեն երգը սովորեցնել (եղանակը վերցնել "Row, Row, Row Your Boat" երգից – փնտրել համացանցում):

Սիրենք մեր ընկերներին
Որքան էլ տարբեր,
Խաղանք, խնդանք, օգնենք իրար
Լինենք լավ ընկեր:

Աշակերտները ակորդեոնի նման գիրք են պատրաստում և այն անվանում են «Ես կարող եմ տարբեր լինել»: 30x45 սանտիմետրով չորս գունավոր թղթեր կիսածալել և ակորդեոնի նման կպցնել իրար: Յուրաքանչյուր ծալքի վրա երեխաները գրում են նախադասություններ, օրինակ՝ «Դավիթը սիրում է միջատներին, իսկ ես՝ ոչ, բայց մենք դարձյալ ընկերներ ենք», «Մարիամը սիրում է սպաս (կամ մի այլ ուտելիք), իսկ ես՝ ոչ, բայց մենք դարձյալ ընկերներ ենք» և նկարում ու ներկում:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը ստուգում է, թե յուրաքանչյուր աշակերտ որքանով է հասկացել առաջադրված գաղափարները՝ ընկերասիրություն և փոխադարձ հարգանք՝ դատելով քննարկումներին նրանց մասնակցությունից և «Իմ ընկերը» գրքի աշխատանքի արդյունքից:

ԻՄ ԸՆԿԵՐԸ *(հարցաթերթիկ)*

_____ – ը իմ ընկերն է:

Իմ ընկերը սիրում է _____ ուտել:

Իմ ընկերը սիրում է _____ խաղալ:

Երբ միասին ենք, սիրում ենք _____

_____

Ես սիրում եմ ընկերոջս օգնել. ես օգնում եմ _____

Իմ ընկերը _____ տարեկան է:

Իմ ընկերը _____ քույր և _____ եղբայր ունի:

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԸՆԿԵՐՈՋՍ

Ահա՛ ընկերս (կցել նկար, եթե հնարավոր է):

Ընկերության և փոխադարձ հարգանքի թեմաներն անցնելուց հետո, ուրեմն, ինչպես նշվեց նախապես, ուսուցիչը բացատրում է՝…շատ երկար տարիներ առաջ մեր հայրենիք Հայաստանը ազատ էր: Թուրքերն իրենց բանակներով եկան ու տիրեցին մեր երկրին:

Թուրքերն ընդհանրապես չէին հարգում հայերին, բարեկամություն չկար նրանց միջև:

Թուրքերը խլում էին հայերի ունեցվածքը, թուրք և քուրդ ավազակախմբերը հարձակվում էին հայկական գյուղերի վրա ու սպանություններ կատարում, երեխաներին խլում ու տանում: Հայերին իրավունք չէր տրվում պաշտպանվելու: Այս վիճակը տևեց շատ երկար տարիներ, ու երբ հայերը սկսեցին դիմադրել այս հարձակումներին, այս անգամ թուրքերը հայերին պատժելու ելան: 1915 թ. կառավարությունը հրաման տվեց, որ բոլոր հայերը իրենց տունն ու ունեցվածքը թողնեն և հեռանան: Ոստիկանները նրանց դեպի հեռու անապատները տարան՝ առանց հացի ու ջրի. շատերին էլ հենց իրենց գյուղերում սպանեցին: Թուրքերը գրավեցին հայերի տները և ունեցվածքը, հայերի հայրենիքն էլ իրենցը հայտարարեցին: Հայերը այսօր մի փոքրիկ հայրենիք ունեն, մեծ Հայաստանի մի մասը: Մենք ուրախ ենք մեր հայրենիքով, բայց գիտենք, որ պետք է ազատենք նաև մեր հայրենիքի այն մասը, որ թուրքերն են գրավել և հայերին հանել են այդ տեղերից: Արարատը այդ հողերի վրա է գտնվում: Մենք Հայաստանում ամեն օր Արարատին ենք նայում, բայց այն ներկայումս մերը չէ:

Մենք պետք է մի օր նրան հայրենիք վերադարձնենք:

Հետո ուսուցիչը կարդում է Մուշեղ Իշխանի «Նամակ Կաղանդ պապային» բանաստեղծությունից վերցված մեկ հատվածը, որ բերված է այստեղ և այդպիսով ավարտում է դասը:

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Մուշեղ Իշխան

Կաղանդ պապա,
իմ այս նամակս առաջին
քեզ կը գրեմ ես ահա
եւ կարօտով կը յանձնեմ քու սուրբ աջին:
Ո՛ւր ալ ըլլաս
պիտի անշուշտ զայն կարդաս
ու անհամբեր պիտի բռնես դուն կրկին
մեր տան ծանօթ հին ուղին:

. . .

Կաղանդ պապա,
որքան կրնաս շուտ եկուր.
ալ չեմ վախնար, ես կը սիրեմ քեզ հիմա.
դուն մի՛ նայիր բառերուս կցկտուր,
դէմքիս գոյնին եւ քայլերուս դողահար:
Հայրս կ՚ըսէ Մասիսն է լոկ մեծ ընծան,
որ դուն կրնաս օր մը բերել հայ տղոց,
որուն մէջ կայ ամէն բան—
աստղ ու լուսին ոսկեզօծ
կրակ ու բոց,
հսկայ շուներ պահապան,
շղթայակապ հին քաջեր եւ հրեղէն նժոյգներ...

. . .

Կաղանդ պապիկ, ես այդ Մասիսը կուզեմ,
դի՛ր անիւներ ոտքին տակ
ու համարձակ քշէ՛ մեր տունը շիտակ,
բե՛ր ինձ նուէրն այդ վսեմ:
Օ՜, մի՛ վախնար, չեմ կոտրեր,
զայն կը պահեմ սրտիս դէմ:

4
ՄԵԾ ԵՂԵՌՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Կակաչները»

ԿԱԿԱՉՆԵՐԸ

Ռուբեն Հովսեփյան

Ցորենի հասկերը չորությունից խշշում էին և այդ խշշոցը վախեցնում էր արտի մեջ ցրված կակաչներին: Նրանք գիտեին, որ շուտով կգան մարդիկ, կհնձեն արտը, իսկ երբ հնձում են արտը՝ մեռնում են կակաչները:

— Մենք չենք ուզում հնձվել,— բողոքում էին կակաչները,— որովհետև մենք ցորեն չենք, այլ՝ կակաչ: Մենք ի՞նչ մեղք ունենք, որ մեր սերմը ընկել է ոչ թե քարքարոտ ժայռերի վրա, այլ՝ այստեղ, արտում:

— Քամի էլ չկա,— հառաչում էին կակաչները,— որ մեր սերմը տանի գցի արտից հեռու:

Գոնե մեզանից հետո եկող կակաչները ապահով ապրեն:

Մրջյո՛ւ ն, ա՛յ մրջյուն, չե՞ս հասցնի մեր սերմը քարքարոտ ժայռերը:

Մրջյունը զբաղված էր. հասուն հասկերից ցորենի հատիկներ էին կաթում՝ պետք էր հավաքել, մրջնանոց տանել:

— Մեղո՛ւ , ա՛յ մեղու, չե՞ս հասցնի մեր սերմը քարքարոտ ժայռերը:

Օ՜ֆ, մեղուն չի սիրում կակաչների հոտը:

Կակաչների հոտից մեղուն արբում է, շշմում է, քնում: Հիմա քնելու ժամանա՞կ է: Դեռ այնքան նեկտար է մնացել ծաղկապսակներում:

Ի՞նչ անեին խեղճ կակաչները:

— Ծղրի՛դ, ա՛յ ծղրիդ, չե՞ս հասցնի մեր սերմը քարքարոտ ժայռերը: Գոնե մեր հետնորդները ապահով ապրեն: Գոնե մեզանից հետո եկողները չհնձվեն:

Ծղրիդը ոչ գործ ուներ և ոչ էլ արբում էր կակաչների հոտից:

Առավոտից իրիկուն նա ջութակ էր նվագում արտում:

Մի ծածուկ տեղ պպզած նա փակում էր աչքերն ու նվագում էր այն բոլոր մեղեդիները, որ լսել էր ջութակահար հորից, խոտերից, ծտերից, ծաղիկներից:

— Կտանեմ,— համաձայնվեց ծղրիդը:

Ուրախացան կակաչները, բացեցին իրենց թերթիկները և հատիկ–հատիկ սերմերը պարզեցին ծղրիդին:

Մինչև երեկո ծղրիդը հավաքեց արտում ցրված կակաչների բոլոր սերմերն ու թաքցրեց կոտրած ընկույզի կճեպների մեջ: Ու երբ սկսվեցին հասկերը, երբ կտրվեց կակաչների լացը, ծղրիդը սերմերով լցված ընկույզի կճեպները շալակն առած՝ ճանապարհ ընկավ դեպի քարքարոտ ժայռերը: Երբ թռչում էր ջրաղացի վրայով, նա հիշեց իր հին բարեկամին, ծեր ջրաղացպանին, որի համար մի ժամանակ ամեն գիշեր ջութակ էր նվագում: Նա ջրաղաց մտավ և տեսավ, որ ջրաղացպանը քնել է պարապությունից:

Ջրաղացում ցորեն չկար:

Ծղրիդը լարեց ջութակը, նստեց լուսամուտի ալրոտ գոգին ու սկսեց նվագել այն բոլոր մեղեդիները, որ լսել էր ջութակահար հորից, խոտերից, ծտերից, ծաղիկներից:

Նա նվագում էր, և քնած ջրաղացպանը երազում տեսնում էր հասուն հասկեր, վառվռուն կարմիր կակաչներ և կակաչների լացն էր լսում և ցորենի հատիկների կաթոցն էր լսում և մրջյունների ոտնաձայներն էր լսում և մեղուների բզզոցը: Առավոտյան ծեր ջրաղացպանը գյուղ գնաց ու ասաց մարդկանց.

— Արտը հասել է: Հնձելու ժամանակ է:

Հետո հնձվորների հետ արտ գնաց, որ տեսնի այն բոլորն, ինչ նրա համար նվագել էր ծղրիդը: Նա տեսավ, որ ծանրացել, հազիվ են օրորվում հասկերը, նա տեսավ ցորենի հատիկներ փախցնող մրջյուններ և նրանց ոտնաձայնը լսեց, նա տեսավ ծաղկեպսակներից նեկտար քամող մեղուների կնճիթները և մեղուների բզզոցը լսեց, նա տեսավ վառվռուն կարմիր կակաչներին ու զարմացավ, որ նրանք ոչ լալիս են և ոչ էլ բողոքում:

Կակաչները հպարտությամբ էին պահում իրենց գլխիկները գերանդիների առաջ: Շատ զարմացավ ծեր ջրաղացպանը, որ կակաչները մեռնում են հպարտությամբ, առանց դողի: Իսկ այդ պահին ծղրիդը կակաչների սերմը տանում էր դեպի քարքարոտ ժայռերը:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Կակաչները»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Այս դասի արդյունքում աշակերտները կծանոթանան մի խմբի անարդար կերպով բնաջնջելու գաղափարին, ինչպես նաև կսովորեն չհուսահատվելու, ճիգ թափելու և հարատևելու մասին:

Նյութեր և միջոցներ: Ռուբեն Հովսեփյանի «Կակաչները» կարճ պատմվածքը, կարմիր և կանաչ թղթեր կակաչներ նկարելու և կտրելու համար:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս մի ծաղկաման մեջը լեցուն կակաչներ և հարցնում է աշակերտներին, թե ինչ են կոչվում այդ ծաղիկները: Հետո ցույց է տալիս մի ծղրիդի նկար և պատմում այդ միջատի մասին:

Ապա ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է «Կակաչները» պատմվածքի մեջ դասարանին անծանոթ բառերը: Հետո երեխաների համար կարդում է «Կակաչները» պատմությունը կամ ցուցադրում համակարգչի միջոցով:

Դասավանդման հերթականություն: Պատմությունը կարդալուց հետո ուսուցիչը հետևյալ հարցումներն է ուղղում աշակերտներին.

- Ջրաղացպանը և հնձվորներն ինչո՞ւ էին ուզում հնձել ցորենի արտը. (որովհետև ցորենը հասել էր):
- Արդյոք արդա՞ր էր, որ կակաչներն էլ ցորենի հետ հնձվեին. (ո՛չ, որովհետև իրենց մեղքով չէր, որ իրենց սերմերը ընկել էին արտի մեջ, փոխանակ՝ դուրսը, ազատ դաշտերի ու ժայռերի վրա):
- Կակաչները ինչո՞ւ չէին լալիս և հպարտ էին. (որովհետև գիտեին, որ իրենց մահից հետո էլ, նոր կակաչներ պետք է աճեն ուրիշ տեղերում և կակաչների կյանքը պետք է այդպես շարունակվի):

Այստեղ ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե շատ տարիներ առաջ թուրքերը հայերին այս կակաչների պես կոտորեցին կամ իրենց տներից և երկրից տեղահան արին: Ապա հարց է տալիս աշակերտներին. ինչ նմանություններ կան հայերի և այս կակաչների միջև. (հայերն էլ այդ կակաչների պես կարողացան իրենց սերմերը ցրել ուրիշ երկրներում և հարատևել, պահպանել իրենց գոյությունը մինչև այսօր: Թուրքերը չկարողացան հայերին բնաջնջել):

- Ուսուցիչը բացատրում է, թե հայերն ապրում էին իրենց հայրենիքում, երբ թուրքերը գրավեցին այն և նեղեցին հայերին և հետո էլ փորձեցին կոտո-

ռել նրանց և իրենց հայրենիքից դուրս հանել: Հայերը ճիգ թափեցին, որ դիմանան: Տեղահան եղած, անապատներում, իհարկե շատերը չկարողացան ցրտին, տաքին, քաղցին, ծարավին ու վատ հիվանդություններին դիմանալ, բայց շատերն էլ կարողացան դիմանալ, ճիգ թափեցին, չհուսահատվեցին, իրար օգնելով, մի տեսակ ապրեցին մինչև որ թուրքերի ձեռքից ազատվելու համար դուրս եկան այդ երկրից, որ իրենց հայրենիքն էր, և թուրքերը տիրացել էին այդ հայրենիքին:

Հայերը ուրիշ երկրներում շարունակեցին ապրել՝ հպարտ որպես հայ: Ապա ուսուցիչը հարց է տալիս.

– Կակաչների և հայերի միջև ի՞նչ նմանություն կա. իրենց մեղքո՞վ էր, որ այդտեղ էին. (ո՛չ, ճիշտ այնպես, ինչպե՞ս կակաչների մեղքով չէր, որ իրենց սերմերը արտում էր ընկել, այդպես էլ հայերի մեղքով չէր, որ թուրքերը եկել ու տիրացել էին այն երկրին, ուր հայերն էին ապրում, և որը Հայաստան էր կոչվում):
– Հայերն ի՞նչ արեցին, որ ազատվեն և ինչո՞ւ կակաչների պես հպարտ էին. (հայերը չհուսահատվեցին, օգնեցին իրար, դիմացան դժվարություններին, որպեսզի ազատվեն և շարունակեն ապրել: Հայերը հպարտ էին, որովհետև իրենք էլ կակաչների պես գիտեին, որ հայերի կյանքը շարունակվելու է ուրիշ երկրներում):

Անհատական աշխատանք: Գրավոր և ձեռքի աշխատանք – աշակերտներն իրենց ընտանիքի թվի համաձայն նկարում և կտրատում են կակաչներ և տեղավորում են թղթի վրա նկարված ծաղկամանի մեջ: Կամ ծաղկամանի վրա գծված տողերի վրա աշակերտները գրում են, թե ի՞նչ միջոցներով են իրենց հայ պահել: Եթե հնարավոր լինի, աշակերտները կարող են կակաչների վրա փակցնել իրենց ընտանիքի անդամների նկարները:

Հավելյալ աշխատանք: «Կակաչները» պատմությունը ներկայացնել բեմադրությամբ. հարատևության «quilt» (անգլ.՝ իրար կցված կտորներով գործվածք, գորգ, անկողնու ծածկոց և այլն) պատրաստել: Յուրաքանչյուր աշակերտ ներկում է մի կտոր quilt–ից: Ապա ուսուցիչը թելերով կապում է այդ թղթի կտորները և quilt–ը պատրաստում: Ուսուցիչը բացատրում է, որ այս quilt–ը ցույց է տալիս, թե ինչպես հայերը ձեռք ձեռքի տված միասնաբար աշխատեցին և իրենց հայությունը պահեցին 1915 թ. մինչ այսօր: Կարելի է աշակերտներին սովորեցնել Հովհաննես Շիրազի՝ այս թեմայով գրված մեկ բանաստեղծությունը, որ բերված է այստեղ:

Ուսուցիչն օրինակներ է բերում իրար օգնելու մասին և խոսում՝ ծղրիդի մասին, թե ինչպես նա օգնեց կակաչներին՝ հասնել իրենց նպատակին:

Հայոց պատմության դասերի ընթացքում աշակերտները ծանոթանում են այն բոլոր երկրների հետ, ուր հայերն ապաստան գտան 1915 թ. հետո և համայնքներ կազմեցին:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչն աշակերտների գիտելիքը արժևորում է որոշելով, թե աշակերտը որքա՞ն է ըմբռնել տրվածը, որքանո՞վ է մասնակցել դասարանային քննարկումներին և ձեռքի աշխատանքները ի՞նչ որակով է կատարել:

……

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցի՛ք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացի՛ք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Հովհաննես Շիրազ

Օրինակ թերթիկի կտորներից, որ աշակերտները նկարում ու ներկում են, ուսուցիչը միացնում է իրար և ապա պատին է կպցնում:



ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԵՐՐՈՐԴԻՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

5
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Կյանքից թանկ բանը»

Դասանյութը պատրաստված է Ավետիք Իսահակյանի «Կյանքից թանկ բանը» բանաստեղծության հիման վրա:

Բանաստեղծության մեջ անհասկանալի բառեր կարող են լինել հետևյալները, որ ուսուցիչը կբացատրի նախքան դասը սկսելը. *վիրավոր, պարիկ, խնդագին, ծորալ, թանկագին, սրտաբեկ, բոսոր, սրսկել, սրրուկ:*

Այս բանաստեղծության դասածրագրում շեշտված է թեմայի առնչությունը մեր ազատագրական պայքարին: Ուրեմն, թեման անցնելուց հետո, ուսուցիչը բացատրում է, թե ազատության ձգտումը գոյություն ունի ոչ միայն յուրաքանչյուր մարդ էակի մեջ, այլ հավաքականորեն: Յուրաքանչյուր ժողովուրդ ցանկանում է ազատ լինել, իր կառավարությունը ունենալ, իր երկրի նախագահն ունենալ, ինչպես այսօր Հայաստանի մեջ ունենք մեր հայ նախագահը: Ուսուցիչը բացատրում է, որ մեր ժողովրդի նախահայրը՝ Հայկ Նահապետը, ազատության և անկախության համար կռվեց Բաբելոնի թագավոր Բելի հետ: Երբ Բելը մեծ զորքով Հայկի վրա արշավեց, Հայկը իր քաջերին հավաքեց ու ասաց. «Մենք թվով քիչ ենք, բայց բարի և արդար ենք: Քաջաբար կռվենք մեր երկիրը պաշտպանելու համար: Վստահ եղեք, որ մենք պետք է հաղթենք»: Ուսուցիչն ապա շարունակում է պատմել, թե ինչպես շատ երկար տարիներ առաջ մեր հայրենիք Հայաստանը անկախ էր: Թուրքերն իրենց բանակներով եկան ու տիրեցին մեր երկրին և մեր ժողովրդին: Հայերը կորցրեցին իրենց ազատությունը ու միշտ թուրքերի անարդար ճնշումների տակ ապրեցին:

Թուրքերը խլում էին հայերի ունեցվածքը, թուրք և քուրդ խմբերը հարձակվում էին հայկական գյուղերի վրա ու սպանություններ էին կատարում, երեխաներին խլում ու տանում էին: Հայերին իրավունք չէր տրված պաշտպանվելու: Այս վիճակը տևեց շատ երկար տարիներ: Բայց աստիճանաբար հայերն էլ քաջություն գտան թուրքերի դեմ ելնելու, ինքնապաշտպանվելու: Կազմվեցին ֆիդայիների խմբեր: Զինված քաջ երիտասարդները գյուղից գյուղ էին գնում և թուրքերի հարձակումներից պաշտպանում էին ամբողջ գյուղը: Ֆիդայիները հայ ժողովրդի

ազատության համար էին կռվում: Թուրք կառավարությունը չուզեց հայերին ազատություն տալ, պարզ մարդկային իրավունքներ՝ ապրելու իրավունք, իր հողի վրա ազատ աշխատելու իրավունք, կյանքի և ունեցվածքի ապահովություն:

Հակառակը՝ որոշեց պատժել հայերին, որ ազատություն էին ուզում, որ իրենց իրավունքներն էին պաշտպանում: 1915 թ. հրաման տվեց, որ բոլոր հայերն իրենց տունն ու ունեցվածքը թողնեն և հեռանան:

Ոստիկանները նրանց դեպի հեռու անապատները քշեցին՝ առանց հացի ու ջրի, շատերին էլ իրենց գյուղերում սպանեցին: Թուրքերը գրավեցին հայերի տներն ու ունեցվածքը, հայերի հայրենիքն էլ իրենցը հայտարարեցին:

Հայերն այսօր մի փոքրիկ հայրենիք ունեն, մեծ Հայաստանի մեկ մասը, որ ազատվեց թուրքերից: Մենք ուրախ ենք մեր հայրենիքով, բայց գիտենք, որ պետք է ազատենք նաև մեր հայրենիքի այն մասը, որ թուրքերն են գրավել և հայերին հանել են այդ տեղերից:

ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ

Ավետիք Իսահակյան

Վայրի աղավնին՝ կուրծքը վիրավոր,
Ընկել էր մենակ աղբյուրի եզրին,
Ծորում էր շիթ–շիթ արյունը բոսոր,
Մեռնում էր՝ աչքը ջրի երազին:

Քնքուշ պարիկը տեսավ դալկահար
Մեռնող աղավնուն ու խոսեց այսպես.
— Տո՛ւր ինձ այն, ինչ որ թանկ է քեզ համար,
Է՛ն թանկագինը, կյանք տամ իսկույն քեզ:

Մեռնող աղավնին խորհում էր ինքնին.
— Է՛ն թանկագինը կյանքն է, անպատճառ.
Ախ, ծաղրում է ինձ աղբյուրի ոգին:
— Է՛հ, լա՛վ, թող լինի, տո՛ւր և նորից ա՛ռ:

Պարիկը ցողեր սրսկեց վերքին,
Աղավնին բացեց աչքերը ոսկի
Ու թևին տալով ծափեց խնդագին.
— Ե՞րբ կուզես կյանքս, նազելի՛ ոգի:

— Թևերդ կուզեմ, կյանքդ քեզ լինի:
— Թևե՞րս... ինչպե՞ս, օ՜հ, երբե՛ք, երբե՛ք.
Առանց թռիչքի կյանքը գին չունի.
Կյա՛նքս առ,— թռչունն ասաց սրտաբեկ:

— Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի.
Թռի՛ր ու ասա՛ ստրուկ աշխարհին,
Թե ինչն է թանկը կյանքից ավելի,—
Ասաց ջրերի լուսեղեն ոգին:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Կյանքից թանկ բանը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել և յուրացնել «ազատություն» հասկացությունը և կարողանան շարադրություն գրել՝ նկարագրելով մի դեպք, երբ իրենք կամ իրենց ծանոթ մեկ ուրիշը պաշտպանել է իր իրավունքներն ու ազատությունը:

Նյութեր և միջոցներ: Թուղթ, բառարան և օրինակներ բանաստեղծությունից:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Աշակերտները մի քանի անգամ կարդում են Ավետիք Իսահակյանի «Կյանքից թանկ բանը», կամ ուսուցիչն այն ցուցադրում է համակարգչով:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը գրատախտակին գրում և բացատրում է անծանոթ բառերի իմաստը և այն, թե հեղինակն ինչ է ուզում ասել: Աշակերտներն իրենց բառերով բացատրում են, թե ազատություն ասելով ինչ են հասկանում: Աշակերտները բառը գտնում են բառարանում և ուսուցիչը այդ բացատրությունը գրում է գրատախտակին: Բերվում են ազատության օրինակներ մեր կյանքից: Խոսվում է բանաստեղծության մեջ արտահայտված ազատության մասին և թե ինչ է ազատության արժեքը աղավնու համար: Պատրաստվում է մի ցանկ այն բաների, որ մեր համայնքում կամ երկրում մարդիկ ազատ են անելու: Պատրաստվում է մի երկրորդ ցանկ՝ այն բաների, որ մարդիկ ազատ չեն անելու այլ տեղերում:

Անհատական աշխատանք: Աշակերտները շարադրություն են գրում և նկարագրում մի իրական դեպք, երբ իրենք կամ իրենց ծանոթ մեկ ուրիշը պաշտպանել է իր իրավունքներն ու ազատությունը: Շարադրությունը ամբողջացնելու համար աշակերտը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

ա. Ո՞րն էր բուն հարցը:
բ. Ի՞նչ դիրք բռնեցիր դու կամ այդ անձը, որին ճանաչում ես:
գ. Քո կարծիքն ինչպե՞ս արտահայտեցիր այդ հարցի մասնակիցներին:
դ. Այդ մարդիկ ի՞նչ էին մտածում այդ մասին:
ե. Դու կամ այդ ուրիշ անձը ի՞նչ քայլեր ձեռնարկեցիք:

զ. Ի՞նչն էր արդյունքը:
է. Մեկ այլ անգամ դրանից բացի ի՞նչ կանեիր:
ը. Դու կամ այդ ուրիշ անձը ի՞նչ էր զգում:
թ. Այս փորձառությունից ի՞նչ սովորեցիր:

Հավելյալ աշխատանք: Աշակերտներն «ազատության պատկերաշար» (Cartoon strip, կամ մուլտիկ) են պատրաստում, այսինքն՝ բարակ ու երկար ժապավենի պես կտրված թուղթը մասերի են բաժանում և յուրաքանչյուր մասում նկարում են մի պատմություն, որի մեջ տարեկից մի աղջիկ կամ տղա ցույց է տալիս, թե որքան կարևոր է ազատությունը իր կյանքում:

Աշակերտները զեկույց են պատրաստում՝ նկարագրելով մի անձ, որը պայքարել է իր ժողովրդի ազատության համար: Կարող եք օրինակ բերել քաջ հայ մարտիկների կամ ֆիդայիների, որոնք հին ու նոր պատմության ընթացքում պաշտպանել են հայոց երկիրն ու ժողովրդին:

Աշակերտները հարցազրույց են անցկացնում ընտանիքի մեկ անդամի հետ, որ պատմում է այդ նյութի մասին՝ իբրև ընտանիքում սերնդից սերունդ անցնող հիշողություն: Ուսուցիչը կարող է տրամադրել տրվելիք հարցումները կամ աշակերտները դասարանում, իրար օգնելով, կցանկագրեն դրանք:

Աշակերտները դերակատարությամբ բեմադրում են քննարկված պատմություններից մի քանիսը:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչն արժևորում է ազատության գաղափարի յուրացումը աշակերտի կողմից՝ շարադրության և զանազան աշխատանքներին նրա մասնակցությունը չափելու միջոցով:

Օրինակ՝ «պատկերաշար» (Cartoon strip, կամ մուլտիկ)-ի համար

Քառակուսիները կարող են լինել 5x5 սանտիմետր

Աղյուսակների մեջ նկարչություն անելուց հետո կարելի է գծերի վրայով ծալծլել և հարմոնի նման գիրք սարքել:

6
ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Եղջերուն ու ծառը»

Դասանյութը պատրաստված է Նունե Գրիգորյանի «Եղջերուն ու ծառը» պատմություն–զրույցի հիման վրա: Այս պատմություն–զրույցի համար գրված դասածրագրում շեշտված է գթասրտությունը և բարեկամությունը, որ հայերը ցուցաբերեցին իրար հանդեպ տեղահանության ճամփաներին: Ուսուցիչը պետք է բացատրի, թե որքան շատ են այն դեպքերը, երբ տարագիր հայերը, իրենք թույլ ու հիվանդ, սոված ու ծարավ, օգնել են իրենցից ավելի վատ վիճակի մեջ գտնվողներին, որբ մնացած երեխաներ են վերցրել ու պաշտպանել են՝ որքան որ իրենց ուժն էր ներում, օգնել են նրանց, ովքեր այլևս ուժ չունեին քայլելու:

Եվ հետո, թե ինչպես ջարդից ազատվածները օգնել են իրար՝ դիմադրելու համար սովին, աղքատությանը, հիվանդությանը, որոնք ավելի հզոր տարրեր էին, քան այդ մի խումբ անօգնական հայերը:

Համագործակցության թեմայի մեջ, ինչպես դասածրագրում շեշտված է, ուսուցիչը պետք է բացատրի, թե հայերն ինչպես ջարդի ժամանակ, որոշ վայրերում, իրար օգնելով, խմբեր կազմեցին և փորձեցին թուրքերի դեմ իրենց գյուղը կամ քաղաքը պաշտպանել:

ԵՂՋԵՐՈՒՆ ՈՒ ԾԱՌԸ

Նունե Գրիգորյան

Հին ժամանակներում եղջերուն եղջյուրներ չուներ և նրա միակ օգնականը՝ ոտքերն էին: Թշնամիներից ազատվում էր միայն փախուստով: Եղջերուի կյանքը ծանր էր: Մի անգամ, երբ եղջերուն իր համար անտառում արածում էր, լսեց մի զրույց: Զրուցում էին չար Վհուկը և Քամին: Վհուկը Քամուն ասաց.

— Քամի, Քամի՛, իմ չա՛ր Քամի, դու իմ բարեկամն ես, չէ՞:

— Այո՛, իհարկե,— ասաց Քամին:

— Դե, ուրեմն, օգնիր ինձ:

— Ինչո՞վ:

— Այն բացատի մեծ ծառը ինձ խանգարում է. այնպես ուժեղ փչիր, որ գետին տապալվի:

— Է՛, նա քեզ ի՞նչ է արել:

— Շատ բան: Երբ ես իմ ցախավելը հեծած թռչում եմ իր վրայով, բռնում է իմ փեշերից, ցախավելից, խանգարում է, չի թողնում, որ գնամ իմ գործին: Ես էլ զայրանում եմ ու էլ չեմ կարողանում իմ չար գործերն անել: Էլ ի՞նչ Վհուկ, որ չար գործեր չանեմ: Այ, եթե դու այդ ծառը գետին տապալես, ինձ շատ օգնած կլինես:

— Լա՛վ,— ասաց Քամին,— այս գիշեր ես այնպես կփչեմ, որ մի րոպեում կտապալեմ ծառը:

— Իսկ ինչո՞ւ այս գիշեր:

— Հիմա շատ զբաղված եմ, իսկ գիշերը կազատվեմ, որից հետո պետք է թռչեմ գնամ ուրիշ երկրներ:

— Ինչ լավ է, ուրեմն վաղ առավոտյան այդ ծառը այլևս չի լինի և ինձ չի խանգարի,— ուրախացավ չար Վհուկը:

Եղջերուն շատ տխրեց ու վազեց գնաց բացատի մեծ ծառի մոտ:

— Ծա՛ռ, ծա՛ռ,— ասաց եղջերուն,— այս գիշեր քեզ վտանգ է սպառնում:

— Ի՞նչ վտանգ,— զարմացավ ծառը:

— Ես լսեցի չար Վհուկի ու Քամու զրույցը: Չար Վհուկը ասում էր, որ երբ ինքը ցախավելը հեծած գնում է իր չար գործերը կատարելու, դու իրեն խանգարում ես: Բռնում ես իր փեշից, ցախավելից ու չես թողնում, որ գնա:

— Ճիշտ է,— հառաչեց ծառը, ես չեմ ուզում, որ Վհուկը վատ–վատ բաներ անի:

— Այդ պատճառով էլ Քամուն խնդրեց այնպես ուժեղ փչել, որ դու գետին տապալվես:

— Է՛հ, ի՞նչ կարող եմ անել: Ինչպե՞ս կարող եմ պաշտպանվել այդ Քամուց:

— Բայց Քամին ասաց, որ միայն այս գիշեր է ազատ: Հետո պետք է թռչի–գնա հեռավոր երկրներ, որովհետև շատ գործ ունի:

— Է՛հ,— նորից հառաչեց ծառը,— թեկուզ մի գիշեր, բայց ի՞նչ կարող եմ անել, ինչպե՞ս կարող եմ պաշտպանվել:

— Մի՛ մտածիր,— քիչ հապաղելով՝ ասաց եղջերուն,— ես քեզ կօգնեմ:

— Ինչպե՞ս կօգնես,— զարմացավ ծառը,— դու փոքր ես և թույլ, ինչպե՞ս կարող ես դիմադրել Քամուն:

— Գուցե կարողանամ քեզ պահել, չթողնեմ, որ գետին տապալվես:

— Շնորհակալ եմ քո բարության համար,— հուզվեց ծառը,— բայց չեմ կարծում, որ դրանից բան դուրս կգա:

— Դե, գիշերը կերևա,— ասաց եղջերուն,— փորձեմ, գուցե կարողանամ օգնել: Իսկ հիմա գնամ մի քիչ հանգստանամ:

Եղջերուն գնաց բացատ, կուշտ խոտ կերավ, հետո գնաց անտառի գետակի մոտ, կուշտ ջուր խմեց, ուժեղացավ ու երեկոյան նորից եկավ ծառի մոտ:

Ծառը տխուր էր: Նա կարծում էր եղջերուն այլևս չի գա: Երբ եղջերուին տեսավ, շատ ուրախացավ ու ինքն էլ ուժեղացավ:

Գիշերը Քամին սկսեց փչել: Եղջերուն կանգնեց ծառի տակ, Քամու հակառակ կողմը, ոտքերը ամուր հենեց գետնին, մեջքը դեմ տվեց ծառին և ամբողջ ուժերը լարեց:

Քամին մինչև լուսաբաց ուժեղ փչեց: Նրան հաջողվեց կոտրատել հսկա ծառի ճյուղերը, բայց չկարողացավ գետին տապալել, զայրացած հեռացավ:

Եղջերուն ուժասպառ պառկեց ծառի տակ ու քնեց: Ծառը նույնպես լուռ հանգստանում էր:

Եղջերուն հանգստացավ, ու երբ արևը ծագեց, վեր կացավ, ծառն էլ արթնացավ:

— Շնորհակալ եմ,— հուզված ասաց ծառը:— Դու ինձ փրկեցիր մեծ արհավիրքից:

— Դե ինչ անենք,— ասաց եղջերուն,— ով էլ իմ տեղը լիներ, կօգներ:

— Ո՛չ, դու ինձ համար շատ մեծ բան արեցիր, փրկեցիր իմ կյանքը, և ի նշան շնորհակալության, ես ուզում եմ քեզ նվիրել իմ ճյուղերից երկուսը, որոնք թագի նման կամրանան քո գլխին: Ու քանի որ իմ ճյուղերը կոտրատված են, ապա ամեն տարի դրանց վրա մի–մի ճյուղիկ կավելանա:

— Շնորհակալ եմ,— ասաց եղջերուն,— բայց այդ ճյուղերն իմ ինչի՞ն են պետք:

— Դրանք կդառնան քո զենքերը,— ասաց ծառը,— դու դրանցով կկարողանաս պաշտպանվել քո թշնամիներից:

— Շնորհակալ եմ,— ուրախացավ եղջերուն:

Ծառը իր ամենահաստ ու գեղեցիկ ճյուղերից երկուսը ամրացրեց եղջերուի գլխին, ու եղջերուն ուրախ–ուրախ հեռացավ:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Եղջերուն ու ծառը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել և յուրացնել «գթասրտություն» և «բարեկամություն» հասկացությունները և դրանց կարևորությունը որևէ նպատակի իրագործման համար:

Նյութեր և միջոցներ: «Եղջերուն ու ծառը» պատմությունը:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը կկարդա «Եղջերուն ու ծառը» պատմությունը կամ կներկայացնի համակարգչով:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը քննարկում է «գթասրտություն» և «բարեկամություն» հասկացությունների իմաստը և օրինակներ է գրում գրատախտակին:

- Աշակերտները բեմադրում են մի արար, որը ցույց է տալիս, թե մարդիկ ինչպես են օգնում մի հիվանդ կենդանու:
- Աշակերտներն առողջության մաղթանքներ են գրում մի հիվանդ դասընկերոջ:
- Աշակերտները նամակներ են գրում, օրինակ՝ մի ծերանոցի և իրենք իրենց ծանոթացնում:
- Ուսուցիչը քաջալերում է աշակերտներին նվերներ հավաքել և նվիրել մի բարեգործական ընկերության, մի մանկատան, կամ անտուն աղքատներին:
- Աշակերտները խմբային ծրագիր են մշակում մեկ ամսվա համար, օրինակ՝ աշխատանքները խմբի մեջ բաժանել, բույսեր աճեցնել, աղքատների համար ուտելիք հավաքել:

Երբ աշակերտներն արդեն լիովին յուրացրին «գթասրտություն» և «բարեկամություն» հասկացությունների իմաստը, ուսուցիչը բացատրում է, թե ինչպես տեղահանության ճամփաների վրա հայերն օգնեցին իրար: Իրենց մոտ վերցրին այն երեխաներին, որոնք կորցրել էին իրենց ընտանիքներին: Իրենց մի կտոր հացը սոված տարագիրների հետ կիսեցին: Հարևանի հիվանդ փոքրիկին իրենք գրկեցին ու տարան, երբ այդ հարևանն ինքն այնքան հիվանդ էր, որ երեխային գրկած քայլելու ուժ չուներ: Տարագիրների ցուցաբերած գթասրտությունն ու համագործակցությունն օգնեց շատերին վերապրելու աքսորը: Որոշ վայրերում հայերը համագործակցեցին և զենք վերցրած դիմադրեցին տեղահանու-

թյանը, որն անարդար էր: Թույլերի համագործակցությունը, ինչպես ծառի և եղջերուի կամ հայերի համագործակցությունը թուրք բանակի դեմ, միջոց էր չարի դեմ կռվելու (վիուկը և թուրքերը): Որոշ թուրքեր գթասրտություն ցուցաբերեցին և տեղահանվող հայ հարևանի երեխային իրենց տունն առան. եղան դեպքեր ևս, երբ թուրքերը կամ քրդերը մի ամբողջ ընտանիքի իրենց տան մեջ թաքցրին և այդպես ազատեցին նրանց:

Անհատական աշխատանք: Աշակերտները շարադրություն են գրում ծառի և եղջերուի համագործակցության մասին, որ մի նպատակ էր հետապնդում.

- Աշակերտները գթասրտության մասին մի կարճ արար են գրում, որը ցույց է տալիս հասկանալ ուրիշների կարիքներն ու զգացումները, ուրիշների մասին հոգ տանել.
- Աշակերտները գրում են իրենց կարծիքը, թե ինչպես ճիշտ վարվել հաշմանդամների հետ:

Հավելյալ աշխատանք: Աշակերտները վերապատմում են պատմությունը, ամփոփում և նկարազարդում:

Գնահատվում է այն աշակերտը, ով ամսվա ընթացքում բոլորից ավելի գթասրտություն և համագործակցություն է ցուցաբերել:

Կարելի է աշակերտների անունները կամ նկարները մի պաստառի վրա փակցնել և յուրաքանչյուրի անվան կամ նկարի տակ մի ծրար միացնել: Երբ մի աշակերտ տեսնում է մի ուրիշ աշակերտի՝ գթասրտություն և համագործակցություն ցուցաբերելիս, մի երկտող է գրում և դնում այդ աշակերտի ծրարի մեջ (օրինակ՝ Արամը ինձ օգնեց թվաբանության խնդիրը լուծելու):

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչն արժևորում է գթասրտություն և համագործակցություն գաղափարի յուրացումն աշակերտի կողմից՝ զանազան աշխատանքներին նրա մասնակցությունը և նրա գրավոր ներկայացումները չափելով:

7
ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Ազնիվ տղան»

Դասանյութը պատրաստված է Հարություն Հովնաթանի «Ազնիվ տղան» չափածո պատմվածքի վրա: Նախքան դասը սկսելը ուսուցիչը պետք է բացատրի պատմվածքի անհասկանալի բառերը, որոնք, օրինակ՝ կարող են լինել հետևյալները՝ *թափուր, խավար, օծվել, բերկրություն, սրընթաց, արդարամիտ, գապ, հողմ* և այլն:

Այս թեման առերևույթ միայն բարոյագիտական է երևում, սակայն կա հնարավորություն այն օգտագործելու և աշակերտների միտքը Հայոց ցեղասպանության նյութի շուրջ կենտրոնացնելու:

Այսպես՝ դասածրագրի առաջադրանքներից մեկը աշակերտներին մղում է մտածելու, որ եթե տղան ազնիվ չլիներ, պատմությունն ինչպե՞ս կավարտվեր: Ուսուցիչն իր նախորդ բացատրությունների հիման վրա կարող է ավելացնել, որ եթե Թուրքիայի ղեկավարները ազնիվ լինեին և հայերին որոշ չափով ազատություն տային, նրանց վրա հարձակվող թուրք և քուրդ ցեղախմբերին արգելեին, նրանցից ծանր հարկեր չգանձեին, ի՞նչ կլիներ արդյունքը: Երեխաները կարող են մտածել, որ ջարդը տեղի չէր ունենա, հայերը կշարունակեին ապրել ու ստեղծագործել Թուրքիայում, իսկ Թուրքիան էլ շնորհիվ հայերի՝ ավելի կզարգանար և այլն:

ԱԶՆԻՎ ՏՂԱՆ

Հարություն Հովնաթան

Գարնան շունչ էր հովը բերում,
Ժպտում էին թուփ ու ծառ,
Սիրտը բացել՝ հողն էր բուրում,
Երկինքը՝ պարզ ու պայծառ:
Հավքը սարին երգով կիջներ,
Ամպը ցողով էր գալիս,
Գարնան բացվող ծաղկունքի մեջ
Արքայի սիրտն էր լալիս:

Չնչին էին նրան թվում
Թե՛ հաղթանակ, թե՛ գանձեր:
«Գահս թափուր պիտի մնա,
Անհիշատակ ու անտեր:
Երկու երնեկ մի տեղ չկա,
Ինչն է արդյոք կարևոր...»
Գահի առաջ արքայական
Միտք էր անում արքան խոր:

Ու դուրս ելավ նա մռայլված,
Աչքերի մեջ՝ մշուշ–ամպ,
Բայց երբ անցավ ծաղկանոցով,
Սիրտը լցվեց բերկրությամբ.
«Ես կգտնեմ թագաժառանգ
Ու կհաղթեմ սև մահին:
Ով ազնիվ է ճշմարտախոս՝
Նա է արժան իմ գահին»:

Անձրև իջավ ամռան տապին,
Խավարի մեջ լույս ծագեց.
Արքան շքեղ գահին դարձավ
Եվ հրաման արձակեց.
— Մանուկներին իմ տերության
Պալատ կանչեք այս պահին,
Հայտնեք նրանց, որ ձեր արքան
Տեր է փնտրում իր գահին...

Փող փչեցին ու կանչեցին
Երկրի բոլոր կողմերից.
Լուրը լույսից արագ գնաց
Եվ սրընթաց՝ հողմերից:

Եկան շքեղ քաղաքներից,
Մութ ու լույսով հա՛ եկան,
Եկան անշուք գյուղակներից,
Հավատ–հույսով հա՛ եկան...

Տարե՛ք, ցանե՛ք այս սերմերը:
Հենց որ բացվեն, բույրով լցվեն՝
Փող կփչեն, ձեզ կկանչեն:
Ով ծաղիկներ բերի շքեղ,
Թագաժառանգ կօծվի այստեղ,
Ով գեղեցիկ փունջը կրի,
Նա է արքան իմ երկրի:
Օրեր եկան, օրեր անցան,
Բարձր սարն էլ կանաչեց,
Եվ ծաղկաբույր մի առավոտ,
Արքայական փողը հնչեց:
Եկան շքեղ քաղաքներից,
Շաղ ու շողով զարդարուն,
Եկան անշուք գյուղակներից,
Բերին ծաղիկ ու գարուն:

Մտավ պալատն արքայական
Մանուկների բանակն հոծ,
Նազիր–վեզիր իրենց կարգին՝
Բռնած ձեռքերը որդոց:

Ասին՝ Արքա՛, այս փնջերից
Ո՞րն ես, արդյոք դու ընտրում:

Նայե՛ ց, նայե՛ ց արքան տխուր,
Ժպիտ չեկավ երեսին.
«Չկա մեկը, ոչ մի ազնիվ,
Որ մասնակցի հանդեսին»:
Ասաց՝ «Փունջը ինչի՞ս է պետք,
Ազնիվ հոգի եմ փնտրում»:

Ասաց, նայեց բարձր գահից
Եվ ի՜ նչ տեսավ նա հանկարծ.
Հեռվում կանգնած մի մանուկի,
Դեմքին ժպիտը հանգած:
Շքեղ գահից իջավ արքան
Ու մոտեցավ տղային,
Իսկ փոքրիկը խոնարհաբար
Գլուխ տվեց արքային:

— Ո՞վ ես մանկիկ, սիրուն տղա,
Այդ ինչո՞ւ ես դու լալիս,
Ծաղկամանով հո՞ղ ես բերել,
Դու ինձ ծաղիկ չե՞ս տալիս:

Խոսեց տղան սրտի դողով.
— Թող ինձ ների արքան մեծ.
Ցանեցի ես սերմն այս հողում,
Ոչ մի ծաղիկ չծլեց...

Նայեց արքան բաց երկնքին,
Ասաց. «Աստված, փառքդ մեծ,
Այս մանուկն է արդարամիտ,
իր արքային չխաբեց:
Զուր մի՛ տխրիր, փոքրի՛կ տղա,
Քեզ են վայել գահ ու թագ,
Իմ տվածը խաշած սերմ էր,
Դո՛ւ ես ազնիվը միակ:

Բա՛րձր պահիր գլուխը քո,
Քեզնով հաղթել եմ մահին:
Արդարամի՛տ, ազնի՛վ տղա,
Ահա՛, բազմի՛ր իմ գահին:
Օրհնանքով եմ թագս տալիս,
Թե՛ հոգնած եմ ու թե՛ ծեր,
Տիրոջ կամքով, իմ ժողովուրդ,
Այս մանուկն է արքան ձեր»:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Ազնիվ տղան»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: «Ազնիվ տղան» պատմության միջոցով աշակերտները քննարկում են «Ազնվություն» հասկացությունը և ազնիվ գործ նկարագրող նախադասություններ են գրում:

Նյութեր և միջոցներ: «Ազնիվ տղան» պատմությունը, flip book–ի (թերթվող տետր, որ ներքևում կբացատրվի) օրինակներ, գունավոր մատիտներ, թուղթ, խավաքարտ, գիրք կարելու կամ կազմելու ասեղ:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը ներկայացնում է, որ այսօր պետք է սովորեն ազնվության և նրա կարևորության մասին: Ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչ գիտեն ազնվության մասին և մի կարճ քննարկում է սկսում:

Ուսուցիչը կարդում է «Ազնիվ տղան» և բացատրում նրա տարրերը (օրինակ՝ կերպարները, միջավայրը, հանգույցը, լուծումը): Բացատրում է նաև պատմության անծանոթ բառերը: Ապա աշակերտները օրինակներ են բերում իրենց կյանքում հանդիպած ազնիվ մարդկանցից և ազնիվ գործերից:

Ուսուցիչը բացատրում է և ներկայացնում «Անհատական աշխատանքի» օրինակը, որը լինելու է ազնիվ մարդիկ և ազնիվ գործեր նկարագրող նախադասություններ. նյութերը կարող են լինել նաև մտացածին՝ աշակերտի մեջ երևակայությունը զարգացնելու համար:

Անհատական աշխատանք: Flip book–ի տված օրինակին հետևելով՝ աշակերտները «ազնիվ մարդիկ» և «ազնիվ գործեր» նկարագրող նախադասություններ են գրում: Նախադասություններից գոնե մեկը պետք է լինի պատմության տղայի մասին (օրինակ՝ չափազանց ազնիվ տղան ծաղիկների մասին իրականությունը ասաց թագավորին, կամ երեկ առավոտ դպրոցում Արա անունով մի երիտասարդ մարզիկ գողացած գնդակը վերադարձրեց տիրոջը): Նախադասությունները պետք է ունենան մանրամասնություններ ու հարուստ բառապաշար:

Երբ աշակերտները մի քանի այսպիսի էջեր պատրաստեն և նկարներ փակցնեն, ուսուցիչը կկազմի գիրքը, և աշակերտները կտեսնեն իրենց կազմած նախադասությունների համատեղումը:

Հավելյալ աշխատանք: Ցույց տալու համար, որ հասկացել են ազնվության իմաստը, աշակերտները «Ազնվություն» բառով ակրոստիք բանաստեղծություն են գրում՝ տողերը Ա, Զ, Ն, Վ, ՈՒ, Թ, Յ, ՈՒ, Ն տառերով սկսելով:

Աշակերտները կարող են գրքի ժամանակագրությունը կազմել: Աշակերտները կարող են գրքի վերջավորությունը փոխել և փոխված վերջավորությունը նկարել կամ գրել (օրինակ՝ պատմությունը ինչպե՞ս կփոխվեր, եթե տղան ազնիվ չլիներ):

Աշակերտները կարող են պատմությունը անփոփոխ կամ որևէ այլ վերջավորությունով բեմադրել, կամ ներկայացնել մի տեսարան, ուր ազնիվ մի գործ է կատարվում:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը ի նկատի է ունենում, թե աշակերտը դասարանային քննարկումներից և աշխատանքներից որքանն է յուրացրել և ինչ որակի նախադասություններ է գրել flip book–ում:

Դժվար չէ flip book պատրաստելը: Պարզապես ուսուցիչը բազմացնում և աշակերտներին է բաժանում գծագրված թերթիկը, որ երեք մասնաբաժանումներ ունի: Աշակերտները գծված տողերի վրա (թղթի աջ կողմում) գրում են մեկ–մեկ նախադասություն՝ ամենավերին մասում՝ անձի անունը և անձի նկարագրությունը, մեջտեղի մասում՝ նկարագրում են ազնիվ գործը, ներքևի մասում՝ որտե՞ղ և ե՞րբ է կատարվել դեպքը: Թղթի ձախ կողմում աշակերտները մի կենդանի են նկարում: Ուսուցիչը հավաքում է թերթիկները, միացնում և գիրք է կազմում, որից հետո երկու սև, լայն գծերի վրայով մկրատելով թերթերը երեք մասի է բաժանում (թերթերը մինչև վերջ չեն կտրվում որպեսզի գիրքը կազմված մնա): Գիրքը թերթում են աշակերտներն այնպես, որ երեք կտրվածքները միասին չթերթվեն և ստացվում է տարբեր մարդկանց մասին տարբեր նկարագրություններ՝ պատահական իրար միացված: Այսինքն՝ աշակերտների գրած նախադասությունները խառնվում են իրար և ստեղծում նոր մարդիկ, որոնք ազնիվ գործեր են արել: Խառնվում են նաև կենդանիների գլուխը, իրանը և ոտքերը: Այսպես, հետաքրքիր խաղ է ստացվում, և նյութը ավելի է տպավորվում աշակերտների մեջ:



8
ԿՈՐՈՒՍՏ ԵՎ ՔԱՋՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՃԱՌԱԾ ՑԱՎԸ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Հրանտ պապիկն ապրում է հավիտյան»

ՀՐԱՆՏ ՊԱՊԻԿՆ ԱՊՐՈՒՄ Է ՀԱՎԻՏՅԱՆ

Սուզաննա Փիթզըր

Անգլերենից թարգմ. Ռ. Փ.

Դռան գլխի զանգակները զնգզնգացին, երբ Գրիգորը պապիկի գորգի խանութի դուռը բացեց ու ներս մտավ: Բրդի, ներկի և դարչնի հոտերը ողջունեցին նրան: Հրանտ պապիկը նայեց վեր ու ժպտաց: «Ըհը, իմ փոքրիկ Գրիգորը եկավ»,— ասաց: Գրպանից հանեց դարչնի համով քաղցրավենիք, մեկը տվեց Գրիգորին, մյուսը՝ բերանը դրեց: Գրիգորը առավ քաղցրավենիքն ու գլուխը շարժելով՝ ասաց. «Հրանտ պապիկ, ես այլևս փոքրիկ չեմ»:

«Այո՛, այո՛, տեսնում եմ,— ծիծաղեց պապիկը:— Արի՛, նստի՛ր իմ կողքին: Աշխատիր քո գորգի վրա մինչև ես այս մեկի կարկատելը վերջացնեմ»:

Հրանտ պապիկը նստեց մի մեծ սեղանի ետև և շարունակեց կարկատել մի հին հայկական գորգ: Գորգի մեջ գործված մի հայերեն արձանագրություն կար:

«Այս բառերն ի՞նչ են ասում»,— հարցրեց Գրիգորը՝ մատներով հայերեն տառերը շոշափելով:

«Հայերը կապրեն հավիտյան»,— պատասխանեց պապիկը՝ գորգի մաշված տեղերը գունավոր թելերով ճիշտ հնի օրինակով մեծ ուշադրությամբ կարկատելով:

«Գրիգո՛ր, արի՛, շոշափիր այս գորգը»: Հրանտ պապիկի աչքերը փայլեցին:

«Կարո՞ղ ես հինը նոր կարկատածից զանազանել: Թե՛ աչքերդ գործածիր և թե՛ ձեռքերդ»:

Գրիգորը մատներով շոշափեց գորգը, նախ արագ, հետո ավելի դանդաղ: Իրոք որ չէր կարողանում զգալ տարբերությունը:

«Իսկապես, ճիշտ նույնությամբ ես կարկատել»,— ծիծաղեց Գրիգորը: Նա հպարտ էր, որ այսպիսի տաղանդավոր պապիկ ունի:

Գրիգորը կեսօրից հետոները պապիկի խանութում էր անցկացնում: Նայում էր, թե պապիկն ինչպես է գորգերը կարկատում և վաճառում: Նրանք հաճախ պապիկի երկրի՝ Հայաստանի մասին էին խոսում:

«Մեր գյուղը շատ հարազատ էր: Բոլորն էլ շատ տարբեր մարդիկ էին, բայց խաղաղ ապրում էին իրար հետ: Մեր ընտանիքը շատ հնուց գորգագործ-

ներ էին: Բայց ժամանակները փոխվեցին: Թուրքերը չէին ուզում հայերին, ու մեզ դուրս շպրտեցին»:

«Դուք բոլորդ Ամերիկա եկա՞ք»,— հարցրեց Գրիգորը:

«Ո՛չ,— պատասխանեց պապիկը տխուր:— Շատ ընտանիքներ սպանվեցին»:

«Բայց դու փրկվեցիր»,— պապիկի թևին հպելով ասաց Գրիգորը:

«Այո»,— ասաց Հրանտ պապիկը՝ գլուխը ծանրորեն իջեցնելով:

«Ես փրկվեցի, Ամերիկա եկա և հանդիպեցի մի գեղեցիկ կնոջ՝ Մերիին»:

«Տատիկը»,— ասաց Գրիգորը:

«Այո՛, քո տատիկը: Ես սկսեցի գորգավաճառի խանութներում աշխատել, որովհետև դա գիտեմ անել, գորգ կարկատել և վաճառել…»:

«Հետո, դու քո խանութն ունեցար»: Գրիգորը այդ պատմությունը գիտեր:

«Այո՛, ես դրամ խնայեցի և այս խանութը գնեցի: Այստեղ ես գորգ եմ կարկատում, գորգ եմ ծախում և երբ ժամանակ եմ գտնում իմ պապերի գորգերից եմ գործում»,— ասաց պապիկը:

«Հրա՛նտ պապիկ, դու քո գործած գորգերում ինչո՞ւ միշտ հայկական նախշեր ես դնում և արձանագրություններդ էլ հայկական տառերով ես գործում,— հարցրեց Գրիգորը:— Չե՞ս ուզում ուրիշ նախշեր գործածել և անգլերենով գրել քո պատգամները»:

Հրանտ պապիկը գլուխը շարժեց. «Ո՛չ, իմ գործած գորգերում իմ ընտանիքն ու իմ ժողովուրդն են ապրում: Երբ ես հայկական գորգեր եմ գործում, ես տեսնում եմ իմ ընտանիքին ինձ հետ աշխատելիս: Ես զգում եմ իմ մոր թխած համեմունքով կարկանդակների հոտը, ես տեսնում եմ իմ քույրերին, որ ներս ու դուրս են վազվզում, վազել–բռնել են խաղում: Այս գորգերից գործելով, ես իմ ընտանիքին կենդանի եմ պահում իմ սրտում և հայերեն արձանագրություններով ես Հայաստանն եմ պահում իմ մեջ»:

Գրիգորը շատ էր սիրում դիտել իր պապիկին աշխատելիս, պատկերացնել նրան Հայաստանում, իր ընտանիքով շրջապատված:

Գրիգորն ինքը մի փոքրիկ հաստոց ուներ պապիկի հաստոցի կողքին: Այս հաստոցի վրա էր, որ միասին Գրիգորի առաջին գորգը գործեցին: Գորգի մեջ նրանք անպայման օգտագործեցին երկու բան՝ հայկական կարմիր ներկ և հայերեն արձանագրություն: Գրիգորի գորգի վրա արձանագրված էր. «Գրիգոր և Հրանտ Կետիկյան: Գորգագործներ»:

Գրիգորն իր այս գորգը դրել էր իր մահճակալի կողքին, որպեսզի նայի նրան ամեն գիշեր քնելուց առաջ և ամեն առավոտ արթնանալիս:

Հիմա Գրիգորը իր երկրորդ գորգի վրա էր աշխատում:

Այս մեկը նա մենակ էր գործում:

Նա իր գորգի նախշն ընտրել էր պապիկի հայկական գորգերի ալբոմից, ուշադրությամբ ընդօրինակել էր այն իր գործելիք գորգի մեծությամբ թղթի վրա. ապա՝ բրդե թելերի միջից ընտրել էր նախշին համապատասխան թելերը իրենց գույնով ու որակով: Գրիգորը մի երկար կանաչ բրդե թել վերցրեց ու գործեց գորգի մեջ:

«Լավ ուրեմն, արձանագրությունդ ի՞նչ է լինելու»,— Հրանտ պապիկը հարցրեց Գրիգորին:

«Դեռ չգիտեմ: Գուցե իմ տարեդարձի կամ գորգը վերջացնելուս թվականը: Հիմա դեռ ոչ մի պատգամ մտքիս չի գալիս»:

«Հայերեն արձանագրությունները մի լավ բան ունեն,— ասաց պապիկը:— Դրանք հատուկ օրենք չունեն. կարող են լինել ուրախ, տխուր, կարճ, երկար, թվականներ, տառեր կամ բանաստեղծություն»:

Գրիգորը գլխի շարժումով հաստատեց: Գրիգորը մի քանի թել էլ գործեց, նայեց պապիկին ու ասաց.

«Հրանտ պապիկ, ես ուզում եմ քեզ նման գորգագործ դառնալ»:

Պապիկը շոյեց Գրիգորի գլուխն ու ասաց. «Դու արդեն գորգագործ ես. մենք գորգագործներ ենք միասին»:

Գրիգորն այնքան ուժեղ ժպտաց, որ այտերը ցավեցին:

Մի օր, երբ Գրիգորը դպրոցից խանութ եկավ, մայրը խանութում էր: «Ու՞ր է Հրանտ պապիկը»,— հարցրեց Գրիգորը:

Մայրը պինդ գրկեց Գրիգորին:

«Ի՞նչ է պատահել»,— Գրիգորը իրեն դուրս քաշեց մոր գրկից:

«Գրիգոր»,— ասաց մայրը մեղմ ձայնով:— Հրանտ պապիկը հիվանդանոցում է»:

«Ինչո՞ւ,— անհամբեր հարցրեց Գրիգորը:— Ի՞նչ է պատահել»: Գրիգորի մայրը սկսեց լաց լինել. «Պապիկը շատ, շատ հիվանդ է»:

Գրիգորը չգիտեր ինչ անել: Այնքան բան կար նրա ուղեղում:

Նա ուզում էր, որ ամեն ինչ առաջվա պես լինի:

Նա չէր ուզում, որ Հրանտ պապիկին մի վատ բան պատահի:

Ուզում էր, որ նա խանութում լինի, դարչնի քաղցրավենիքի հոտով, երկրի, գորգագործների մասին պատմություններով՝ Գրիգորի կողքին նստած:

Մայրը սրբեց աչքերը:

Գրիգորը լուռ էր: Հետո հարցրեց.

«Կարո՞ղ եմ Հրանտ պապիկին տեսնել»: Մայրը խոր շունչ քաշեց:

«Այո՛, նա քեզ էր հարցնում»:

Հիվանդանոցի սպիտակ միջանցքներից անցնելը անհանգստացրել էր Գրիգորին: Տարօրինակ հոտ կար՝ ինչպես լինում է բժշկի կամ ատամնաբույժի սենյակում: Չկային ընտանի հոտերը բրդի, ներկերի և դարչնի:

Միջանցքները պաղ էին: Մարդիկ ժպտում էին Գրիգորին, բայց Գրիգորի աչքերը գամված էին գետնին:

Գրիգորը զգուշորեն մտավ պապիկի սենյակը: Նրա մահճակալի գլխին մի պլաստիկ պարկ էր կախված, որի միջի անգույն հեղուկը մի խողովակով միանում էր պապիկի թևին: Տատիկը նստած էր պապիկի անկողնու մոտ՝ պապիկի ձեռքն իր ձեռքում: Նրա աչքերն էլ Գրիգորի մայրիկի աչքերի պես կարմիր էին:

Հրանտ պապիկը նկատեց Գրիգորին և թևի շարժումով մոտ կանչեց Գրիգորին: Գրիգորը տատանվեց:

Մայրը կռացավ դեպի նա ու ասաց. «Ոչինչ, կարելի է, մոտեցի՛ր պապիկիդ»: Գրիգորը դանդաղորեն մոտեցավ մահճակալին. «Հրանտ պապիկ,— շշնջաց,— դու կլավանա՞ս»:

Պապիկը պինդ գրկեց Գրիգորին: «Գրիգոր,— պապիկի ձայնը մեղմ էր:— Ես միշտ քեզ հետ կլինեմ»: Գրիգորը գրկեց պապիկին. «Շատ լավ է: Մենք միասին գորգագործներ կլինենք»:

«Այո»,— շշնջաց պապիկը և Գրիգորին պինդ սեղմեց իր կրծքին: Հաջորդ առավոտյան Գրիգորը արթնացավ հեռախոսի զանգից: Նա լսեց մոր լացը:

«Մամ, ինչ է պատահել»,— սենյակից դուրս գալով՝ հարցրեց:

«Գրիգո՛ր, ես….ես վատ լուր ունեմ»: Մայրը մոտեցավ.

«Պապիկը….»,— կանգ առավ ու նրա աչքերն արցունքով լցվեցին:

«Ինչ է պատահել»,— Գրիգորը շունչը բռնեց: Չէր ուզում պատասխանը լսել:

«Պապիկը երեկ գիշեր մահացավ»: Գրիգորին թվաց, թե մեկը բռունցքով հարվածեց իր կրծքին:

«Ո՛չ,— ասաց:— Նա կգա»:

Մայրը գլուխը շարժեց. «Սիրելի՛ս, նա չի գա: Նա մահացավ»: Նա փորձեց գրկել Գրիգորին:

«Ո՛չ,— Գրիգորը հրեց նրան:— Նա չի կարող մեռնել: Չի կարող: Նա ասաց միշտ ինձ հետ կլինի»:

Մայրը լաց եղավ. «Գրիգո՛ր, նա չէր ուզում քեզ թողնել: Նա ուրիշ կերպ չէր կարող»: Գրիգորը խղճաց մորը, բայց նրա բարկությունը շատ հզոր էր: Պապիկը լքել էր նրան: Նա խաբել էր: Նա ասել էր, որ միշտ իր հետ կլինի և հիմա չկար: Գրիգորը վազեց իր սենյակը և դուռը շրխկոցով փակեց: Նա իր անկողնու բոլոր բարձերը շպրտեց: Բոլոր խաղալիքները պահարանից դուրս թափեց: Բոլոր գրքերը գետին շպրտեց: Կռացավ, որ իր մի արջուկը վերցնի, որ շպրտի ու հանկարծ տեսավ այն փոքրիկ գորգը, որ ինքն ու պապիկն էին գործել: Գրիգորը շպրտեց արջուկը, հետո վերցրեց գորգը, որ շպրտի, բայց չարեց, ցած գցեց միայն: Շոգում էր ու քրտնել էր: Պատուհանը բացեց: Դուրսը բակում տեսավ ծաղիկները, որ ինքը պապիկի հետ էր ցանել: Գրիգորը վարագույրները քաշեց և նստեց մութի մեջ: Հուղարկավորության ընթացքում Գրիգորն իր մոր և մեծ մոր մեջտեղն էր նստել: Նրանք լաց էին լինում:

Համարյա բոլորն էին լաց լինում, բացի Գրիգորը:

Մայրը գրկեց նրա ուսերն ու ասաց. «Լավ կլինի, որ դու էլ լաց լինես, բալի՛կս, այդպես քեզ ավելի լավ կզգաս»:

Գրիգորը իրեն հետ քաշեց «Լացս չի գալիս»: Եվ չլացեց:

Նա զայրացած էր: Պապիկը լքել էր նրան: Գրիգորի խաղալիքները, գրքերն ու հագուստները մի շաբաթից ավելի սենյակում թափթփված մնացին:

Մայրը մի քանի անգամ հավաքել էր դրանք, բայց Գրիգորը նորից շպրտում էր: Մայրը նույնիսկ զայրացել և ճչացել էր նրա վրա, բայց Գրիգորի հոգը չէր:

«Գրիգո՛ր,— մի գիշեր ասաց մայրը:— Պարոն Քաշյանը պապիկի խանութը պիտի գնի: Նա երկար տարիներ աշխատել է այնտեղ: Կարծում եմ, որ դա ճիշտ կլինի: Նա ասաց, որ քո հաստոցը կթողնի խանութում: Դու երբ որ ուզես կարող ես գնալ և քո գորգի վրա աշխատել»: Գրիգորը երկար նայեց մորը հասկանալու համար, թե ինչ է կատարվում, հետո ջղային ճչաց.

«Ես չեմ ուզում որևէ մեկը պապիկի խանութը վերցնի»: Գրիգորը վազեց իր սենյակն ու դուռը շրխկոցով փակեց ետևից:

Գրիգորը գետնից վերցրեց խաղալիքներն ու շպրտեց: Գետնից վերցրեց գրքերն ու շպրտեց, վերցրեց գորգը, որ պապիկի հետ էր գործել. «Ես էլ երբեք չեմ

ուզում գորգ գործել»: Եվ գորգը շպրտեց: Գորգը կպավ պատին ու մի նկար ընկավ գետին. «Ես չեմ ուզում գորգագործ լինել»:

Գրիգորի աչքերը այրվում էին և այտերը թաց էին:

Գրիգորը նետվեց գետնին ընկած գորգի վրա: Պառկեց վրան ու ծայրերը հավաքելով փաթաթվեց գորգի մեջ, աչքերը փակեց և լաց եղավ:

Հաջորդ օրը Գրիգորը սկսեց հավաքել թափված խաղալիքները, գրքերն ու հագուստները: Շատ զգուշությամբ վերցրեց գորգը և դրեց տեղը՝ իր անկողնու կողքին: Մի շաբաթ հետո, դպրոցից վերադառնալիս, Գրիգորը գորգի խանութից անցավ: Ներս չմտավ: Հիշեց, թե ինչպես պատուհանից տեսնում էր պապիկին հաճախորդի հետ խոսելիս և գորգ գործելիս: Քանի որպե կանգնած մնաց դռանը, ապա՝ աճապարեց տուն: Մի օր էլ Գրիգորը խանութի ուղղությամբ քայլեց: Սիրտն արագ խփում էր: Խորը շունչ քաշեց և հրեց զնգզնգան դուռը: Պարոն Քաշյանը նայեց վեր ու ժպտաց: «Հեյ Գրիգոր»: Գրիգորը հիշեց, թե պապիկն ինչպես էր ժպտում իրեն՝ երբ ինքը դռնից ներս էր մտնում:

«Բարև»,— ասաց Գրիգորը և մոտեցավ իր հաստոցին:

Նա շոշափեց գորգի թելերը, հետո նայեց պապիկի դատարկ աթոռին: Հիշեց, թե որքան հպարտ էր զգում իրեն երբ աշխատում էր պապիկի կողքին, գորգագործներ միասին:

«Պարո՛ն Քաշյան,— ասաց Գրիգորը:— Եթե կարելի է ես կուզենայի գորգիս աշխատանքը շարունակել»:

«Իհարկե, ես շատ կսիրեմ, որ դու այստեղ լինես»: Պարոն Քաշյանը պապիկի աթոռը քաշեց Գրիգորի գորգի հաստոցի մոտ և ասաց. «Ես կարծում եմ, որ դու պիտի այս աթոռը գործածես: Դա պատկանում էր մի հիանալի գորգագործի, որը բազմիցս ասել է ինձ, թե դու էլ այդպիսին ես դառնում»:

Գրիգորը ժպտաց. նրա երեսը տաք էր: «Ես ուզում եմ պապիկիս պես գորգագործ դառնալ»:

«Այս գորգին նայելով՝ կարող եմ ասել, որ դու այդ ճամփին ես»,— ասաց պարոն Քաշյանը՝ մատներով գորգի վերջացած մասը շոշափելով:

«Դու ժառանգել ես քո պապիկի տաղանդը»: Գրիգորը նստեց աթոռին և սկսեց սկուտեղի վրա շարված թելերին նայել: Մի կարմիր թել վերցրեց և հիշեց պապիկի խոսքը. «Դարեր շարունակ հայկական գորգերը հայտնի էին իրենց կայուն կարմիր գույնով»: Գրիգորը թելը գործեց գորգի մեջ, ապա վերցրեց մի կտոր դարչնի քաղցրավենիք, որ պապիկն էր թողել սկուտեղի վրա:

Դարչնի համն ու հոտը նրան պապիկին հիշեցրեց:

Հրանտ պապիկը չէր խաբել: Բուրդը շոշափելով, կարմիր թելը գորգի մեջ գործելով ու դարչնի հոտով Գրիգորը տեսավ պապիկին գորգի վրա աշխատելիս: Լսեց պապիկի ձայնը: Հիշեց պապիկի պատմությունները իր ժողովրդի մասին և զգաց, որ նրանք բոլորն էլ այստեղ են ու մասնակից այս գորգերը գործելուն: «Պարո՛ն Քաշյան, կարո՞ղ եք ինձ օգնել, միասին հայերեն արձանագրությունս դնելու»,— հարցրեց Գրիգորը:

«Իհարկե,— ասաց պարոն Քաշյանը:— Ի՞նչ ես ուզում գրել»:

«Հրանտ պապիկն ապրում է հավիտյան»,— ժպտաց Գրիգորը:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Հրանտ պապիկն ապրում է հավիտյան»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները կարդում են պատմությունը և մտորում են «Վշտի փուլերի» մասին: Այս պատմության նկարազարդված տարբերակը, որ ավելի գրավիչ կարող է լինել աշակերտների համար, կարելի է ներբեռնել էլեկտրոնային ձեռնարկից: Ապա աշակերտները փորձում են զատորոշել Գրիգորի հակադարձությունները իր կրած կորստին և ցանկ են կազմում այն դրական երևույթներից, որոնց կարելի է ապավինել կորստից հետո:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչն աշակերտներին մղում է հիշելու մի աղետալի դեպք, որ լսել կամ կարդացել են լուրերում և կամ պատահել է իրենց հետ, և նրանք ինչ հակազդեցություն են ցույց տվել այդ դեպքին: Հարց է տալիս, թե արդյո՞ք բոլորը նույնպես կվարվեին, թե՞ տարբեր է աղետի ազդեցությունը տարբեր մարդկանց վրա և մանավանդ՝ երեխաների վրա:

Դասավանդման հերթականություն: Միասին կարդալ պատմվածքը, ապա անցնել «Վշտի հինգ փուլերի» վրայով և այդ փուլերի հիման վրա դատել պապիկի մահից հետո Գրիգորի ցույց տված հակազդեցությունները: Պապի բնավորության և վերաբերմունքի դրական կողմերից մի ցանկ կազմել ու շեշտել նրան հիշելու և չմոռանալու կարևորությունը: Այստեղ նաև խոսել պապիկի պատմական անցյալի մասին, որ նույնանում է հայ ժողովրդի աղետալի անցյալի հետ: Աշակերտները, խմբերի բաժանվելով, բեմադրում են պատմվածքը և եզրակացնում, թե պապիկի մահը ինչպիսի ազդեցություն կթողնի Գրիգորի վրա և ինչ դասեր կքաղի նա այդ դեպքից:

Գնահատում/Արժևորում: Քննարկումների և բեմադրության ընթացքում ուսուցիչը արժևորում է, թե աշակերտը որքանով է յուրացրել նյութը: Եթե կարիք լինի ուսուցիչը կարող է հավելյալ նյութերով պարզաբանել կորուստը տարբեր տեսանկյուններից:

Վշտի հինգ փուլերը

1. Ուրացում և մեկուսացում

Սկզբում մենք կարծես փորձում ենք ուրանալ, որ կորուստ ենք ունեցել, և մենք մեզ մեկուսացնում ենք մարդկանց հետ շփվելուց:

2. Բարկություն

Ապա հնարավոր է, որ վիշտը կրող անձնավորությունը մի հզոր բարկության զգացողություն ունենա այն անձի դեմ, որ այդ վիշտն է պատճառել կամ ընդդեմ աշխարհի: Նա կարող է բարկություն զգալ ինքն իր դեմ, որ թույլ է տվել, որ այդ դեպքը պատահի, նրանով հանդերձ, որ իրականության մեջ ոչինչ չէր կարող դեպքը կասեցնել:

3. Սակարկություն

Հիմա, վշտակիր անձը սակարկություն է սկսում Աստծու հետ՝ իր մի զոհաբերությունն է առաջարկում՝ «Եթե ես այդ զոհաբերությունը կատարեմ, դու կորուստը կվերացնե՞ս»:

4. Ընկճվածություն

Անձը մի տեսակ ընդարմանում է նրանով հանդերձ, որ խորքում դեռ առկա են բարկությունն ու տխրությունը:

5. Ընդունում

Սա այն փուլն է, երբ բարկությունը, տխրությունը և սուգը մեղմացել է: Անձը պարզապես ընդունում է կորուստը:

9
ՄԵԾ ԵՂԵՌՆ
(երրորդ դասարանի համար)

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Գարնանային մի օր»

Այս դասանյութը Մեծ եղեռնի հետևանքն է նկարագրում. նրա միջոցով աշակերտը ծանոթանում է նաև կորստի գաղափարին և թե ինչպե՞ս կարելի է քաջությամբ հաղթահարել կորստի պատճառած ցավը: Պատմության մեջ կարող են անհասկանալի բառեր լինել հետևյալները, որ ուսուցիչը կբացատրի նախքան դասը սկսելը. *ավան, կառուցել, թափուր, ներգաղթ, հայրենակից, հեծկլտալ…*

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԻ ՕՐ

Մկրտիչ Արմեն

Գարնանային մի օր՝ տարիներ առաջ, ես շրջում էի Երևանին մոտիկ մի ավանում, ուր հայրենիք վերադարձած, ներգաղթած հայերն էին ապրում: Գեղեցիկ էր ավանը: Այդ արհեստավոր մարդիկ կառուցել էին տներ, պարտեզներ, փողոցներ: Կառուցել էին մեծ սիրով, գիտենալով, որ դա օտար հողում չէ, դա իրենց պապերի հայրենիքն է, որտեղ նրանք ապրելու էին միշտ:

Ուրախ էին և երգում էին նրանք: Երգում էին և՛ արաբերեն, և՛ պարսկերեն, և՛ հունարեն և այլ լեզուներով, որոնք լսել էին նախքան հայրենիք վերադարձը՝ երբ դեռ օտար երկրներում էին ապրում: Փոքրիկ պարտեզներից մեկի մոտ կանգ առնելով՝ ականջիս հասավ դռան մոտ նստած կանանց զրույցը:

— Դու որտեղացի՞ ես, Սրբուհի՛ քույրիկ,— հարցրեց մի միջահասակ կին:

— Սելանիկից եմ, աղջի՛կս, իսկ դո՞ւ:

— Ես Բաղդադից եմ, բայց էրիկս Մարսելից եկավ ինձ առավ:

— Մարսելից ինչո՞ւ եկավ Բաղդադ,— հետաքրքրվեց մի աղջիկ:

— Ուզում էր անպայման հայրենակցուհու հետ ամուսնանալ:

— Դո՞ւ որտեղացի ես, մայրի՛կ...Մի պառավ կին՝ կլոր այտերով ու բարի, ասաց.

— Ես Վառնա կապրեի, բայց սասունցի եմ:

Բաղդադցի կինն ասաց.

— Այսինքն՝ ես էլ Բաղդադում չեմ ծնվել, ես Կարին քաղաքից եմ... Էրիկս, որ Մարսեյլից եկավ՝ Տիգրանակերտի շրջակայքից էր փախել այնտեղ...

Նորից հարցրեց սելանիկցի կնոջը.

— Դո՞ւ որտեղացի ես, Սրբուհի՛ քույրիկ:

— Նմանապես սասունցի...

— Սասունցի՞,— հետաքրքրվեց պառավը,— իսկ ո՞ր գյուղից:

Կինը գյուղի անունը տվեց: Պառավը լարվեց. այդ իրենց գյուղն էր:

— Կրպեենց կհիշե՞ս,— հարցրեց նա,— ես մայրն եմ Կրպեենց Սմբատի, որ Ստամբուլի մեջ սպանեցին...

Սրբուհին լարեց հիշողությունը:

Ո՛չ, չէր հիշում:

— Մեր գյուղն ախր մեծ էր,— ասաց:

— Մեծ էր այո՛,— համաձայնեց պառավն ու նորից հարցրեց.

— Դուք տասնհինգ թվի՞ն փախաք:

— Այո՛: Մեծ կոտորածին: Սիհուն գետի վրայի սպանությունների ժամանակ ես իմ ծնողներիս ու ազգականներիս կորցրի:

— Սիհունի ջարդին ես էլ կայի:

Ասել է, մենք մի թափորի մեջ ենք եղել:

Իսկ ձեր ազգանունը ինչպե՞ս է,— հարցրեց պառավը:

— Ես իմ ազգանունս չգիտեմ: Էրիկիս ազգանունով՝ Մեսրոպյան ենք:

Պառավը մտքով ընկավ կոտորածների սարսափելի հիշողությունների մեջ:

— Ես էլ իմ զավակներս այնտեղ կորցրի,— ասաց նա քիչ հետո: Բոլորին աչքիս առաջ մորթեցին կամ հեռու քշեցին... Գագիկ... Աշոտ... Սառա... Անդրանիկ... Սրբուհի:

— Իմ անունս,— հառաչեց Սրբուհին:

— Այո՛: Մեր գյուղը Սրբուհի շատ կար: Բայց իմ Սրբուհիս ամենքից աղվորն էր: Ողջ գյուղը նրան անուշ Սրբուհի էր ասում:

— Անուշ Սրբուհին ես եմ, կտավի պես սպիտակեց Սրբուհին:

Կանայք շփոթված դես ու դեն շարժվեցին, կարծես ռումբ ընկավ նրանց մեջտեղը:

Պառավը փորձեց ոտքի կանգնել, բայց ուժասպառ էր եղել:

— Մորդ անունը ի՞նչ էր,— հարցրեց նա սարսափած աչքերով Սրբուհուն նայելով:

— Մաքրուհի...

— Աղջի՛կս...

Պառավն ուշաթափվեց: Կանայք սկսեցին գոռալով լաց լինել: Սրբուհին հեծկլտում էր:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Գարնանային մի օր»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել և յուրացնել կորստի իմաստը, ինչ վերաբերում է մարդկանց (ժողովուրդներին) կամ վայրերին (հայրենի հողին):

Նյութեր և միջոցներ: Խաղալիք լսափողեր կամ բաներ, որ դրանց նման են, գծագրության մեծ թուղթ, ակրոստիք բանաստեղծության օրինակ, սովորական թուղթ, Tree Map (քարտեզ, գծագիր, այստեղ՝ կորստի ծառ):

Հետաքրքրություն ստեղծելու համար: «Cooperative learning» (ուսուցման համագործակցային եղանակի, խմբային աշխատանքի) միջոցով աշակերտները պատմում են իրենց ունեցած մի մոտիկ անձի կամ առարկայի կորստի մասին և թե դա ինչպես պատահեց:

Այսպես, դասարանը բաժանվում է 4–6 հոգանոց խմբերի, որոնք նստում են իրար շուրջ:

Յուրաքանչյուր խումբ մեկ լսափող ունի:

Կարող է խոսել այն աշակերտը միայն, որ լսափող ունի իր ձեռքում: Աշակերտը պատմում է իր կորստի մասին և լսափողը փոխանցում հաջորդին, մինչև վերջ: Ուսուցչի թույլտվությամբ, սա կարող է կրկնվել մի քանի անգամ: Եթե մի աշակերտ լսափող ունի իր ձեռքում, բայց ոչինչ չունի պատմելիք, ասում է «փաս» և լսափողը փոխանցում է հաջորդին: Խմբերը գրի են առնում և ամբողջ դասարանի հետ բաժանում պատմվածները:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը հայտարարում է «Սա մի յուրահատուկ պատմություն է, որ մեզ կօգնի հասկանալու կորստի երկու կարևոր տեսակները: Պատմությունը կարդալուց հետո ես ձեզ կհարցնեմ այդ կորուստների մասին և թե ինչպես են պատմության հերոսները կարողացել համակերպվել այդ մեծ կորուստների հետ: Պատմության վերնագիրն է «Գարնանային մի օր», որ գրել է Մկրտիչ Արմենը:

Ուսուցիչը որոշ տեղեկություններ է տալիս հեղինակի մասին: Կարևոր է բացատրել նաև, թե ինչ է ներգաղթը և եթե նախապես առիթ չի եղել, ուսուցիչը հիմա կբացատրի, թե երբ, ինչու և ինչպես տեղի ունեցավ ներգաղթը: Կարդացվում է պատմությունը...

Ընթերցումը ընդհատվում է, երբ հասկացությունների լուսաբանության կարիք է զգացվում: Ընթերցումը ավարտելուց հետո տրվում է հասկացողության հարցեր, որոնց պատասխանը «այո» կամ «ոչ» չլինի.

օրինակ՝
– մարդիկ ինչո՞ւ էին ուրախ պարում ու երգում.
– ինչպե՞ս է, որ այս հայերը այսքան տարբեր տեղերից էին գալիս.
– ձեր կարծիքով Սրբուհին ինչո՞ւ իր ազգանունը չգիտեր.
– ձեր կարծիքով, պատմությունը ինչո՞ւ է այսպես վերջանում.
– ինչո՞ւ հեղինակը չի ասում, թե հետո ինչ է լինում.
– դուք չէի՞ք ուզի իմանալ, թե հետո ինչ է լինում.
– կարծում եք հետո ի՞նչ պատահեց.
– այս պատմության ո՞ր մասն է խոսում կորստի մասին.
– բացատրե՛ք, թե ո՞վ է կորուստ ունեցել:

Ուսուցիչն այնպես պետք է առաջնորդի քննարկումը, որ աշակերտները ըմբռնեն, թե Սրբուհին և իր մայրը չէին միայն, որ կորուստ էին ունեցել, այլ բոլորն այդ համայնքում կորցրել էին ընտանիք, տուն, տեղ, հող և ամեն ինչ և պետք է համակերպվեին դրա հետ:

Աշակերտների օգնությամբ «կորստի ծառ» է գծվում մեծ թղթի կամ գրատախտակի վրա: Ծառի կատարին գրվում է աշակերտների առաջարկած մի կորստի անուն, որ կարող է լինել սիրած կենդանու կորուստ, հարազատի մահ, երկրաշարժի կամ մի այլ պատճառով փլված տուն, և այլն. ապա՝ ճյուղերի վրա՝ այդ կորստի հետևանքներն է գրվում: Կորստի ծառը ամբողջացնելու ընթացքում ընդգծվում է, որ որոշ մարդիկ իրենց քաջությամբ կարողացել են շրջել այդ հետևանքները և ինչպես են հակազդել այդ հետևանքներին: Հարց է տրվում, թե այս մարդիկ ինչպե՞ս են քաջություն ցույց տվել. (իրենց կյանքը շարունակելով և, օրինակ, եթե տան կորստի մասին է, այլ վայրերում իրենց տունը վերաշինելով):

Անհատական աշխատանք: Աշակերտներն իրենց «կորստի ծառն» են գծում՝ տեղադրելով իրենց կորուստը և դրա ազդեցությունները՝ ավելացնելով, թե ինչպես են քաջություն գտել այն դիմագրավելու: Ուսուցչի հետ ստուգելուց հետո պատրաստված «կորստի ծառը» աշակերտի համար կծառայի իբրև ուղեցույց՝ գրելու համար «Իմ կորուստը և ինչպես հակազդեցի դրան» վերնագրով իր պատմությունը. աշակերտները խմբերի բաժանվելով, յուրաքանչյուրը «հեղինակի աթոռին» նստած, իրենց գրածը կարդում են մյուսների համար:

Հավելյալ աշխատանք: Աշակերտներն ակրոստիքով բանաստեղծություն են գրում:— Ուսուցիչն օրինակ է տալիս, թե ինչպես: Աշակերտները միասին մտածում կամ բառարանի միջոցով գտնում են հարմար բառեր ***«Քաջություն»*** բառի յուրաքանչյուր տառի համար:

Բանաստեղծությունները ցուցադրվում են դասարանում:

Նախապես պատրաստված կորուստների ցանկից օգտվելով՝ յուրաքանչյուր երկու աշակերտ միասին ցանկից մի աշակերտի անուն են որոշում և նամակ են գրում նրան, առաջարկներ կատարում՝ թե նա ինչպես կարող է կորստի հետ հաշտվել: Քաջալերում են նրան քաջ լինել՝ օրինակ բերելով պատմության հերոսների կյանքից:

Ուսուցիչը դասարանի համար կարդում է նույն թեմայի շուրջ մի այլ պատմություն, օրինակ՝ «Գիքորը» և դասարանում կատարվում է երկու պատմությունների համեմատությունն ու հակադրությունը:

Ուսուցիչը աշակերտների հետ քննարկում է, թե ինչպես Հայոց ցեղասպանությունը կորստաբեր եղավ հայերի համար որպես մի ժողովուրդ (նույնիսկ նրանց համար, որ այնտեղ չէին և ուղղակիորեն չկրեցին կորուստը) և ինչպես քաջություն ցուցաբերեցին և կարողացան վերապրել ու բարգավաճել:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչն արժևորում է աշակերտի մասնակցությունը զանազան աշխատանքներին, նրա գրավոր արտահայտությունը, նրա կազմած «կորստի ծառը», որ պատճառ–հետևանք է ցույց տալիս:

Օրինակ ուսուցչի համար (1)

Ք	Քույրեր, եղբայրներ,
Ա	Անապատն անցած,
Ջ	Ջարդին դիմացած,
ՈՒ	ՈՒղիներ գտան,
Թ	Թևեր առան՝
ՅՈՒ	Յուրահատուկ հայերին,
Ն	Ներգաղթեցին հայրենիք,

Օրինակ ուսուցչի համար (2)

Ք	Քարոտ ճամփա,
Ա	Արևը վառ,
Ջ	Ջուր չկա:
ՈՒ	ՈՒ՞ր ենք գնում,
Թ	Թափառական,
ՅՈՒ	Յուրաքանչյուր քայլափոխին
Ն	Նվազում է կարավանն:

Գծագրի (Tree Map) օրինակ



ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Շուշանը»

Այստեղ օգտագործված «Շուշանը» պատմությունը, որ շեշտում է անարդարության գաղափարը, ուղղակի Մեծ եղեռնին է առնչվում և երեխաներին պատրաստում է Մեծ եղեռնի բարդ իմաստը հասկանալու: Այս պատմվածքի ընդմիջից աշակերտը սովորում է, թե ի՞նչ է անարդարությունը: Ուսուցիչը հարց է տալիս, թե եթե մի երկրի կառավարություն հանկարծ որոշի մի խումբ մարդկանց իրենց տներից դուրս հանել և հեռու ճամփաներ ուղարկել ու տիրանալ նրանց տանն ու ունեցվածքին, արդյոք արդա՞ր է: Թուրք կառավարությունը որքա՞ն անարդար վերաբերվեց հայերի հետ՝ նրանց իրենց տներից դուրս քշելով:

ՇՈՒՇԱՆԸ

Տարիներ առաջ, երբ փոքրիկ աղջիկ մըն էի, պուպրիկ մը ունէի, անունը՝ Շուշան: Այնքան կը սիրէինք իրար, որ ամէն բան միասին կ'ընէինք:

Նոյն անկողնին մէջ կը պառկէինք և նոյն պնակէն կը ճաշէինք: Նոյն ընկերները ունէինք, ինչպէս քեռիիս տուած աղաւնին և շունս Կայծը, չարագործ և անհամբեր Կայծը: Օր մը Կայծը Շուշանին թևը խածաւ և քաշեց, որպէսզի հետը խաղայ: Խեղճ Շուշան: Շուտով վազեցի հայրիկիս քով, որ բժիշկ էր և գրասենեակ մը ունէր մեր տունին մէջ: Միասին Շուշանին վէրքը կապեցինք: Երբ ութ տարեկան էի, ամէն ինչ փոխուեցաւ: Պատերազմը սկսաւ: Մեր դրացի թուրքերը մեր հետ սկսան գէշ վարուիլ: Դպրոցը, երբ ձեռքս բարձրացնէի, թուրք ուսուցչուհին ինծի կարևորութիւն չէր տար: Թուրք դասընկերներս «հայ անհաւատ» կը կոչէին զիս: Օր մը թուրք ոստիկանները հայրս առին ու տարին, որպէսզի վիրաւոր թուրք զինուորներ բուժէ: Այլևս չտեսանք զինք: Առտու մը, դեռ արևը բոլորովին չծագած, մայրս անթնցուց զիս: Վախ կար անոր ձայնին մէջ: «Արագ, պէտք է երթանք: Հետդ բան մը մի՛ առներ»,— փսփսաց:

Ես շատ լաւ չէի հասկնար՝ ինչ կը պատահէր: Մեր բոլոր ունեցածները տունը ձգեցինք, ամէն բան, նոյնիսկ Շուշանը: Ճամփան, կառքին մէջ, լացի: Ինչ պիտի ըլլար Շուշանը, առանց ինծի: Կը մտածէի՝ ինչ պիտի ըսեն դասընկերներս, քանի այդպէս կը բացակայէի դպրոցէն: Արփին, ամենէն մտերիմ ընկերուհիս, արդեօք դեռ հոն էր, թէ՞ ինքն ալ ստիպուած ձգած գացած էր: Երբ դրացի Տէրտէրեաններուն աղջիկը մեր տունը գար հետս խաղալու, պիտի գիտնա՞ր, որ ստիպուած մեկնած էի:

Նախ Լիբանան փախանք: Ամիսներ ապրեցանք վրաններու տակ: Հոն նոր դասընկերներ ունեցայ, ինծի պէս գաղթական հայ պզտիկներ: Շատ գէշ էր մեր վիճակը. կտոր մը հաց նոյնիսկ չունէինք ուտելու: Երբեմն հայ կիներ ձաւար կու տային, որ կը թրջէինք և կ'ուտէինք, առանց եփելու:

Յաջորդ տարին Ֆրանսա գացինք, անկէ ետք Ամերիկա: Ամերիկա շատ հայեր չկային, հայկական դպրոց ալ չկար: Սկիզբը շատ դժուար էր կեանքը, անգլերէն չէի գիտեր: Դպրոցը չէի սիրեր, որովհետև միշտ անգլերէն պէտք է խոսէինք:

Տարիներ անցան, ա՛լ չվերադարձանք: Կ'ապրէի ծննդավայրէս շատ հեռու, ովկիանոսին միւս կողմը:

Երբ իմ աղջիկս ութ տարեկան եղաւ, տարեդարձին համար պուպրիկ մը ուզեց:

Պտտեցայ խանութէ խանութ, բայց ո՛չ մէկ պուպրիկ կը հաւնէի: Յետոյ, օր մը հին ապրանքներ ծախող խանութի մը առջևէն անցած ատենս, աչքիս զարկաւ պուպրիկ մը, ապակիին ետևը նստած: Ներս մտայ: Անմիջապէս գրկեցի պուպրիկը. ինչ զարմանք... որքա՜ն կը նմանէր իմ պուպրիկիս...

Անմիջապէս գնեցի ու տարի տուն:

Աղջիկս պուպրիկին անունը դրաւ Շուշան:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Շուշանը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները կարդում են «Շուշանը» և իրենց կարծիքներն են հայտնում, թե այդ ընտանիքը ինչու պետք է փախչեր: Աշակերտները նշում են օտար միջավայրում մեծանալու բոլոր դժվարությունները և անցյալի ազդեցությունը ներկայիս իրականությանը բախվող:

Աշակերտները՝ իբրև այդ պատմության աղջիկը, նամակ են գրում իրենց մի երևակայական ընկերոջը և նկարագրում են այն դժվարությունները, որ դիմակայել են հայրենիքից գաղթելուց հետո:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը հարց է տալիս աշակերտներին, թե ինչ դժվարությունների առջև կարող են կանգնել նրանք, եթե տեղափոխվեն մի նոր թաղ և նոր դպրոց: Հետո քննարկումը կանցնի այն դժվարություններին, որ իրենց երկրից, տնից ու տեղից արմատախիլ եղած մարդիկ կարող են ունենալ օտար վայրերում մինչև մի տեղ բնակություն հաստատելը:

Դասավանդման հերթականություն: Բոլորը միասին դասարանում կարդում են «Շուշանը»:

Աշակերտները քննարկում են պատմության հետ առնչություն ունեցող հասկացությունները (հանկարծակի մի թշնամական միջավայրում ապրել, արմատախիլ լինել, որպես գաղթական ապրել, «տնից» «տուն» տեղափոխվել, վերջապես մի տեղ հաստատվել և կարոտել հինը, նախկինը, փորձել կապ ստեղծել անցյալի ու ներկայի միջև և ինքն իրեն տեսնել իբրև արդյունքն այդ երկուսի):

Աշակերտներն օգտագործում են Flow Map–ը ժամանակագրական կարգով ցանկագրելու համար պատմության կարևոր դեպքերը:

Յուրաքանչյուր աղյուսակում մեկ նախադասություն են գրում, նկարում և ներկում: Վերջապես աշակերտները, իբրև պատմության աղջիկը, իրենց ճակատագրի մասին նամակ են գրում իրենց մեկ ընկերոջ կամ ընկերուհուն, որ հայրենիքում է մնացել և նկարագրում են որպես մանուկ— պատանի իրենց դեմ կատարված անարդարությունները, ցանկություն են հայտնում կառչած մնալ անցյալին, որքան էլ որ հեռու են հիմա, արտահայտում են կարոտ, բայց նաև հայացք դեպի ապագա:

Գնահատում/Արժևորում: Flow Map–ը ստուգելով՝ ուսուցիչը արժևորում է, թե աշակերտը որքանով է ըմբռնել աղջկան պատահած դեպքերի ժամանակագրությունը: Նաև նամակները կարդալով՝ ուսուցիչը կարողանում է տեսնել, թե աշա-

կերտը որքանով է յուրացրել աղջկա ճակատագիրը և արդյոք կարողացել է ինքն իրեն այդ աղջկա տեղը դնել կամ երկու սերունդ անց դեռ զգալ անցյալում պատահած այդ դեպքերի ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:

Օրինակ Flow Map–ից
Քառանկյունիների մեջ մի քանի բառով գրվում է դեպքերի հաջորդականությունը



10
ՄԵԾ ԵՂԵՌՆ
(չորրորդ դասարանի համար)

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Անպարտելի ոգին»

Այս դասանյութի միջոցով աշակերտները ծանոթանում են ինքնագիտակցության գաղափարին և թե ինչպես կարելի է անսովոր պայմաններում հարցեր լուծել ու դժվարություններ հաղթահարել: Այս պատմության մեջ կարող են անհասկանալի լինել հետևյալ բառերը, որոնք ուսուցիչը կբացատրի նախքան դասը սկսելը. *անպարտելի, թափառաշրջիկ, ապաստան, կծկվել, հարություն, ցնցոտի, երդիկ:*

ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ

Ավետիք Իսահակյան

Եփրատ գետից շատ հեռու անապատում կային իրար մոտ մի քանի խղճուկ վրաններ: Այդ վրանների տակ ապաստան էին գտել թուրքական կոտորածներից փախուստ տված մի քանի տասնյակ հայեր՝ ծերեր, կանայք, մանուկներ:

Իրենց ոսկրացած մերկությունը ծածկված էր ցնցոտիներով: Ժպիտի նշույլ անգամ չկար իրենց դեմքին: Իրենց նայվածքներում սարսափն էր սառել:

Ցերեկները, թափառաշրջիկ *բեդվինները* (արաբ ցեղ, որ մնայուն բնակավայր չուներ) գալիս էին, շրջում վրանների շուրջը՝ հափշտակելու համար թուրքերի աչքից բախտով հեռու մնացած գեղեցիկ աղջիկներին:

Ծերերն ու պառավները՝ հիվանդ ու դժգույն, կուչ էին գալիս վրանների մի անկյունում՝ գոց աչքերով իրենց հայրենի երդիկների խաղաղ ծուխն ու պարտեզների ծաղկած ծառերը երազելով: Օրեցօր մաշվում, փլվում էր իրենց չարչարված հոգին:

Առավոտ էր: Ժամանակից առաջ ծերացած կանայք չորացած մատներով կար էին անում կամ ուրիշ աշխատանքներ էին անում՝ մոտերը գտնվող արաբներից ձեռք բերված, որ կարողանային գոնե մի չոր հաց հասցնել իրենց հարազատներին:

Վրանների առջև, պստիկ աղջիկներ ու տղաներ, մանկության երազով տարված, մոռանալով իրենց խեղճությունը, խաղի փորձեր էին անում՝ նույնիսկ ուրախ ճիչեր արձակելով:

— Տղա՛ք, դասի՛ եկեք,— հնչեց վրաններից մայրերի ձայնը:

Երեխաները վազեցին դեպի վրանները:

Երկու եղբայրներ՝ ձեռք ձեռքի բռնած, մտան վրաններից մեկը: Մեծը տասներկու տարեկան կլիներ, փոքրը՝ յոթ–ութ: Երկուսն էլ վազեցին դեպի իրենց մայրը:

Աքսորի ճամփին նա կորցրել էր իր ամուսնուն ու երկու զավակներին: Ամուսնուն ու պատանի որդուն, ուրիշ շատերի հետ, տարել էին թուրք ոստիկանները, իսկ աղջկան հափշտակել էին քրդերը:

Կրծքին սեղմած համբուրելով երեխաներին՝ մայրն ասաց կրտսերին.

— Աղվո՛ր զավակս, հիմա ես կգրեմ՝ դուն կկարդաս. տեսնեմ, գիրերը լավ կճանչնա՞ս: Վերջն ալ ասոր նման պիտի գրես: Եթե լավ կարդաս, քեզի արմավ կուտամ: Ու մայրը ցուցամատով գրեց ավազի վրա. «Աստված պահե հայրիկս, քույրիկս, աղպարիկս»: Երեխան հեգելով՝ կարդաց գրվածը:

— Ապրի՛ս, աչքի՛ս լույսը,— մայրը, նորից համբուրելով փոքրիկին, մի քանի չորացած արմավ տվեց նրան:

— Հիմակ ալ դուն նստե՛, գրե՛:

Երեխան, արմավը ուտելով, սկսեց գծեր քաշել ավազի վրա:

Մայրը հիմա, դիմելով մեծ որդուն, ասաց.

— Իմ սիրունիկ Վազգենս, տեսնեմ ինչ գրեր ես:

Մանուկը մի քանի բառեր էր գրել ավազի վրա:

Մայրը կարդաց՝ աչքերը արցունքոտած.

«Թուրքն ու քուրդը տարին հայրիկս, քույրիկս, աղպարիկս: Կ'ըսեն թե սպանված են: Ես չեմ հավատար: Երբ տուն դառնանք, զանոնք ողջ–առողջ պիտի գտնենք»:

— Հարկա՛վ, սիրելի՛ս, հարկա՛վ... Արցունքը զսպելով՝ համբուրեց երեխային, բայց չկարողացավ դասը շարունակել: Երկուսին էլ արմավի հետ մի կտոր սև հաց տվեց ու ասաց.

— Հիմա գացեք, դուրսը խաղցեք: Իրիկունը, Վազգենի՛կս, քեզի Ավետարանեն դաս պիտի տամ: Անանկ լավ պիտի սորվիս, որ երբ տուն երթանք, հայրիկդ պիտի տեսնե, թե ժամանակդ պարապ չես անցուցած հոս, շա՜տ պիտի ուրախանա:

Երեխաները զվարթ դուրս թռան: Մայրը նրանց հետևից լաց եղավ, ապա, արցունքները սրբելով, ասաց.

— Այո՛, երբ մեր ազատված հայրենիքը վերադառնանք, ամենքն ալ հոն հարություն առած պիտի գտնենք, անշո՛ւշտ:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Անպարտելի ոգին»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել 1915 թ. տեղահանությունների (աքսորի) նեղություններն ու զրկանքները և թե ինչ է նշանակում անսովոր կացություններում դժվարություններ հաղթահարել:

Նյութեր և միջոցներ: Գրատախտակ, թուղթ, գրքեր որոնցում անապատի նկարներ լինեն, թերթիկներ quilt–ը սարքելու համար:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը գրատախտակին գրում է՝ «Դժվարություն». քեզ տրված է տնային աշխատանք, որի համար տողաշարի կարիք ունես: Քոնը չես գտնում, բայց պետք է աշխատանքդ վերջացնես: Ինչպե՞ս պետք է ամբողջացնես գործդ: Մտածի՛ր, թե ինչով կարող ես փոխարինել տողաշարը: Աշակերտները երկու–երկու միասին մտածում են դժվարությունը հաղթահարելու տրամաբանական միջոցներ գտնելու մասին:

Ուսուցիչը մի քիչ ժամանակ է տալիս, ապա ստուգում է պատասխանները և դիտել է տալիս, որ երբ մարդ դժվարության առջև է կանգնում, ստեղծագործ է դառնում և փորձում է միջոցներ գտնել՝ նպատակն իրագործելու համար: Ուսուցիչը հայտարարում է. «Այսօր մի պատմվածք պետք է կարդանք, որը մեզ ցույց պետք է տա, թե ինչպես կարող է մարդը հաղթահարել դժվարությունները և գիտակցի ինքն իր արժեքն ու հնարավորությունները: Սա մի վկայություն է: Կարո՞ղ է մեկն ասել, թե ինչ է վկայությունը»:

Աշակերտների օգնությամբ ուսուցիչը եզրակացնում է, որ վկայությունը մեկի ապրած կյանքի կամ փորձառության իրական պատմությունն է և մտացածին չէ:

Դասավանդման հերթականություն: Պատմությունը կարդացվում է դասարանում և ուսուցիչը բացատրում է անհասկանալի բառերը.

Դասարանը բոլորի մասնակցությամբ քննարկում է կարդացածը՝ հետևյալ հարցերի շուրջ.

– այս մարդիկ որտե՞ղ են գտնվում.
– ինչո՞ւ են վրանների տակ ապրում.
– ի՞նչ է պատահել նրանց.
– ինչպե՞ս է, որ մեծերը այդքան տխուր են, իսկ երեխաները խաղում են և ուրախ են երևում.

– մայրերն ինչո՞ւ են երեխաներին ներս կանչում.
– երեխաներն ինչպե՞ս են պարապում.
– ինչո՞ւ դպրոցում չեն.
– գրելու և կարդալու համար ի՞նչ են գործածում.
– ձեր կարծիքով ինչո՞ւ է մայրը երեխաներին ստիպում սովորել, երբ չգիտի, թե ինչ է պատահելու.
– երեխաներն արդյո՞ք կհիշեն իրենց ով լինելը երբ մեծանան: Ինչպե՞ս:

Քննարկումն առաջնորդեք այնպես, որ դասարանը հետևյալ երկու կարևոր եզրակացությունների հանգի.

1) մարդ պետք է բարձր ինքնագիտակցություն ունենա և հարգանք՝ դեպի իր դավանածը, որպեսզի կարողանա նման անսովոր և դժնդակ պայմաններում իր առօրյա սովորական կյանքը պահել:

2) Երբ դուք իրապես մի բանի եք ձգտում, ոչ մի խոչընդոտի առջև չպետք է ընկրկեք, ինչպես մայրն այստեղ, որ Ավետարանն ու ավազն էր գործածում անապատում երեխաներին սովորեցնելու համար:

Կերպարների ուսումնասիրում: Հարցազրույց – երեք կամավոր աշակերտներ նստում են առջևում՝ դեպի դասարանը նայող աթոռների վրա: Յուրաքանչյուրը ստանձնում է մի դեր՝ մոր, մեծ տղայի և փոքր տղայի: Մենք պատկերացնում ենք, որ նրանք փրկվել են անապատից և հիմա հարցազրույց է անցկացվում նրանց հետ՝ իրենց փորձության մասին: Մնացած աշակերտները թղթակիցներ են, որ այդ երեքին հարցեր են տալիս՝ անապատի իրենց անցյալ կյանքի մասին: Ուսուցիչը կարող է տալ առաջին հարցը և դասարանին ուղղություն տալ՝ որպեսզի շեղումներ չկատարվեն:

Հարցերի օրինակներ՝ մորը ուղղելու համար.

Անապատում ի՞նչ ուտելիք կար:
Բացատրիր մեզ քո զգացումները:
Ինչո՞ւ էիր շարունակում երեխաներիդ գրել–կարդալ սովորեցնել:
Ուրիշ ի՞նչ դժվարություններ ունեիր:
Ինչպե՞ս լուծեցիր դրանք:
Ո՞վ ձեզ ազատեց:

Հարցերի օրինակներ՝ տղաներին ուղղելու համար.

Անապատում ինչպե՞ս էիք ձեր ժամանակն անցկացնում:
Ընկերներ ունեի՞ք:
Ի՞նչ խաղեր էիք խաղում առանց խաղալիքի:
Խաղեր հնարո՞ւմ էիք, ի՞նչ խաղեր:
Հիշո՞ւմ եք ձեր տունը:

Անհատական աշխատանք: Աշակերտները երկու–երկու միանում են իրար և մտածում, թե հայ գաղթականներն ինչպես են ապրել անապատի պայմաններում, ապա փորձում են գտնել առօրյա կյանքի երկու այլ անհրաժեշտություններ, որոնք չկային անապատում և գաղթականները պետք է դրանց համար մի ձև գտնեին: Կարող է պատահել, որ աշակերտներն այս խնդրում սահմանից դուրս գան. ուսուցիչը պետք է ուղղություն տա և աշակերտների գտածներն էլ գրի գրատախտակին: Ուսուցիչն աշակերտներին առիթ է տալիս արտահայտվելու, թե՛ այս պատմության լույսի տակ և թե՛ ինչպես հայ գաղթականներն իրենց դժվարությունները լուծելու ձևեր էին գտնում, իրենք ինչպե՞ս կլուծեն իրենց հարցերը: Ուսուցիչը մի օրինակ է պատմում՝ աշակերտներին կողմնորոշելու համար: Կարևոր — պետք է շեշտել այն իրողությունը, թե ամեն ոք իր դժվարությունները լուծում է հիմնված իր ինքնագիտակցության, պահանջների վրա և թե, որն է այն միջոցը, որ կարող է դժվարությունը հաղթահարել:

Հավելյալ աշխատանք: Դասարանային քննարկում.

– Ի՞նչ է ինքնագիտակցությունը:
– Ինչո՞ւ է կարևոր:
– Հայերն ինչպե՞ս են իրենց ինքնությունը գիտակցում:
– Որո՞նք են հայ ազգային խորհրդանիշները:

Թերթիկի վրա, շրջանակի մեջ աշակերտները նկարում են մի խորհրդանիշ, որ իրենց հայ ինքնությունն է ներկայացնում (օրինակ՝ դրոշ, հայոց գրեր, Մասիս, Սասունցի Դավիթ, Սայաթ–Նովա, Կոմիտաս, Վարդան զորավար, Խաչքար, ծաղկած, այսինքն՝ նկարազարդված մատյան և այլն): Ներքևում, տողերի վրա բացատրում են, թե ինչն է այդ խորհրդանիշի կարևորությունը, և դա ինչպե՞ս է օգնում մեր ինքնագիտակցությանը: Ուսուցիչը թելերով կամ ժապավենով միացնում է թերթիկները և ինքնության quilt–ը կազմում: Էջ 24–25–ում բացատրված է, թե ինչպես պետք է պատրաստել quilt–ը:

Աշակերտները շարադրություն են գրում՝ բացատրելու, թե ինչ լուծում կարելի է տալ տան մեջ կամ դպրոցում առաջացած մի դժվարության: Ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին, որ եթե մտքի մեջ ունենան, թե իրենք ինչ են և ինչ են ուզում դառնալ, ապա հարցերին լուծում տալը նրանց համար ավելի կդյուրանա:

11
ՄԵԾ ԵՂԵՌՆ
(հինգերորդ դասարանի համար)

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Տանտան»-ը

Հակոբ Օշականի այս պատմվածքը այստեղ բերված է կրճատված և պարզեցված տարբերակով: Պատմվածքն աշակերտին գաղափար է տալիս Մեծ եղեռնի մասին, որի միջոցով աշակերտը ծանոթանում է նաև այն իրողությանը, թե ինչպես է հնարավոր հզոր կամքով և հարատև ճիգով հաղթահարել դժվարությունները և աղետը վերապրել:

Այս պատմվածքում կարող են անհասկանալի բառեր լինել հետևյալները, որ ուսուցիչը կբացատրի նախքան դասը սկսելը. *խորհրդավոր, ակոս, ճաղատ, վայելք, կարավան, ժամկոչ, բրիչ, կոկոզել, գուրգուրոտ, հոսանք, բուրվառ, պէպէք:*

«ՏԱՆՏԱՆ»–Ը

Յակոբ Օշական

Տղեկ մը նստած է չորցած աւազանի մը կողքին, չորցած խոտերով ծածկուած պարտէզի մը մէջ...

Հազիւ հինգ տարեկան է: Տարօրինակ քաղցրութիւն մը ունի, աչքերը անուշութիւն թափող աղբիւր մը կը յիշեցնեն, բայց մազերու շնորհքը կը պակսի, գլուխը ածիլուած է:

Ձեռքին մէջ կոտրուած պուպրիկ մը ունի: Արեւին տակ նստած կ'աշխատի զայն կարգի բերել դերձանով եւ խոտերով: Աչքը տունին վրայ է: Վախով կը դիտէ խորհրդաւոր տունը:

Տղեկը հիւանդ պուպրիկը կը պառկեցնէ աւազանին ճիշդ եզերքը, գլխուն տակ դնելով փայտի կտոր մը ու վրան կը փռէ խոշոր կանաչ տերեւներով վերմակ մը, մտքէն խօսելով:

Աչքերը միշտ տունին՝ իբր թէ չգիտնալով, մատներով կամաց–կամաց կը հրէ պուպրիկը եւ կը ձգէ աւազանին խորը: Հիմա պէտք է աւազանին խորէն ազատէ պուպրիկը: Ասիկա իր մեծագոյն վայելքն է՝ իր պզտիկ հասակը պտտցնելը աւազանին մէջ... Կը նետուի վար: Պէպէքը կռնակին վրայէն կը դարձնէ ու, դպչելով յատակին, կ'երկննայ աւազանին մէջտեղը:

Ու պզտիկը մտքով իր գիւղն է հիմա:

Ան իրենց պարտէզին մէջ, իրենց աւազանին վրայ, թաթերը տուած դիզուող ջուրին՝ կը նայի հաճոյքով: Լայն ու բարի արեւ մը կայ: Կապոյտ ջուրին մէջ, տղուն անուշիկ դէմքը կը ծաղկի երազային նկարի մը պէս:

Պզտիկը իրենց պարտէզն է հիմա: Հայրը բրիչով առուին հոսանքը կը դարձնէ ակօսէ–ակօս, իսկ մայրը իրենց ծիրանիի օրրանէն կը կախէ պզտիկ եղբայրը՝ Թումասը:

Ան իր գիւղն է, իր տունը, ուրկէ կը հեռանան բոլորը...

Պզտիկը լեռն է շատերու հետ: Ան չի գտներ մայրը եւ կու լայ... Գիւղէն դուրս չելած արդէն տարած էին հայրը՝ ձեռքերը կապած:

Անիկա մտքով կը քալէ կարաւանին հետ, բոբիկ, գլխուն ճերմակ լաթով մը: Հետն են իր բոլոր քոյրերն ու եղբայրները:

Անոր անցած գիւղերէն, քաղաքներէն, ճամփաներէն ու ձորերէն օրէ–օր կը պակսին քոյրերն ու եղբայրները մէկիկ–մէկիկ:

Ան կը քալէ դեռ եւ բերնին թուքը կը ցամքի:

Ան չի գիտեր ամէնը: Բայց կը յիշէ, թէ ճամփուն վերջացած տեղը մնացին բոլորը... ա՛լ չքալելու համար:

Անկէ ետքը՝ մեռելներուն վախը, իր լացը, մաման չգտնելու համար:

Թուրք ծեր մարդ մը մեռելներու մէջէն տղեկը գտնելով, զինքը Պոլիս կը բերէ: Այդ տունին մէջ հաւաքուած տղաքը աւազանին մէջ, աչքերէ հեռու, մտքով

կը դառնան իրենց անցեալին եւ կ'ապրին իրենց մեռելները ու կը խաղան այն ընկերներուն հետ, որոնք չորցող ծաղիկներու պէս թափեցան երկար ճանապարհին վրայ:

Անոնք սարսափով կը նային ծառերուն մէջէն երեւցող պալատին՝ խորհրդաւոր տունին: Ու վախով կը սպասեն, որ հէքեաթներու ամենէն դաժան պառաւը, խռիւ մազերով, գայ ու քարանայ աւազանին եզերքը եւ տփէ բոլորին:

Ու հնգամեայ տղեկը, աչքերը խոշոր բացած, իր ուժերը հաւաքելով ճիգ մը ընելով, կը քալէ պարտէզին լայնքին ու երկայնքին ու անպատմելի ատելութեամբ, իր գիրկէն մէկդի կը նետէ պուպրիկը, յուսահատ արցունքով կը հետեւի իր սիրելիներուն ստուերին, մանաւանդ պճլիկ Թումասին, որ քալելու անկարող չորցաւ ճամփու տաքերէն եւ ձգուեցաւ ծառի մը շուքին, թիզ մը հողին տակ:

Կարօտի աչքերով կը չափէ պարտէզը բոլորող պարիսպին երկաթէ հսկայ դուռը, որ քիչ անգամ կը բացուի: Ան ամէն օր կ'երթայ երկաթէ դուռին մօտ, գիրկի պուպրիկը կը դնէ քարէ պատին, ու անոր կողքին երկարած՝ կը խօսի անոր հետ.

— Ինչ կայ երկաթէն անդին:

Ու ան կու լայ իր սրտէն ու կը կոկոզի դրան ոտքին:

Օր մըն ալ հսկայ դուռին մէկ թեւը կիսովին բաց էր...

Պզտիկը կրնայ գլուխը դուրս հանել անկէ... Նեղ անցք մըն է, որուն ծայրը չերեւար: Մէկէն դուրս կ'ելլէ ու վախէն վազելու կը սկսի:

Մութ փողոց մըն է, քանդուած քարերով: Բոլոր տները բանտերու կը նմանին փակ դռներով ու պատուհաններով:

Տղեկը կը վազէ: Աձիլուած գլուխով, բոբիկ սրունքներով եւ իր հագած կանաչ *ճիպէով*, մարմին մըն է, որ կ'անցնի փողոցէն:

Մէկէն ի մէկ պողոտայ մը կ'ելլէ:

Մարդոց շատութիւնը կը վանէ իր մէջ պալատին սարսափը: Շատ, շատ բան կը տեսնէ:

Մէկէն կը սարսռայ:

Մարդիկ մեծ թափորով մը բռնած են պողոտային բացուածքը: Անոնց առջեւէն խոշոր մեռելակառք մը ու անոր առջեւէն մարդիկ, խաչով ու բուրվառով:

Երկու թեւերը բանալով կը պոռայ, չկարենալով զսպել իր զարմանքը.

— Տէր պապա՜

* * *

Իր պզտիկ ճիչը կը խեղդուի քահանաներուն եղանակին մէջ: Կը կրկնէ՝ աւելի ուժով հանելով բառերը կոկորդէն... զինքը չեն լսեր ու ան կը վախնայ:

Երկու արցունք կ'իյնայ տղուն աչքերէն:

Առանց զատուելու պատէն, կ'երթայ ամբոխի ետեւէն: Կը դառնայ ուրիշ փողոց մը: Այս անգամ երկու եզերքի տուներու ոմանց դռներն ու պատուհանները բաց են եւ բաց դէմքերով կիներ ու աղջիկներ կ'երեւան:

Տղեկը կարծես թէ հասկցաւ քանի մը հնչումներ, որ իր տարիքի տղաքը, պատուհանէ պատուհան իրարու կը նետէին:

Բայց ուրախութենէն ոտքերը կտրուեցան, երբ հեռաւոր, բայց ուժգին զանգիւն մը լսեց: Տանտա՛նը, իրենց տանտանն էր:

Ու վայրկենապէս մտքով գնաց գիւղ: Իրենց տունը, որ եկեղեցիին ճիշդ կողքին էր: Իրենց ետեւի պատուհանէն կ'երեւնար գիւղին զանգակը, որ իրիկուն– առտու իր ձայնը կը թափէր իրենց վրայ: Ան խենթի պէս կը սիրէր իրենց զանգակը:

Որքան ատեն է չէր լսած զանգակ մը եւ քաջալերուած, հայացած, առաջ անցաւ, պատերուն եզերքը ձգելով, անցաւ թափորէն ալ ու տեսաւ մեծ դուռ մը, որուն վրայ սեւ մեծ խաչ մը կար: Մտաւ ներս ու բնազդաբար գտաւ ճամփան, որ զանգակատուն կը տանէր:

Ծեր ու ճաղատ գլուխով ժամկոչը սարսուռով եւ ատելութեամբ նկատեց տղան ու անոր թուրքի կանաչ *ճիպէն*:

— Սէն քի՛մ սէն, (դուն ո՞վ ես) հարցուց:

Տղեկը լուռ նայեցաւ իրեն: Տղուն ներկայութիւնը ժամկոչը մէկէն փոխադրեց իր երկիրը, որու մասին ահաւոր պատմութիւններ կը շրջէին:

— Հայտէ՛ չտես, քիլիսէ քափանաճախ (եկեղեցին պիտի գոցուի),— ըսաւ:

Տղան լուռ էր:

Տղեկը դուրս հանելու համար, վախնալով ձեռքերը դրաւ անոր կռնակին: Տղեկը մէկէն սկսաւ խոշոր–խոշոր լալ: Սակայն տեղէն չշարժեցաւ:

— Ծօ դուն սատանա՛յ ես, ի՞նչ ես,— ըսաւ:

— Ես հայ եմ:

Ժամկոչը քարացաւ: Լաւ մը ծռեցաւ ու չհաւատալով հարցուց.

— Դու խա՛յ ես:

— Հայ եմ:

Ժամկոչը գրկեց տղան: Քիչ մը լրտեսեց բակը, ուրկէ քաշուած էր բազմութիւնը ու վազեց քահանաներու սենեակը:

Մարդ չկար հոն: Տղեկը դրաւ մութ անկիւն մը եւ դուրս նայեցաւ մէկը փնտռելու ձեւով: Սեւ հագուստներով՝ երիտասարդ կին մը սենեակին առջեւէն անցաւ.

— Քուրի՛կ, քուրի՛կ, կանչեց ժամկոչը:

Կինը ներս նայեցաւ: Ժամկոչը խորհրդաւոր նշանով մը ներս կանչեց կինը ու անոնք խօսեցան՝ ցած:

Երիտասարդ կինը մոտեցաւ պզտիկին եւ գուրգուրոտ ձայնով հարցուց.

— Դուն հա՛յ ես, տղա՛ս:

— Հայ եմ:

— Ո՞վ բերաւ քեզի հոս:

— Տանտանը:

— Ո՞վ է Տանտանը, տղաս, հո՞ս է Տանտանը:

Տղան գլուխը վար շարժեց ու զանգակատունը ցոյց տուաւ.

— Հո՛ն է,— ըսաւ:

Կինը նայեցաւ եւ զանգակը տեսաւ:

— Զանգա՞կը:

— Տանտանը:

Կինը մէկէն հասկցաւ եւ անոր գլուխը իր կուրծքին վրայ առաւ եւ հա՛յ մօր մը պէս դրաւ շրթունքները անոր երեսներուն:

Եւ տղեկը գնաց սեւազգեստ կնկան հետ եւ անոր հետ ալ կորսուեցաւ քաղաքներէն ամենէն ահաւորին մէջ, որ այն օրերուն Պոլիս կը կոչուէր:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Տանտան»–ը

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել 1915 թ. տեղահանությունների (աքսորի) նեղություններն ու զրկանքները և «Տանտան»–ի փոքրիկ տղեկի օրինակով պիտի տեսնեն հարատև ճիգով վերապրելու կամքը: Ուսուցիչը բացատրում է. «Մենք այսօր պետք է կարդանք մի փոքրիկ տղայի մասին, որ շատ տխուր վիճակի մեջ է և պետք է շատ մեծ ու հարատև ճիգ ի գործ դնի, որ կարողանա վերապրել: Լավ լսեք պատմությունը և ուշադիր եղեք տղայի տարած բոլոր դժվարություններին և թե ինչ պատահեց նրան: Կարդալուց հետո մենք կքննարկենք պատմությունը»:

Նյութեր և միջոցներ: Գրատախտակ, թուղթ, գրքեր՝ ուր նկարագրված է անապատի մասին, աշխատանքի թերթիկ զանգակաձև կտրելու համար:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը մի զանգ է բերում դասարան և դնում մի տեղ, որ բոլորը տեսնեն: Աշակերտներին ասում է, որ մեր պատմության անունը «Տանտան» է և հարցնում է, թե ո՞վ գիտե, թե այդ բառը ի՞նչ է նշանակում: Պատասխանները գրում է գրատախտակին՝ ինչ էլ որ լինեն դրանք:

Աշակերտներին ասում է, թե երբ պատմությունը կարդան, բառի իմաստը կհասկանան և կիմանան, թե ո՞վ է ճիշտ պատասխանել: Ուսուցիչը զարկում է զանգը և հարցնում, թե դրա ձայնը ի՞նչ է հիշեցնում: Ինքը մի օրինակ տալուց հետո թողնում է, որ աշակերտները խոսեն:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին մտածել «հարատև ճիգ»–ի և «վերապրելու կամք»–ի մասին, երբ կարդացվում է պատմությունը:

Ուսուցիչը ներկայացնում է հեղինակին և տալիս է պետք եղած բացատրությունները.

Ուսուցիչը սկսում է կարդալ, բայց կանգ է առնում ամեն տեղ, երբ պատմության մեջ փոխվում է ժամանակը կամ միջավայրը և բացատրում է այդ փոփոխությունները՝ դյուրացնելու համար աշակերտների ըմբռնումը:

Բացատրում է, որ մի ծեր թուրք մեռածների միջից գտնում է տղային և Պոլիս տանելով նրան հանձնում է մի որբանոցի, որ թրքական կառավարությունն էր կազմակերպել, որպեսզի հայ որբերին հավաքեն այնտեղ, կրոնափոխ անեն

և որպես թուրք մեծացնեն նրանց: Ապա սկսում է քննարկումը հետևյալ հարցերի շուրջ.

– ինչ է տանտանը,
– ինչու է երեխան տանտան ասում դրան,
– ինչու է երեխան զանգակի ձայնի հետևից գնում,
– այդ զանգը ինչ է նրան հիշեցնում,
– ինչու է երեխան մենակ,
– եկեղեցում ինչ է կատարվում,
– ձեր կարծիքով՝ փոքրիկ տղային վերջում ինչ կպատահի,
– «Հարատև ճիգ» և «վերապրելու կամք» հասկացություններից որն է առնչվում այս պատմությանը: Ինչպես և ինչու:

Առիթ տվեք, որ բոլորը մասնակցեն քննարկումներին և եզրակացրեք, որ փոքրիկ տղան հարատև ճիգ գործադրեց և կարողացավ վերապրել:

Անհատական աշխատանք: Առիթ տվեք աշակերտներին մտածելու վերապրումի մասին և այս պատմության համար մի վերջաբան գրելու: Շարադրությունը պետք է սկսվի այնտեղից, երբ երեխան գնում է կնոջ հետ: Աշակերտները պետք է շարադրության մեջ անպայման հիշեն, թե երեխան ինչպես վերապրեց այդ վտանգավոր իրավիճակը.

Աշակերտները սրբագրված շարադրությունը կգրեն զանգակաձև թղթի վրա:

Հավելյալ աշխատանք: Աշակերտները մի նամակ են գրում այն կնոջը, որը երեխային իր հետ տարավ և պատմում են նրան, թե երեխան որքան է չարչարվել, բայց կարողացել է գոյատևել: Հարց են տալիս կնոջը, թե ապագայի ինչ ծրագրեր ունի և թե իրենք կարող են օգնել: Ուսուցիչը առիթ է տալիս աշակերտներին մտածելու, թե ինչ հատուկ մի ձայն, երգ, երաժշտություն, բանաստեղծություն կարող են հիշել իրենց շատ փոքրիկ ժամանակվանից՝ ինչպես տղան հիշում էր եկեղեցու զանգակի ձայնը: Իրենք ինչ են զգում երբ այդ հատուկ ձայնը, երգը, երաժշտությունը կամ բանաստեղծությունն են լսում: Հիշողությունն ուրախ է, թե՞ տխուր:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը արժևորում է, թե աշակերտը ինչպես է աշխատել խմբերում, ինչքանով է մասնակցել քննարկումներին:

Գրավոր և բանավոր արտահայտությունների վրա դատելով՝ որքանո՞վ է հասկացել նյութի մեջ տեղ գտած հասկացությունները:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Պզտիկ հերոսը»
(լրացուցիչ)

Այս թեմայի համար առաջարկվում է ևս մի հավելյալ նյութ՝ Արամ Հայկազի «Պզտիկ հերոսը», որ մեկ հատված է Շապին–Գարահիսարի հերոսամարտի նկարագրությունից առնված: Այս նյութի մեջ իհարկե շեշտված են կորստի ու քաջության, ինչպես նաև ազատության ձգտումի թեմաները: Նյութը ներկայացված է պարզեցված տարբերակով:

ՊԶՏԻԿ ՀԵՐՈՍԸ

Արամ Հայկազ

Այս դժուարին պահին էր, որ անակնկալ կերպով Բերդի դրան առջեւ մի ձեռնառումբ պայթեցաւ: Մետաղի ու քարի կտորներ անձրեւեցին չորս կողմ ու փոշին, վառօդի ծխին խառնուած, մէկ րոպէ մը վարագուրած պահեց հրապարակը: Թուրքերը, դուռը քանդելու աշխատանքը դադրեցուցած, ինքնապաշտպանութեան անցան: Այն ատեն, դրան վրայ դիրք գրաւողները իրենց ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացուցին դուրսէն եկողներուն վրայ ու չձգեցին անոնց մօտենալ: Մինչ այդ, ներսի թուրքերը կը կռուէին կատաղօրէն. գիտէին, որ եթե չկրնային Բերդին մուտքը բանալ իրենց դուրսի ընկերներուն դիմաց, ամէն բան վերջացած էր: Վերջացած էր իրենց կեանքն ալ: Անոնց թիւն այնքան մեծ էր, որ մերոնք չէին համարձակեր դիրքերէն դուրս գալ ու յարձակման անցնիլ: Կը ջանային, սակայն, զանոնք զբաղած պահել մինչեւ որ... մինչեւ որ... մինչեւ որ ինչ. մինչեւ ճրբ... մինչեւ որ հրաշքը պատահէր. մինչեւ որ հայուն Աստուածը անգամ մը եւս օգնութեան հասնէր... Եթէ թուրքերը պարիսպներէն դուրս կամ վարը ըլլային, թերեւս կիներ ու տղաք յաջողէին քարերով զանոնք ջախջախել, բայց ներկայիս այդ բանը անհնար էր: Թուրքերը գիտէին, թէ իրենց վրայ նետուած ձեռնառումբը հացթուխ կիներուն յատկացուած քարայրներէն եկած էր ու կը կրակէին անոնց վրայ ալ: Կիները գործը ձգած, կը հետեւէին կռուի ընթացքին: Անոնց քով միայն մէկ այր մարդ կար, Կարմիրեան Գարեգինը, որ իր տասնոցը քաշած՝ վերէն կը կռուէր: Եթէ միայն անոր քով քանի մը ձեռնառումբ ըլլար, գործը մեծապէս կը դիւրանար, բայց որո՛ւ միտքէն կանցնէր հացթուխ կիներու օճախներուն քով ռումբ ամբարել... Կիներն անգամ ըմբռնած էին այդ ու «պոմպա՛ մը, պոմպա՛ մը հասցուցէք» կը պոռային: Այդ պահուն, ոչ թէ մարդ, թռչուն իսկ չէր կրնար թեւ բանալ տեղէ տեղ, ալ ո՛ւր մնաց ծանր առարկան գրկած՝ քարերուն վրայէն բլուրն ի վեր վազելով՝ քարայրներուն հասնիլը: Բայց «պոմպա»–ի անոնց կոչը լսուած էր եւ հատ մը բերուած էր մինչեւ պատին ծայրը: Ո՞վ պիտի ըլլար ստոյգ մահը յանձն առնողը՝ զայն տեղ հասցնելու համար... Մէկ գնդակով վիրաւորուիլը կամ սպանուիլը գէշ բան էր, սարսափազդու. ռումբը ձեռքը գնդակներու կարկուտ մը դիմագրաւելը հարիւր կտորներու վերածուիլը, խենթի կամ հերոսի գործ էր:

Կիներ ու տղաք, աչքերը լայն բացած՝ հիմա կը նայէին այդ մահաբեր գործիքին ու չէին խօսեր, չէին շարժեր. մէկ մը կը նայէին ռումբին, մէկ մը ճամփին... Չէ՛, անկարելի էր... Գնդակները սուլելով կը զարնուէին քարերուն:

— Ես կը տանի՛մ,— ըսաւ յանկարծ պզտիկ ձայն մը: Հմայեակ Թէվէքելեանն էր, հազիւ տասնըչորս տարու տղայ մը: Զարմանքով, հիացումով իրեն նայեցան բոլորը:

Ամէն մարդու միտքէն, հաւանաբար, նոյն բանը անցաւ, բայց ո՛չ մէկը խօսեցաւ, ո՛չ մէկը բան մը ըսաւ:

Այն ատեն, Հմայեակ հանեց բաճկոնը, ծռեցաւ ու ճերմակ լաթի մէջ փաթաթուած ռումբը պլլեց իր բաճկոնին մէջ ու դրաւ թեւին տակ, ոտքի *եմենիները* հանեց–նետեց, խաչակնքեց ու թեթեւ մը առաջ ծռած՝ սլացաւ դէպի քարայրները: Շունչերնին բռնած, շնչելը մոռցած, բոլորը կը հետեւէին անոր շարժումներուն:

— Աստուածածի՛ն,— պաղատեցաւ կին մը,— Աստուածածի՛ն, պահէ՛ ատ տղան:

Հմայեակ կը սուրար գնդակներու տարափին տակ, ռումբը թեւին տակ սեղմած, ազատ թեւը լողացողի մը պէս ետ–առաջ շարժելով կը սուրար:

— Աչքերնին քէօռնայ, տղան կերա՛ն,— անիծեց կին մը եւ ուշաթափուեցաւ:

— Չէ՛, չէ՛, քարին ետեւ մտաւ հանգչելու,— ուրախ բացականչեց ուրիշ մը,— տեսայ ոտքերը ներս քաշեց...

Ո՞ւրեմն ետք, երբ պահիկ մը կրակը մեղմացած էր, ան դուրս եկաւ քարին ետեւէն ու նորից սուրաց դէպի քարայրը: Գնդակներու անձրեւ մը կը տեղար իր շուրջ, բայց ան մէկ աջ, մէկ ձախ հակելով՝ կը վազէր, կը սահէր, կ'իջնար, կ'ելլէր ու քարայրի ապահովութեան մէկ քայլ մնացած՝ թեւին տակի թանկագին ծրարը երկու ձեռքով առաջ երկարած՝ քիթն ու բերնին կ'իջնար վար ու կը մնար անշարժ: Կնոջ մը թեւը թանկագին ծրարը կ'առնէր ներս: Թուրքերու կրակը բզիկ–բզիկ կ'ընէր պզտիկ հերոսին անշնչացած մարմինը...

Վայրկեան մը ետք, քարայրներու վերէն վար նետուեցաւ Հմայեակի տարած ռումբը: Դժոխային որոտով մը ահեղ պայթեցաւ մահաբեր գործիքը: Քարերը դողացին ու արձագանգը քարերուն զարնուելով, քանի մը անգամ կրկնուեցաւ: Երբ ծուխն ու փոշին ցրուեցան, դրան առջեւ թուրք չէր մնացեր: Ճիշդ այդ պահուն, հրաշալի ու անսպասելի բան մը կը պատահի: Մերոնք ժամանակը հասած համարելով՝ դուրս կու գան դիրքերէն ու կ'անցնին յարձակողականի: Առջեւէն կը վազէ Երեմիա Բալուցեանը:

— Եկէ՛ք, տղա՛ք, մեռնիլ է նէ մէ՛կ անգամ պի՝ մեռնինք,— կը պոռայ աջ ու ձախ կրակելով ու կը վազէ առաջ: Անոր կը հետեւին բոլորը՝ զէնք ունեցողն ալ, չունեցողն ալ, մեծն ալ, պզտիկն ալ: Գինովցած են: Մահը ա՛լ սարսափ չունի իրենց համար: Անհաշիւ կը վազեն առաջ: «Մահ իմացեալ անմահութիւն է», «Զարկէ՛ք, զարկած ձեռքերնուդ ղուրպա՛ն», աղաղակներ, կանչեր, հառաչանքներ, օրհնութեան ու անէծքի խօսքեր, հեծեծանք...

Բերդը մաքրուեցաւ: Յաղթանակին լուրը տարածուեցաւ ամբողջ բերդին մէջ: Ամէն կողմէ երգի ձայն կը լսուէր.

Ուխտել ենք կռուել
Այդ սիրով մեռնել.
Համոզուած ենք, որ
Միայն զէնքով կայ
Հայուն փրկութիւն:

Մեր ուրախութեան աղմուկը թշնամիին հասաւ, մութն իջնելուն պէս քաշուեցաւ ետ, իր վէրքերը կապելու եւ թերեւս վաղուան կռիւին համար վերակազմուելու:

Անբացատրելի զգացումով մը լեցուած էր մեր հոգին այդ օրը:

Մահուան մօտ էինք եղած եւ զայն խաբած: Տասնըչորս տարու տղու մը հերոսութենէն ահաբեկ՝ պարտուեր էր մահը...

Ա՛լ ասկէ ետք որքան ապրէինք, շա՛հ էր:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Հեռավոր, բայց սրտակից բարեկամը»

«Հեռավոր, բայց սրտակից բարեկամը» պատմվածքը առիթ է Հայոց ցեղասպանության մասին գիտելիքներ փոխանցելու և հարմար՝ այդ հասկացողության մաս կազմող որոշ բացատրություններ տալու համար: Այստեղ կարևոր է նաև գթասրտության գաղափարը և ընդհանրապես ինչպես որոշ հայ որբեր ապաստան գտան արաբ ընտանիքներում:

«ՀԵՌԱՎՈՐ, ԲԱՅՑ ՍՐՏԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄԸ»

Աշոտ Տեր–Գրիգորյան

Զանգը հնչեց: Հովհաննեսը շարժվեց բազկաթոռի մեջ, որ վեր կենա՝ դուռը բացելու, սակայն նրա աշխույժ ու ժիր թոռնիկը կանխեց նրան:

— Պապի՛կ, դու հանգիստ նստիր, ես դուռը կբացեմ:

Քիչ հետո նա աղմուկով ետ եկավ՝ մի հաստ ծրար ձեռքին:

— Պապի՛կ, նամակ ունես. երևի հորեղբայրն է գրել. նկարներ էլ կան մեջը,— ասաց նա՝ ձեռքի մեջ շուռումուռ տալով ծրարը:

Պապի թույլտվությամբ Հովիկը բացեց ծրարը և զարմացած քարացավ տեղում, նամակը գրված էր անծանոթ լեզվով, իսկ ծրարից հանված նկարներից նայում էին միանգամայն անծանոթ, թուխ ու արևավառ դեմքեր:

— Սա մեր նամակը չէ, պապի՛կ, ես զուր բացեցի,— ասաց Հովիկը և շփոթված՝ նամակն ու նկարները մեկնեց պապին: Հովհաննեսը լուռ նայեց նկարներն ու մի պայծառ ժպիտ լուսավորեց կնճիռներով ակոսված նրա դեմքը:

— Օ՜, սա արաբ Ահմադն է, Հովի՛կ ջան, իմ ամենալավ ու ազնիվ բարեկամը: Ու կարծես դիմելով նկարից նայող մարդուն՝ շարունակեց.

— Իմ սիրելի՛, իմ ազնի՛վ, իմ լա՛վ բարեկամ, հեռավորությունն ու ժամանակը քեզ մոռանալ չտվեցին մեր բարեկամությունը: Դու նորից գտար ինձ, ինչպես այն ահեղ օրերին, երբ գտար ու պատսպարեցիր…

— Ոչինչ չեմ հասկանում, պապի՛կ, ո՞վ է Ահմադը և ինչպե՞ս է գտել քեզ…

— Սիրելի՛ Հովիկ, Ահմադը մի ազնիվ ու աշխատասեր արաբ է, սքանչելի այգեգործ: Նամակը կարդալուց հետո ես քեզ կպատմեմ մեր բարեկամության պատմությունը:

Հովհաննեսը սրտի դողով ու հարազատը գտածի անսահման հուզումով ձեռքն առավ նամակը և սկսեց կարդալ: Հանկարծ ծերունին փղձկաց, արցունքի կաթիլները դուրս հորդեցին նրա ծերունական աչքերից: Հովիկը զարմացած ու հուզված նայում էր պապին ու ոչինչ չէր հասկանում:

— Ի՞նչ պատահեց, պապի՛կ, ինչո՞ւ ես լաց լինում, ի՞նչ է գրված նամակում…

— Օ՜, սիրելի՛ Հովիկ, մահացել է իմ անգին բարեկամ Ահմադը, որը հոր պես խնամել է ինձ…

Պարզվեց, որ մեռնելուց առաջ Ահմադը որդիներին խնդրել ու պարտավորեցրել էր Սիրիայում բնակվող հայերից իմանալ իրենց բարեկամ Հովհաննեսի հասցեն, նամակ գրել նրան և շարունակել ու պահպանել այն լավ ու ազնիվ բարեկամությունը, որ նա սկսել էր Հովհաննեսի հետ տասնամյակներ առաջ: Եվ ահա նրա որդիները կատարել են հոր ցանկությունը: Այս դեպքից մի քանի օր հետո պապ ու թոռ նստած էին պատշգամբում՝ առավոտյան պայծառ արևի շողերով ողողված խաղողի որթատունկերի հովանու տակ: Ու պապը թոռնիկին պատմում էր անցած–գնացած մի պատմություն, որ կենդանի է հայրենադարձ ամեն մի ընտանիքում:

Դա 1915 թվականի Մեծ եղեռնի պատմությունն էր, որը երբեք չի մոռացվի, քանի կա հայը:

— Որդի՛ս, մեր աշխարհում, որպես հին հարևաններ, ապրում էին երկրի հին տերերը՝ հայերը, և նոր տերերը՝ եկվոր թուրքերը, որոնք բարբարոս էին ու անգութ: Նրանց ղեկավարները՝ Էնվերը, Թալեաթը, արյունարբու ու մարդատյաց մարդիկ էին: Մի օր հրաման արձակեցին՝ Թուրքիայում ապրող բոլոր հայերին ոչնչացնել: Հազարավոր թուրք զինվորներ զենք վերցրեցին իրենց դարավոր հարևանների՝ անզեն ու անպաշտպան հայերի դեմ: Հայրենի քաղաքներից ու գյուղերից տեղահան արեցին միլիոնավոր մարդկանց ու քշեցին դեպի Դեր–Զորի անապատը: Դեր–Զորի դժոխքից ես ու Մեսրոպը հրաշքով ազատվեցինք: Թե ինչպես եղավ, մենք մարդկանց քարավանից ետ մնացինք: Մի ավազաբլրի ետևը կծկված՝ նայում էինք հեռացող թափորին և ուրախանում էինք, որ կարող ենք հանգստանալ: Իհարկէ չէինք մտածում, որ քարավանի ետևից քարշ եկող շնագայլերն ու մյուս գազանները մեզ կարող էին հոշոտել, որ քաղցից ու ծարավից անխուսափելիորեն պետք է մեռնեինք: Թե ինչքան ժամանակ անցավ, չգիտեմ, մենք քնել էինք՝ հոգնածությունից, քաղցից ու ծարավից թուլացած:

Աղմուկից արթնանալով՝ տեսանք, թե ինչպես անծանոթ մարդիկ կողոպտում էին ճանապարհին ընկած կամ սպանված հայերին: Նրանք տեսան մեզ և իրենց հետ տարան: Երեկոյան հասանք մի փոքրիկ քաղաքի:

Անցնում էինք ծայրամասի այգիների մոտով: Մի այգեպան կանգնեցրեց, ինչ–որ բան խոսեց նրանց հետ և ապա փող տալով՝ մեզ գնեց նրանցից:

Քիչ հետո մենք նրա տնակում էինք: Ամենից առաջ նա մեզ ջուր տվեց, ապա առաջներս զամբյուղով միրգ դրեց: Նրա կինը՝ Զուլֆիան, իր որդիների պես սիրեց մեզ, լողացրեց, գուրգուրեց, մեղմացրեց մեր վիշտը և ընդունեց իր ընտանիքի մեջ: Անցան օրեր, թուրք մարդասպանները հեռացան արաբների երկրից: Պարզվեց, որ արաբները շատերին էին ապաստան տվել: Գտնվեցին նաև հեռավոր բարեկամներ ու ծանոթներ: Նրանք Ահմադի մոտից վերցրեցին Մեսրոպին, որը 7–8 տարեկան էր և հանձնեցին որբանոց: Իսկ ինձ, որ արդեն 11–12 տարեկան էի, խորհուրդ տվեցին մնալ նրա մոտ: Տարիներ առաջ, երբ մենք պատրաստվում էինք Հայաստան գալու, Ահմադը իր զավակներով մեզ ընկերացավ մինչև նավահանգիստ, սրտանց ուրախանալով, որ մենք հայրենիք ենք վերադառնում: Ճիշտ է , մենք հեռու էինք իրարից, բայց սրտով մոտ էինք ու հարազատ:

Ահա թե ինչու նրա մահվան լուրն այդքան մեծ վիշտ պատճառեց ինձ: Ես երեկ նամակ գրեցի նրա որդիներին, որ հիմա էլ դուք շարունակեք այդ մեծ բարեկամությունը: Թող հավերժ հաստատ մնա նեղ օրերին ստեղծված այդ ազնիվ բարեկամությունը:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Հեռավոր, բայց սրտակից բարեկամը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան ըմբռնել և նկատի առնել ուրիշների հանդեպ ցուցաբերած իրենց վերաբերմունքի ազդեցությունը: Պետք է անդրադառնան, որ ամեն ոք ընդունակ է անձնվեր գործի, որը կարող է դրական փոփոխություն բերել:

Նյութեր և միջոցներվ Գրատախտակ, թուղթ, աշխատանքի ծրագիր, զեկույցի թերթիկ և թերթեր կոլաժի համար:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչը գրատախտակին գրում է «անձնասեր» և «անձնուրաց» բառերը: Հարց է տալիս աշակերտներին, թե ինչ է նշանակում անձնասեր լինել և ժամանակ է տալիս նրանց՝ պատմելու իրենց փորձառությունը անձնասեր մեկի հետ՝ առանց անուն տալու: Ուսուցիչը հետո հարց է տալիս աշակերտներին, թե ինչ է նշանակում անձնուրաց լինել և ժամանակ է տալիս նրանց պատմելու իրենց փորձառությունը՝ անձնուրաց մեկի հետ: Քննարկումը սկսելու համար ուսուցիչը հարց է տալիս. «Արդյոք կարո՞ղ եք հիշել մի դեպք, երբ մեկը ձեզ մի բարություն արած լինի՝ առանց ձեզանից որևէ ակնկալիք ունենալու»: Ուսուցիչն ինքը մի օրինակ է բերում:

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը ներկայացնում է «Հեռավոր, բայց սրտակից բարեկամը» պատմությունը և հայտարարում, թե դա մի մարդու մասին է, որ մի շատ անձնուրաց գործ է կատարել:

Ուսուցիչը կարդում է, բայց կանգ է առնում և բացատրում անհասկանալի բառերը: Ապա սկսում է քննարկումը հետևյալ հարցերի շուրջ.

Ո՞վ էր մարդասեր կամ անձնուրացը այս պատմության մեջ:

Մարդիկ ի՞նչ ձևերով կարող են իրար հանդեպ մարդասեր լինել: Ահմադը ի՞նչ արեց, որ անձնուրաց էր: Ինչո՞ւ արեց Ձեր կարծիքով: Ահմադի համար դժվար չէ՞ր պատասխանատվություն վերցնել և փրկել Հովհաննեսին և նրա եղբորը:

Անհատական աշխատանք: Ուսուցիչն աշակերտներին խմբերի է բաժանում: Յուրաքանչյուր խումբ նախ ընտրում է մեկ աշխատանք/ծրագիր, որ օգտակար պետք է լինի մի խումբ մարդկանց կամ համայնքին: Կարելի է ծաղկի սերմեր ցանել և հետո բոլորը տեղափոխել հանրային մի վայր: Կարելի է բարի ցանկու-

թյունների բացիկներ գրել կամ զարդարանքներ սարքել և դրանք մի ծերանոցի (կամ մանկատան նման մի հաստատության) բնակիչներին ուղարկել: Կարելի է շնորհակալագրեր կամ գնահատագրեր պատրաստել և ուղարկել տեղի հրշեջ կայանին կամ ոստիկանատանը՝ իրենց կատարած լավ գործի համար: Յուրաքանչյուր խումբ պետք է մի գաղափար ընտրի և ուսուցչին ներկայացնի խմբի ծրագրի ուրվագիծ: Պայմանն այն է, որ խմբերը պետք է զոհեն իրենց ազատ ժամերը և աշխատեն ծրագիրը գլուխ բերելու համար:

Զեկույց աշխատանքի մասին

Խմբի անդամների անունները:
Բացատրություն խմբի ընտրած աշխատանքի մասին:
Ո՞վ օգտվեց ձեր խմբի աշխատանքից:
Արդյոք կարողացա՞ք ձեր ակնկալած արդյունքին հասնել:
Բացատրե՛ք ինչպես:

Հավելյալ աշխատանք: Աշակերտները հարցազրույց են վերցնում ընտանիքի մի անդամից, և նա պատմում է մի դեպք, երբ մեկը մի անձնուրաց գործ է արել: Աշակերտները հին թերթերի միջից կտրատում են բառեր, նախադասություններ և նկարներ, որոնք իրենց կարծիքով անձնուրացություն են խորհրդանշում: Ապա դրանք դասարան են բերում և մի մեծ ստվարաթղթի վրա կոլաժի ձևով իրար միացնում:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչն արժևորում է, թե աշակերտը որքանո՞վ է յուրացրել «անձնուրացություն» հասկացությունը, ինչպե՞ս է աշխատել խմբերում, ինչքանո՞վ է մասնակցել քննարկումներին, ի՞նչ որակ ունի իր կատարած աշխատանքը թե՛ անհատական և թե՛ խմբի մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Դերենիկը»

«Դերենիկը» բանաստեղծությունը ևս առիթ է Հայոց ցեղասպանության մասին գիտելիքներ փոխանցելու և հարմար՝ այդ հասկացողության մաս կազմող որոշ բացատրություններ տալու համար: Բանաստեղծության գլխավոր թեման վրեժխնդրությունն է, բայց դասածրագրում շեշտը դրված է մարդու իրավունքների պաշտպանության վրա և առիթ է տալիս աշակերտին իր իրավունքների կամ իր ժողովրդի իրավունքների պաշտպանության համար պայքարի միջոցներ խորհելու, առիթ է մանավանդ ուսուցչի համար՝ հայ ժողովրդի զինյալ և խաղաղ/քաղաքական պայքարի ձևերը համեմատության դնելու և աշակերտի միտքը այդ ուղղությամբ ևս զարգացնելու:

ԴԵՐԵՆԻԿԸ

Դանիէլ Վարուժան

Դուռը կը բացուի.— Դերենիկն ահով
Իբրեւ թէ այծեամ մ'ըլլար նետահար,
Մօրը թեւերուն մէջ կ'իյնայ լալով:
— Ի՞նչ ունիս, տի՛ղաս... ըսէ՛ շուտ... մի՛ լար.
Օ՞ձը քեզ խածաւ, թէ աքացեց ձի՛ն.
— Գլուխս պատռեց դըրացի Ալին...

Եւ ան ցոյց կու տայ սեւ գանգուրներուն
Ներքեւ վէրք մը ուրկէ սրբելով արիւնն,
Հայ գլխիկն այդ, թո՛ւրք ոխով կը թրջէ:
Քաջ մօրն հոգւոյն մէջ վիհեր կը բացուին
Լեցուած ամօթով.— գըգուիլ կրթի՛չ է
Սըրտի վրայ՝ յաղթուած ճակատն երկչոտին:

Պահ մը իր գութին խուլ՝ կը մղէ ի բաց
Կուրծքէն, գըլուխն այդ փոքրիկ վատին.
Եւ կը գոռայ.— Դո՛ւրս... մինչեւ որ յաղթած՝
Արիւններդ անոր արեամբ չմաքրին՝
Այսօր տուն չես գար: Մատնիչ խնամքներուս,
Միթէ վարսակի հացո՞վ սընար... դո՛ւրս:

Տղան, ամօթէն շիկնած կ'առարկէ.
— Բայց, մայրի՛կ, Ալին թուրքի զաւակ է.
Աչքին մէջ հեռ կայ եւ մէջքը փալա:
— Իսկ դուն ալ Հա՛յ ես, եւ մէջքըդ ըլլայ
Թող մըկրատս, իլս, ինչ որ կ'ուզես... դո՛ւրս:

Դերենիկն այսպէս գետին նայելով
Կը մեկնի անձայն... Հոն ծառի մը քով
Զինքը կը տեսնեմ լոյսով լուսնակի.
Մեծ քար մը ձեռքին, ջլաձիգ, դալկահար.
(Մինչ արիւնն այտէն վար կը կայլակի)
Թշնամոյն շեմին կը սպասէ, երկա՛ր...

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Դերենիկը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Դանիել Վարուժանի «Դերենիկը» կարդալով՝ աշակերտներն առիթ պետք է ունենան ուսումնասիրելու և գտնելու անձնական իրավունքները պաշտպանելու տարբեր եղանակներ:

Նյութեր և միջոցներ: Գրատախտակ, թուղթ:

Հետաքրքրություն ստեղծելու համար: Ուսուցիչն առիթ է տալիս աշակերտներին քննարկելու «անձնական իրավունքներ» հասկացությունը համայնքի մեջ:

Աշակերտները կարծիք են հայտնում, թե որո՞նք են մարդու հիմնական կամ տարրական իրավունքները համայնքում:

Աշակերտները պատճառաբանում են, թե ինչո՞ւ է կարևոր, որ այս իրավունքները պաշտպանված լինեն:

Ուսուցիչը գրատախտակին գրում է այդ իրավունքները:

Այս իրավունքները կարող են լինել՝

– Խոսքի ազատության իրավունք
– Կրոնի ազատության իրավունք
– Հավասարության իրավունք
– Արդարության իրավունք
– Ձայնի/քվեի իրավունք

Դասավանդման հերթականություն: Ուսուցիչը մեկ անգամ կարդում է «Դերենիկը». հետո երկրորդ անգամ է կարդում, բայց կանգ է առնում յուրաքանչյուր տնից հետո և աշակերտների հետ քննարկում է այդ տան իմաստը և միաժամանակ բացատրում անհասկանալի բառերը:

Ապա աշակերտներն առանձին թղթերի վրա ամփոփում են բանաստեղծությունը և գրում, թե դա ինչ է ուզում ասել:

Մի քանի աշակերտներ իրենց գրածը կարդում են դասարանի առջև: Աշակերտները քննարկում են գտնելու այլ միջոցներ, որոնցով Դերենիկը կարող է իր իրավունքները պաշտպանել (բացի իր մոր զգացական կերպով մատնանշած վրեժի եղանակից). սա առիթ կտա ուսուցչին՝ աշակերտներին բացատրելու «Հայկական դատի մասին» (զինյալ և խաղաղ պայքար):

Ուսուցիչը աշակերտների առաջարկած միջոցները գրում է գրատախտակին:

Անհատական աշխատանք: Ուսուցիչը խմբերի է բաժանում աշակերտներին: Յուրաքանչյուր խումբ հանձնարարում է աշակերտների մատնանշած մեկ եղանակը, որով Դերենիկը կարող էր իրեն պաշտպանել:

Խումբը մի կարճ սցենար է գրում և բեմադրում է Դերենիկի դեմ կատարվածը և թե Դերենիկն ինչպես պաշտպանեց իր իրավունքները:

Հավելյալ աշխատանք: Աշակերտները գրավոր տալիս են մարդու իրավունքների բնութագրումը և այս իրավունքների համար օրինակներ են բերում: Գրում են նաև, թե եթե իրենց իրավունքները ոտնատակ լինի, իրենք ինչպե՞ս կվարվեն:

Զեկույց աշխատանքի մասին

Անուն:

Բացատրի՛ր, թե ի՞նչ են մարդու իրավունքները:

Այս իրավունքներից օրինակներ հիշի՛ր:

Դու ի՞նչ կզգայիր և ինչպե՞ս կհակազդեիր, եթե մեկը քո իրավունքները բռնադատեր:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը արժևորում է, թե աշակերտը որքանով է յուրացրել «Մարդու իրավունքներ» հասկացությունը՝ դատելով քննարկումներին նրա մասնակցությունից, սցենարների մեջ դերակատարությունից և գրավոր աշխատանքից:

ՄԱՍ 2

ՆԱԽԱԲԱՆ

Խոսք՝ ուսուցիչներին

Այս ձեռնարկի առաջին մասում փորձեցինք փոխանցել այն գիտելիքները, որոնցով աշակերտները կարողանային ըմբռնել մեր ժողովրդի դեմ կատարված և պատմական անկյունադարձ հանդիսացող աղետը՝ Հայոց ցեղասպանությունը՝ միշտ մնալով տարիքային լեզվաիմացության և հասկացողության մակարդակի սահմաններում:

Փորձեցինք օգնել ծնողներին և ուսուցիչներին պատասխանելու փոքր տարիքից մեր երեխաների մտքում ծագած հարցումներին՝ ինչ պատահեց, ինչու՞ պատահեց, ինչպե՞ս պատահեց, քանի որ հստակ է, թե այսպես կամ այնպես նրանք առնչվում են մեր պատմության այս սև էջին և նրա պարփակած տխուր և արյունալի տեսարաններին:

Հավակնում ենք ենթադրել, որ գտել ենք հավասարակշռված և երեխայի տարիքի ու հոգեբանության հարմար փոխանցումը՝ առանց վախ ու տագնապ պատճառելու, առանց վտանգելու երեխայի մեջ ձևավորվող առողջ հոգին:

Ձեռնարկի այս երկրորդ մասում մեր աշակերտները պատրաստ են դարձյալ իրենց տարիքի և մտավոր կարողությունների համաձայն աստիճանական խորությամբ ընկալելու նյութը, որ իր մատուցման հատուկ մեթոդաբանությամբ՝

ա) Զոհի հոգեբանություն և փոքր ու խեղճ ազգի զգացողություն չի ներշնչում:

բ) Հեռու է ստորադասության բարդույթից ու աղերսական խնդրարկուի հոգեվիճակից:

գ) Մի ամբողջ ժողովրդի դեմ ատելություն չի սերմանում:

դ) Այլ՝ հետապնդված նպատակը հայ նոր սերնդի դաստիարակությունն է հենց դպրոցական նստարաններից՝ փոխանցումը այն գիտակցության, որ ինչպես ՄԱՍ 1–ում հիշվեց, ***«Մեր ժողովրդի դեմ հսկայական անարդարություն է կատարվել, և այդ անարդարությունը՝ համաշխարհային իմաստով անմարդկային ոճիրը, աշխարհին ճանաչել տալու և մեր արդար դատը խլելու համար պետք է պայքարենք ազգովի, փոքրից մեծ...»***

Ռ. Փ.

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Այս դասարանում աշակերտն արդեն պատրաստ է Հայոց ցեղասպանության պատմության մասին իրազեկվելու: Այնուամենայնիվ, նյութը լավագույնս ըմբռնելու համար, այստեղ բերված է բուն գիտելիքի նախաբանը հանդիսացող, «Հայ ժողովուրդը ազատագրման հույսով պայքարի է դիմում» վերնագրով մի դասանյութ, որ համառոտ կերպով բացատրում է, թե ինչ պայմաններում գործադրվեց ցեղասպանություն ոճիրը, և որ հայերի ջարդն ու կոտորածը 1915 թ. չսկսվեց: 1915 թ. ջարդերն ու տեղահանությունը գագաթնակետն էին դեռևս 1894 – 96 թթ. սկսված ջարդերի: Դրանք թուրք իշխանությունների նպատակադրած և գործադրած վերջնական լուծումն էին Հայկական հարցի: Դասածրագիրը կազմված է այս նյութերի հիման վրա:

Այս դասանյութում համառոտ խոսվում է ֆիդայական շարժման մասին: Նաև ներառված է Անդրանիկին նվիրված մի երգ, որ 1904 թ. Սասունի ապստամբությունն է հիշատակում: Քաջալերելի է, որ դասարանը սովորի այս երգը և գաղափար կազմի 1904 թ. Սասունի հերոսամարտի մասին: Ուսուցիչը կարող է հանձնարարել աշակերտներին՝ «Հայկական հարց» հանրագիտարանում կարդալ «Սասունի ապստամբություն 1904 թ.» հոդվածը (էջ 402–403) և դեպքը նկարագրող կարճ շարադրություն գրել:

Որպես հավելյալ ընթերցանություն, նկատի է առնված Ավետիս Ահարոնյանի «Հազրեն», որ մի դրվագ է հայ ժողովրդի ազատագրական պայքարից և հենց Անդրանիկին է առնչվում: Ըստ ուսուցչի հայեցողության նյութը կարող է ընթերցվել իբրև անհատական աշխատանք կամ դասարանում, այսպես կոչված, «Popcorn» (այս բառը հայերենի մեջ ադիբուդի ենք ասում) մեթոդով: Տեսնենք, թե ինչու է մեթոդը այս անունով կոչվում: Այսպես՝ ուսուցիչը սկսում է կարդալ նյութը, մի քանի տող կարդալուց հետո մի աշակերտի անուն է կանչում, և աշակերտը շարունակում է կարդալ, ապա աշակերտը մի այլ աշակերտի անուն է տալիս, և այդ աշակերտը պետք է շարունակի, այսպես՝ մինչև ընթերցման ավարտը: Այս մեթոդը օգնում է դասարանին՝ արթուն և աշխույժ մնալ: Կարելի է նաև դասարանը խմբերի բաժանել և յուրաքանչյուրին հանձնարարել պատմությունից մի մասը կարդալ և զեկուցել դասարանին: Այսպիսով՝ մյուս խմբերին առիթ կտրվի հարցումներով լրացնելու պատմության ընդհա-

նուր ըմբռնումը: Նախընտրելի է, որ ուսուցիչը որոշ բացատրություններ տա Ավետիս Ահարոնյանի (1866–1948 թթ.) և հատկապես նրա «Ազատության ճանապարհին» պատմվածքների ժողովածուի մասին, քաջալերի՝ գիրքը գտնել և ընթերցել: Այդ պատմվածքները լավագույն արտահայտությունն են 1890–ական թվականների Օսմանյան կայսրության մեջ հայերի դեմ իրագործվող հալածանքների և բռնարարքների: Դրանք նաև ցույց են տալիս հայերի, մանավանդ՝ հայ գյուղացու մտածելակերպը և տարբերվող կարծիքները հայ ազատագրական պայքարի մասին:

Մաս 2–ում առաջադրված դասանյութերում օգտագործված քարտեզները վերցված են ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքէջի *dasagirq.am* հասցեում «Հայրենագիտական գրականություն» բաժնում տեղադրված «Հայոց ցեղասպանություն» Մաս Բ էլեկտրոնային ձեռնարկից:

12
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀՈՒՅՍՈՎ ՊԱՅՔԱՐԻ Է ԴԻՄՈՒՄ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Հայ ժողովուրդը ազատագրման հույսով պայքարի է դիմում»

Երբ մի ժողովուրդ անարդարության է ենթարկվում, երբ նրա իրավունքները ոտնակոխ են լինում, երբ խլում են նրա հայրենիքը և նրան մարդկային իրավունքներից զրկում, ստրուկ, հպատակ են դարձնում, այդ ժողովուրդը վերջապես մի օր ուժ է գտնում և իր իրավունքներին տիրանալու համար պայքարի է դիմում:

Ինչպես սովորել ենք, XI դարում Հայաստանում Բագրատունիների իշխանության անկումից հետո և XIV դարում Կիլիկյան թագավորության կործանումից հետո հայերը կորցրին իրենց անկախությունը և սելջուկների, մոնղոլների և վերջապես օսմանցի թուրքերի տիրապետության ենթակա դարձան:

Օսմանյան սուլթանները ճնշեցին հայերին, նրանց հետ վարվեցին իբրև ստրուկ, որ ինքն իրեն պաշտպանելու իրավունք չուներ: Հայ գյուղացին ամենից վատ վիճակին էր ենթարկված: Թուրքն ու քուրդը նրա ունեցվածքը, զավակին, գեղեցիկ աղջկան խլում էր, տանում, և ինքը զենք վերցնելու ու պաշտպանվելու իրավունք չուներ:

Այս իրավիճակը տևեց մինչև XIX դար: Այդ ժամանակ Եվրոպայում առաջատար մտավորականները մարդու լավ ապրելու, ազատ ապրելու գաղափարներ էին քարոզում: Գրքեր էին հրատարակում, ժողովուրդներին ազատության պայքարի էին մղում: Այդ գաղափարներն ազդեցին նաև հայ մտավորականների վրա: Խաչատուր Աբովյանը, Ռաֆֆին, Միքայել Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը, Ստեփանոս Նազարյանցը և ուրիշներ հայրենասիրական վեպեր ու բանաստեղծություններ գրեցին, ազատություն գովեցին, հայ գյուղացուն ինքն իրեն պաշտպանելու մղեցին:

Կազմվեցին կուսակցություններ, որոնք պայքարում էին հայ ժողովրդի արդար իրավունքների համար. մի կողմից՝ սուլթանին դիմումներ էին հղում և եվրոպական պետությունների օգնությունն ու միջամտությունը խնդրում, մյուս կողմից՝ կռվող խմբեր էին կազմում և գյուղից գյուղ պտտելով՝ հայ գյուղացուն թուրքի ու քուրդի ոտնձգությունների դեմ էին պաշտպանում: Այդ խմբերում զենք առած կռվում էին երիտասարդ հայրենասերներ, որոնց ֆիդայի կամ հայդուկ էին կոչում, այսինքն՝ մեկը, որ իր կյանքը կարող է զոհել իր ժողովրդին պաշտպանելու համար:

ՖԻԴԱՅԻՆԵՐԻ ՔԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շատ մեծ է թիվն այն երիտասարդների, որոնք տուն ու ընտանիք թողած, ֆիդայի դարձան, հրացան վերցրին, լեռները բարձրացան, խմբեր կազմեցին և հայ գյուղացու իրավունքների համար թուրքերի և քուրդերի դեմ կռվեցին:

Ֆիդային գիտեր, որ իրեն մահ է սպասում, բայց քաջ էր, կռվում էր հարյուրի ու հազարի դեմ: Շատ են անունները ֆիդայիների, որոնք վտանգավոր կռիվների մասնակցեցին ու հաղթեցին: Ժողովուրդը նրանց համար երգեր հորինեց: Այդ ֆիդայիներից էր Անդրանիկը, որին շատ երգեր են նվիրված, մեկն էլ 1904 թ. Սասունի պաշտպանության մեջ իր քաջագործության և առաջնորդողի դերի համար:

ԱՆԴՐԱՆԻԿ (ՕԶԱՆԵԱՆ)

Երգն այսպես է. (երգը տես համացանցում)

Դարձյալ փայլեց Սասնա գլխին,
Ազատության դրոշակ,
Կեցցե՜ հայրենիք գոչելով
Բարձացրեցին աղաղակ:

Թընդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական,
Խումբ–խումբ կը գան հայ զավակներ
Հայրենիքի օգնության:

Գուրգեն, Վահան, Հրայր–Դժոխք,
Քաջ Անդրանիկ զորավար,
Տալվորիկի լեռներումը
Շրջում էին անդադար:

Սարսափեցին քուրդ ցեղերը,
Մինչ պալատը Սուլթանի,
Հրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկների:

Ահա անգութ մեր թշնամին,
Սարսափելի տեսարան.
«Ժամանակն է, վրեժ լուծել»
Գոչեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց հայ քաջերի
Բնակավայր դիրքերից,
Կոտորվեցին թշնամիներ,
Ահռելի գնդակներից:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ԵՎ ԿՈՏՈՐԱԾ

Սուլթան Համիդն անտեսեց հայերի և եվրոպական պետությունների կողմից կատարված դիմումները. հայ ժողովրդի կյանքը դյուրացնելու և ապահով դարձնելու փոխարեն, որոշեց ավելի ճնշել ու պատժել նրանց:

Ջարդերը սկսվեցին 1894 թ. Սասունից և տարածվեցին ամբողջ կայսրության մեջ: Ծանր ջարդեր տեղի ունեցան Սասունի, Տրապիզոնի, Սվազի, Երզնկայի,

Բայբուրթի, Խարբերդի, Դիարբեքիրի, Ուրֆայի, Զեյթունի, Այնթաբի, Մարաշի, Բիթլիսի, Էրզրումի շրջաններում:

Ասվում է, թե 1894–96 թվականների ջարդերին շուրջ 300,000 հայեր կոտորվեցին: Բռնի իսլամացան 100,000: Երկրից դուրս գաղթեցին մեծ թվով ընտանիքներ: Ավերվեցին շուրջ 2500 գյուղեր:

Սուլթան Համիդը, որին եվրոպացիներն այդ ջարդերի պատճառով Կարմիր սուլթան կամ Արյունոտ սուլթան կոչեցին, կարողացավ հայերի թիվը կայսրության մեջ զգալի չափով նվազեցնել:

Մի քանի վայրերում՝ ինչպես Զեյթունում և Վանում հայերը ինքնապաշտպանության դիմեցին և փրկվեցին: Ջարդերից հետո էլ հայերը մի քանի վրեժխնդրական գործողություններ կազմակերպեցին:

Այնուամենայնիվ, հալածանքները շարունակվեցին:

Կառավարությունը ձերբակալում և կախաղան էր հանում հայ մտավորականներին ու գործիչներին, որոնք սուլթանի դեմ էին խոսում կամ հայ ժողովրդի ազատության համար էին պայքարում: Իսկ հայ գյուղացին նույնչափ թալանի և անարդարության էր ենթարկվում:

1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Սուլթանից դժգոհ էին նաև թուրքերը: «Երիտասարդ թուրքեր» (Երիտթուրք, կամ՝ Իթթիհադ վէ Թերեքքը) կոչված խմբակցությունը 1908 թ. կարողացավ թուրք բանակին ևս սուլթանի դեմ հանել և պարտադրել նրան, որ կայսրության մեջ սահմանադրական օրենքներ հաստատի: Երիտասարդ թուրքերը խոստանում էին հավասարություն և արդարություն բոլորին:

Սակայն կարճ ժամանակում փաստվեց, որ նրանք հայերին չեն պաշտպանելու: Ադանայի և շրջակա գյուղերի ու քաղաքների ջարդը 1909 թ. ապրիլին փաստում էր դա:

Հետագա իրադարձություններն էլ ավելի բացահայտեցին հայերի դեմ ունեցած նրանց տրամադրությունը, որ պետք է ավելի սրվեր ու ցեղասպանության հասներ՝ 1915 թ.: Նրանք ցանկանում էին, որ Թուրքիան թուրքերինը լինի միայն, նաև նպատակ ունեին ընդարձակվել և Կենտրոնական Ասիայի թուրք ցեղերին հասնել. իսկ Հայաստանն ու հայությունը խոչընդոտներ էին, որ պետք է վերացվեին:

13
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — Հայոց ցեղասպանության պատմությունից

Սուլթան Համիդը գահընկեց էր եղել:

Սկսվել էր Առաջին աշխարհամարտը և Օսմանյան պետությունը Գերմանիայի կողքին պատերազմի մեջ էր մտել:

Քրիստոնյա ռուսի դեմ կռվելու և միևնույն ժամանակ հայերին բնաջնջելու համար պետությունը կայսրության ժողովուրդների ամբողջական գործակցության պետք ուներ: Իսկ հետադեմ ու կրոնամոլ թուրք և քուրդ զանգվածներին դրդելու ամենալավ միջոցը նրանց կրոնական զգացմունքները և թալանի (կողոպուտ) ախորժակը գրգռելն էր:

Ուստի և 1914 թվականի նոյեմբերի 21–ին քրիստոնյա թշնամիների դեմ «Սրբազան պատերազմ» (Ջիհադ) հայտարարվեց:

Հայերին բնաջնջելու որոշումը տրված էր: Երկրի իշխանության գլուխ անցած երիտթուրք կուսակցության ղեկավարները՝ Էնվեր, Ջեմալ և Թալեաթ, որոշել էին վերջ դնել հայերի գոյությանը Օսմանյան կայսրության մեջ և համաշխարհային պատերազմը լավ առիթ էր այդ որոշումը իրագործելու համար:

Հայերի ջարդը գաղտնի պահելու համար հրամաններն ուղարկվում էին կամ բանավոր, կամ ծածկագիր հեռագրերով և թելադրվում էր կարդալուց հետո ոչնչացնել:

Այսպես, 1915 թ. մարտից մինչև հոկտեմբեր զանազան վայրերում գաղտնի հրամաններ էին ստացվում՝ հայերին ջարդելու կամ տեղահանելու վերաբերյալ: Բայց թուրք կառավարությունը պատերազմից հետո ոչնչացրեց գրեթե բոլոր փաստաթղթերը, աշխարհի առջև փակեց իր արխիվները, ուր դեռ հնարավոր պետք է լիներ այդ ահավոր ոճրին վերաբերող գրություններ գտնել:

Եղեռնից տասնամյակներ հետո՝ 1990 թվականին, թուրք կառավարությունը արդարանալու նպատակով հայտարարեց, թե բացել է պետական արխիվները: Որքանո՞վ կարելի է վստահել այդ արխիվներին: Արդյո՞ք այդ արխիվներում «ճշմարտությունը» դեռ մնացե՞լ է:

Դարձյալ հայերի ջարդը գաղտնի պահելու համար հազիվ պատերազմը սկսած օտարազգիների ճամփորդությունը կայսրության մեջ արգելվեց, իսկ երկրից դուրս ուղարկվող գրություններն ու տեղեկությունները՝ նույնիսկ դեսպանատ-

ներից ուղարկվածները խիստ գրաքննության էին ենթարկվում: Նպատակն այն էր, որ եվրոպական պետությունները, իրենք էլ պատերազմով տարված, չտեսնեին կատարվածը և չկարողանային բողոքել կամ միջամտել:

Երևակայե՛ք, որ եթե այսօր, աշխարհի որևէ հեռավոր վայրում որևէ դեպք, պատերազմ, երկրաշարժ կամ հեղեղ պատահի, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության բազմաթիվ թղթակիցներ այդ վայր կշտապեն՝ այդ մասին ամբողջ աշխարհին տեղյակ պահելու և լուր հաղորդելու համար: 1915 թ., հաղորդակցության միակ միջոցները թերթերը և հեռագիրն էին, որոնք խիստ հսկողության տակ էին գտնվում: Այսպես, հազարավոր հայեր կոտորվում էին, իրենց տներից դուրս հանվում ու դեպի անապատներն էին քշվում, բայց աշխարհը կատարվածի ահագնության մասին հազիվ էր լուր ստանում: Իսկ գաղտնի կերպով երկրից հաղորդված լուրերը չէին կարող ամբողջ իրականությունը ցույց տալ: Բայց եկեք մի պահ մտածենք, որ եթե նույնիսկ աշխարհն իմանար, որ հայերը բնաջնջվում են, հնարավոր կլինե՞ր, կամ փորձ կկատարվե՞ր կասեցնելու ոճիրը:

1915 թ. սեպտեմբերին, երբ արդեն տեղահանությունը իրագործվել էր և տեղահանվածներից շատերը աքսորի ճամփին կոտորվել էին ու նրանցից միայն քիչ թվով վերապրողներ Հալեպ էին հասել, գործի վերջնական հաջողությունը ապահովելու համար ներքին գործոց նախարար՝ Թալեաթ փաշան հեռագիր է ուղարկում Հալեպի կուսակալին: Հեռագիրը տեղեկացնում էր, որ կառավարությունը ջնջել է կայսրության մեջ հայերի ապրելու և աշխատելու իրավունքը: Նաև հրահանգում էր ոչնչացնել տեղահանության կենտրոն՝ Հալեպ հասած մնացորդացին և, ամբողջ պատասխանատվությունը իր վրա վերցնելով, հրահանգում էր երեխաներին նույնիսկ չխնայել: Թալեաթը դժգոհություն էր հայտնում, որ հակառակ ուղարկված հրամանագրին՝ Հալեպ հասած գաղթականներին անմիջապես բնաջնջման կայանները չէին ուղարկել:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Հայ ժողովուրդը ազատագրման հույսով Պայքարի է դիմում»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտի մտավոր պատրաստության համաձայն և տարիքային պատշաճությամբ սովորեցնել Հայոց ցեղասպանության և նրա նախադեպերի մասին, այսինքն՝ 1894–96 թթ. դեպքերից մինչև 1915 թվականը: Աշակերտները պետք է կարողանան գաղափար կազմել, թե ինչ է նշանակում ֆիդայական շարժում, պետք է կարողանան ճանաչել մի քանի ֆիդայիների:

Նյութեր

1. Դասանյութը բազմացնել և բաժանել աշակերտներին:
2. Անդրանիկի երգի հնչեցում կամ կատարում դասարանում:
3. Ավետիս Ահարոնյանի «Հազրեն»:
4. Քարտեզ, որ ցույց է տալիս Օսմանյան կայսրության մեջ այն քաղաքները՝ ուր 1894–96 թթ. ծանր ջարդեր տեղի ունեցան: Քարտեզը կարելի է ներբեռնել *http://www.dasagirq.am* «Հայոց Ցեղասպանություն», Մաս 2, էջ 26–ից:
5. Քարտեզ, որ ցույց է տալիս Օսմանյան կայսրության մեջ այն վայրերը՝ ուր 1894–96 թթ. ջարդերի ընթացքում կամ հետո վրիժառական, ֆիդայական գործողություններ կատարվեցին:
6. Քարտեզ, որ Մեծ եղեռնն է ցույց տալիս: Քարտեզը կարելի է ներբեռնել *http://www.dasagirq.am* «Հայոց Ցեղասպանություն», Մաս 2, էջ 32–ից:

Քաջալերանք, մղում: Ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչ գիտեն Մեծ եղեռնի մասին, լսել են ապրիլ 24–ի ոգեկոչումների մասին, երբևէ այցելել են Եղեռնի որևէ հուշակոթող: Ուսուցիչը հարց է տալիս, թե ինչու է կարևոր, որ աշակերտներն իմանան անցյալում հայերի դեմ կատարված ոճրի մասին և թե ինչ հետևանք է ունեցել և դեռ ունի այդ անցյալը հայ ժողովրդի կյանքում:

Դասավանդման հաջորդականություն

ա. Աշակերտները կարդում են տրված նյութը (նախընտրաբար դասարանում՝ popcorn մեթոդով. այսինքն՝ ուսուցիչը կարդում է մի երկու տող. ապա՝ կանչում է մի աշակերտի անուն. աշակերտը շարունակում է ընթերցումը. հետո աշակերտը կանչում է մի այլ աշակերտի անուն շարունակելու և այսպես մինչև վերջ):

բ. Ուսուցիչը բացատրություն է տալիս՝ եթե չլուսաբանված կետեր կան, քարտեզի վրա ցույց է տալիս այն քաղաքները, ուր 1894–96 թթ. ծանր ջարդեր տեղի ունեցան և բացատրում, որ քարտեզում միայն քաղաքներ են նշված, դրանց շրջապատի գյուղերը ջարդի ենթարկվեցին և ավերվեցին: Նկատել է տալիս, թե որքան տարածված էր ջարդը բոլոր այն վայրերում ուր հայ բնակչություն կար: Ապա՝ դարձյալ *http://www.dasagirq.am*–ի էջ 27–ից ներբեռնած քարտեզով ցույց է տալիս այն վայրերը ուր հայը վրիժառու կամ ինքնապաշտպանական գործողությունների դիմեց: Ուսուցիչը ցույց է տալիս նաև Մեծ եղեռնի քարտեզը և բացատրում, որ զանազան վայրերի շուրջ տարբեր չափի շրջանակներ են գծված: Այդ շրջանակների չափերը համապատասխանում են զոհվածների կամ տեղահանվածների թվին:

գ. Ուսուցիչը հիշեցնում է նախորդ տարիներում սովորած թեմաների մասին՝ արդարություն, հարատև աշխատանք, բարեկամություն և փոխադարձ հարգանք, ազատություն, գթասրտություն, ազնվություն, քաջություն՝ կորուստը դիմագրավելու, հարատև ճիգ, վերապրելու կամք: Դրանք գրվում են գրատախտակին: Ուսուցիչը կարող է դիմել *http://www.dasagirq.am* կայքէջին և բեռնել առաջինից մինչև հինգերորդ դասարանների համար մատուցված նյութերը: Այս թեմաների դասավանդման համար առաջարկված նյութերը բերված են սույն ձեռնարկի առաջին մասում:

դ. Դասարանը 3–4 հոգանոց խմբերի է բաժանվում և յուրաքանչյուր խումբ փորձում է դասանյութի մեջ գտնել գրատախտակին գրված թեման և գրել դասանյութի տված բացատրությունն այդ մասին:

Անհատական աշխատանք: Ուսուցիչն աշակերտներին խմբերի է բաժանում և յուրաքանչյուրին հանձնարարում է մեկ ֆիդայու անուն: Խումբը պետք է գտնի այդ ֆիդայու մասին տեղեկություններ, նկարներ և երգեր ու պետք է զեկույց պատրաստի դասարանում կարդալու համար:

Դարձյալ խմբերի բաժանված, յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ վայր և ինքը դառնում է թղթակիցների խումբ, որ պետք է այդ վայրը այցելի և հայերի ջարդի ու տեղահանության մասին թղթակցություն պատրաստի: Հանրագիտարանից կամ համացանցից կարելի է քաղել տեղեկություններ ու նկարներ՝ 1915 թ. այդ վայրում կատարված դեպքերի մասին և զեկույց պատրաստել դասարանում կարդալու համար:

Հավելյալ աշխատանք: Ուսուցիչը բացատրություն է տալիս Ավետիս Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» աշխատության մասին:

Աշակերտներն ընտրում են՝ կամ ինքնուրույն կարդալ «Հազրեն» և ամփոփում կատարել, կամ՝ խմբերի բաժանված յուրաքանչյուրը հանձն է առնում կարդալ պատմությունից մեկ բաժին և զեկույց ներկայացնել դասարանին: Մյուս խմբերին առիթ է տրվում հարցումներ անելու: Այսպիսով՝ պատմությունն ամբողջությամբ յուրացվում է դասարանի կողմից:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը շրջում է խմբից խումբ, լսում է աշակերտների քննարկումները, թե ինչպես են դասանյութի միջից թեմաներ գտնում և տրամաբանում. կամ եղեռնի մասին մեկ վայրի զեկույցը պատրաստում: Գնահատվում է աշակերտների մասնակցությունը դասարանային քննարկումներին, ինչպես նաև նրանց պատրաստած զեկույցները:

14
ԸՆԹԵՐՑՈՒՄ – «ՀԱԶՐԵՆ»

✧ ✧ ✧

ՀԱԶՐԵՆ

Ավետիս Ահարոնյան (1866–1948)

Լեռների աղջիկ էր նա, կանացի ոչինչ չուներ իր արտաքինի մեջ, միայն զգեստն էր մատնում նրա սեռը:

Ձմեռը ցրտից, ամառը՝ արևից այրված դեմքը սաստիկ արտահայտիչ էր, բայց անհամբույր ու խիստ: Սուր քիթը, իրար խառնված սև հոնքերը, անհանգիստ ու կլոր աչքերը, ուժեղ ու դուրս ցցված ծնոտը նույնպես շատ հեռու էին կանացիությունից և վկայում էին նրա անդրդվելի հոգին, Սասունի ժեռ քարերի նման հոգին:

Հազրեն թեև երկու անգամ ամուսնացել էր, բայց անզավակ էր, մայր չեղավ, այլ մնաց սոսկ «Հազրե բաջի»: Բայց մինչև վերջ Գոմեր գյուղում ոչ ոք չիմացավ, որ խստատեսիլ կնոջ հոգին զուտ կանացի քնքշություններ ունի, որ նրա սրտում լուռ լալիս էր մայրությունը:

— Գյուղի զմմեէն ճժեր իմս են,— ասում էր նա հաճախ:

Բայց դեպի փոքրիկ ճժերը անտարբեր էր, սիրում էր միայն ընտիր ու քաջ հերոսներին: Մի Սերոբ, մի Մուրադ և վերջին օրերում երազում էր Անդրանիկին, որին տակավին չէր տեսել: Նա բոլոր մայրերից ավելի հռչակ ուներ ոչ միայն Գոմեր գյուղում, այլև ամբողջ Սասունում, որովհետև Սասունի ռազմիկ ալեծուփ կյանքին միշտ մասնակցում էր տղամարդու պես: Այդ կյանքը նրա համար երեք պարզ օրենքներ ուներ, այդպես, նա գիտեր, Սասունը միշտ պետք է կռվի, երբ թուրք ու քուրդ հրոսակները ոտք կոխեն նրա սահմանները, որովհետև Ծիրանակատարը, Ընկուզնակն ու Ֆռֆռ քարը հարամների տեղ չեն, երկրորդ՝ կռվելիս պետք է շտապ լեռը քաշվել և երրորդ՝ միշտ պետք է ետևից գյուղերը կրակ տալ, որ թշնամին ապաստան ու պաշար չգտնի:

Եվ Հազրեն կռիվների ժամանակ միշտ ինքն էր կրակ տալիս Գոմեր գյուղը՝ սկսելով իր սեփական խրճիթից: Այս էր պատճառը՝ որ նա փոխանակ ասելու, թե Սասունի վրա չորս անգամ արշավանք է եղել, հպարտությամբ բացականչում էր.

— Էսա ձեռներուս չորս խետ վառեր եմ Գոմերը:

— Հը, Հազրե, էդ չորացած ձեռներով մեկ էլ ճրբ պիտի վառես գեղը,— հարցնում էին հաճախ կանայք կատակով:

Հազրեն լուրջ կերպարանք էր ստանում ու ձեռը մեկնում դեպի սարերը:

— Ա՛յ, էն սարերի Ասլանը երբ ցած գա և նշան անի, կվառեմ:

«Սարերի Ասլանը» Անդրանիկն էր, որ քանի տարիներից ի վեր Սասնո սարերում, Սասնո ծռերի հետ հսկում էր ժայռերի վրա թառած ժողովրդին:

— Անդրանիկին տեսե՞լ ես:

Պատասխանի փոխարեն Հազրեն թափով հետ էր ձգում գլուխը, լեզուն բերնի մեջ չփչփացնում ասելու համար, որ չի տեսել:

— Երբ պետք լինի Գոմերը վառել, նա կերևա և երբ կերևա կտեսնեմ իմ տղային, ջանին մատաղ,— ավելացնում էր նա:

— Սևը տանի քեզ, Հազրե՛ բաջի, էդ էր պակաս:

— Սևը դուշմանին տանի, ես ափսոս չե՞մ, մեկ Սասուն, մեկ Անդրանիկ, մեկ էլ... Հազրե: Վերջին խոսքի վրա կանայք հռհռում էին, և Հազրեն հեռանում էր հաստատ քայլերով:

Եվ մի օր Սարերի Ասլանը ցած իջավ իր ծռերով...

Սասունը վտանգի մեջ էր, Գոմերը պետք էր թողնել, գյուղը դատարկվում էր և քաշվում լեռն ի վեր:

Անտրտունջ ու համր, այդ երկաթե ժողովուրդը թողնում էր իր տունն ու տեղը, վերցնում էր իր ունեցածից ինչ կարող էր, և ձմռան վերջին կատաղի հողմերի շնչի տակ, ձյուների միջից ոլոր–մոլոր քարավաններով շարժվում էր դեպի լեռնակատարները, դեպի ապահով վայրերը:

Խմբապետի հետ միասին, գյուղից ի վեր, դիրք բռնած զինված տղամարդիկ՝ պաղ ու մռայլ ճակատներով, նայում էին թե ինչպես իրենց ծեր հայրերը, կանայք ու երեխաները հաստատ քայլերով գնում էին առաջներից:

Ամեն մեկն իր գործը գիտեր. միայն մի անգամ խմբի կենտրոնում կանգնած տղամարդը գլուխը բարձրացրեց հրացանի վրայից և ասաց.

— Անցե՛ք շուտ:

Անդրանիկն էր...

Ոչ մի տրտունջ ծերերի շրթունքներից, որոնք գուցե վերջին անգամ էին թողնում հինավուրց օջախը, ոչ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, անգամ փոքրիկները ոչ մի ճիչ չէին արձակում:

— Դեպի վեր, դեպի... արծիվնե՛րը:

Մի անգամ միայն, հետ նայեցին, երբ ծխի պտույտները բարձրացան գյուղի վրա, բոլոր խրճիթները վառվում էին, դարձյալ ոչ մի տրտունջ... միայն մի մեղմ շշուկ անցավ շարքերի մեջ:

— Հազրե՞ն է,— շշնջացին ու լռեցին:

Հեռվում գյուղը շարունակում էր վառվել, բոցերը լափում էին այնքան աշխատանքը: Մերթ ընդ մերթ քամին ցրում էր ծուխը և այն ժամանակ երևում էր մի կանացի կերպարանք, բոցավառված մի լաթով վազում էր մի տնից մյուսը, մի փողոցից մյուսը և ուր որ նա հայտնվում էր, հրդեհը բարձրանում էր: Տասն անգամ նա հայտնվեց՝ միշտ վազելով, միշտ կրակ տալով այս ու այն տունը:

Գյուղից վեր՝ ավերակ Գոմերի պատերի հետևում, շարված զինված խումբը նույնպես լուռ էր: Հրացանները պինդ սեղմած ձեռքերի մեջ՝ այդ մռայլ խումբը

սպասում էր գլխավորի հրամանին, որ մերթ սուր աչքերով և մերթ դիտակով պրպտում էր հեռուն:

— Պառավին կխփեն,— մռմռաց նա կամացուկ: Խումբը նայում էր և լուռ էր:

Արդարև, գյուղից ավելի ցած, հարթավայրի վրայից դեպի վեր էր խաղում մի սև, անհանգիստ զանգված: Դա թուրքական բանակն էր և քրդերի բազմաթիվ հրոսակներ, որ առաջանում էր դեպի Գոմեր, դեպի Սասուն:

— Ձեն տուր, տղա՛,— հրամայեց գլխավորը կողքին կանգնած ընկերոջը,— թող փախչի, բավական է:

Եվ մի հայդուկ ահագնադղորդ կանչեց.

— Հազրե՜, Հազրե՜...,— և ձորերը թնդացին է... է... է...

— Հե՛յ հօ,— եղավ պատասխանը և գյուղի ծխերի ու բոցերի միջից դուրս թռավ նա ու սկսեց վազել լեռն ի վեր, դեպի խումբը:

Նա արդեն մոտ էր, երբ կանգ առավ, երևի շունչ առնելու համար, ապա փոխանակ շարունակելու վերելքը, հանկարծ գլխին տվեց երկու ձեռքով և կրկին վազեց դեպի վար, դեպի հրդեհվող գյուղը:

— Հազրէ՜...,— կանչեց նույն ձայնը:

— Իրիցու տուն մնաց,— եղավ պատասխանը: Քիչ հետո նա կրկին կորավ բոցերի ու ծխի մեջ և ապա գյուղի եզրին մենակ ցցված սպիտակ տունը բռնկվեց: Տերտերի տունն էր այն:

Խմբապետը գլուխն օրորեց և նրա խիստ դեմքի վրա մի ժպիտ խաղաց:

— Պառավին անպայման կխփեն,— մռմռաց նա դժկամությամբ և վերստին դիտակն աչքերին դրեց:

Թշնամին մոտ էր, նրա ձայրը հասավ գյուղը և կանգ առավ: «Կրակ»,— որոտաց գլխավորի խրոխտ ձայնը: Հայդուկների հրացանները միաժամանակ չխկչխկացին, թշնամու ճակատն իրար անցավ և ընկրկեց դեպի հետ:

— Կրա՛կ, անընդհատ,— վերստին լսվեց հրամանը, էլ դադար չկար, կատաղի կռիվ էր:

— Հե՛յ, հօ, զարկեցեք ձեզ մատաղ: Սուրբ աղպարիկը ձեզ քոմակ, ջա՛ն, ջա՛ն:

Հազրեն էր... կռվողների թիկունքում:

Ճրբ եկավ, ինչպե՞ս ազատվեց, ոչ ոք չգիտեր և մտածելու ժամանակ էլ չկար:

— Կրա՛կ,— որոտում էր խմբապետը, և լեռները զրնգում էին ոլոր–մոլոր արձագանքներով:

— Ջա՛ն, ջա՛ն Անդրանիկ,— կրկնում էր պառավը զարկերի հետ, վազվզում էր դիրքերի վրա, նայում էր ճանաչելու համար, թե ո՞րն է Սարերի Ասլանը,— իր տղան: Բայց գտնել չէր կարողանում և կռվող կտրիճներից էլ հարցնելու սիրտ չէր անում: Նա լսում էր խմբի միջից բարձրացող այն հպարտ ձայնը, որ «կրա՛կ» էր հրամայում, բայց չէր կարողանում իմանալ, ո՞րն էր խմբապետը, բոլորը հայդուկներ էին, բոլորը կռվում էին հավասար կատաղությամբ:

— Վա՛յ, քոռանա Հազրեն,— բացականչեց նա հանկարծ,— դոշը բաց է, դոշիդ մատաղ,— և նա մի ահագին մեծ քար գրկեց, ու տնքալով տարավ տեղավորելու կովողներից մեկի առաջը, ուր պատը ցածր էր:

Կռացավ, բայց հանկարծ քարը բաց թողեց, հետ–հետ գնաց ընկավ թիկունքին իր երկար հասակով, ձեռքերը տարածեց ու մնաց անշարժ:

Գնդակը թափ էր անցել կրծքից:

Նրա աչքերը շաղվեցին և վտիտ մարմինը ձգվեց ու ավելի երկարացավ:

Նա, որի կուրծքն էր ուզում պատսպարել Հազրէն, կռացավ, քնքշությամբ բռնեց պառավի գլուխը և իր ծնկանը դրեց:

— Հազրե...

— Ջու՛ր,— նրան ջուր տվին: Պառավը աչքերը կիսաբաց, ձեռները տարածեց և մեկին փնտրում էր:

— Ինչ կուզես, Հազրե:

— Սարերի... Ասլանին... Անդր... լաո...

Նա չէր իմանում, որ իր գլուխը գրկողը հենց Սարերի Ասլանն է, և ինքն առանց ճանաչելու, նրա կրծքի առաջ էր քար դնում, նրան էր զոհ գնացել:

— Ես եմ,— հազիվ մրմնջաց հուզված տղամարդը, հերոսի աչքերը թացացան, նա ավելի կռացավ պառավի վրա և որդու պես համբուրեց նրա սուրբ ճակատը:

Հազրեի բազուկները հետին թափով փարվեցին նրա պարանոցով, ու նա հազիվ մրմնջաց.

— Ես էլ... մատա՛ղ... Անդրան... Սարերի Ասլանին, լաո...

Եվ երջանիկ ժպիտը սառեց նրա գունատ շրթունքներին:

Հազրեն մեռավ. գյուղը դեռ վառվում էր, թշնամին այդ օրը հետ մղվեց ահագին կորուստներով, իսկ համր քարավանը ձյուների և սառույցների միջից շարունակում էր քաշվել դեպի վեր, դեպի վեր... արծիվները:

ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Այս դասանյութի համար «Հայ դատ» դասագրքից վերցված են «Ինչպե՞ս գործադրվեց Հայոց ցեղասպանությունը» և «Ինքնապաշտպանության կռիվներ» ենթագլուխները:

Այս դասանյութում ներառված է նաև «Առաջ Մասիս սարը մերն էր, խոսեք Հայաստանի լեռներ» երգը (տե՛ս համացանցում): Քաջալերելի է, որ դասարանը սովորի այս երգը և կարծիքների փոխանակում ու վերլուծություն անի երգի շուրջ:

Որպես հավելյալ ընթերցանություն, ընտրված է Մուշեղ Իշխանի «Սարսափի գիշեր» հատվածը՝ հեղինակի «Մնաս բարով մանկություն» հուշագրությունից, և առաջարկված է համապատասխան դասաձրագիր:

Նախորդ դասանյութի ամփոփում Կրկնել հիշելու համար

1915 թ. Մեծ եղեռնին նախորդող շրջան — Դարեր ի վեր ստրկացած և անարդարության ենթարկված հայ ժողովրդի ընտրանին, մտավորականությունն ու մի շարք անձնվեր երիտասարդներ պայքարի մեջ էին մտել Օսմանյան կայսրության մեջ ապրող հայի կյանքը բարելավելու, նրա տարրական իրավունքները հետ ստանալու և թուրք ու քուրդ աղաների և բեկերի հրոսակախմբերի հարձակումներից նրանց պաշտպանելու համար: XIX դարի վերջերում արդեն կազմված կուսակցությունները, մի կողմից՝ սուլթանին դիմումներ էին հղում և եվրոպական պետությունների օգնությունն ու միջամտությունը խնդրում, մյուս կողմից՝ կռվող խմբեր էին կազմում և գյուղից գյուղ շրջելով՝ հայ գյուղացուն պաշտպանում: Այդ խմբերում կռվողները, որոնք պատրաստ էին հայ ժողովրդի համար իրենց կյանքը զոհելու, ֆիդայի կամ հայդուկ կոչվեցին:

Սուլթան Աբդուլ Համիդը անտեսեց հայերի և եվրոպական պետությունների կատարած դիմումները և հայերին պատժելու ելավ: Նա ջարդ ու կոտորածով ցանկանում էր հայերին ստրուկ ու հնազանդ պահել և, նրանցից առատ տուրքեր գանձելով, իր պալատական հսկա ծախսերը հոգալ:

1894–96 թվականներին, ամբողջ կայսրության մեջ տարածված ջարդերի ընթացքում, շուրջ 300.000 հայեր կոտորվեցին: Բռնի իսլամացան 100.000: Երկրից դուրս գաղթեցին մեծ թվով ընտանիքներ: Ավերվեցին շուրջ 2500 գյուղեր:

Սուլթան Համիդը, որին եվրոպացիներն այդ ջարդերի պատճառով Կարմիր սուլթան կամ Արյունոտ սուլթան կոչեցին, կարողացավ հայերի թիվը կայսրության մեջ զգալի չափով նվազեցնել:

Մի քանի վայրերում՝ ինչպես Զեյթուն և Վան, հայերը ինքնապաշտպանության դիմեցին և փրկվեցին: Ջարդերից հետո էլ հայերը մի քանի վրեժխնդրական գործողություններ կազմակերպեցին: Այնուամենայնիվ, հալածանքները շարունակվում էին:

Երիտասարդ թուրքերի կամ «Իթթիհաթ վե թերեքքը» կուսակցության հեղաշրջումը 1908 թ. և հավասարության ու արդարության նրանց տված խոստումները մեծ հույս ներշնչեցին հայ ժողովրդին: Սակայն, Ադանայի և շրջակա գյուղերի ու քաղաքների ջարդը 1909 թ. ապրիլին, եկավ փաստելու, որ նրանք էլ հայերին չէին պաշտպանելու: Հետագա իրադարձություններն էլ եկան ավելի բացահայտելու նրանց տրամադրությունը հայերի դեմ, որ պետք է խորանար և մինչև 1915 թ. հասներ ցեղասպանության: Երիտթուրքերը երազում էին ստեղծել «Մեծ Թուրան» պետությունը, իսկ Հայաստանն ու հայությունը խոչընդոտներ էին, որ պետք է վերացվեին:

Հայոց ցեղասպանություն — 1914 թ. նոյեմբերի 21–ին, երբ Առաջին աշխարհամարտը սկսվել էր արդեն, Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյա թշնամիների դեմ «Սրբազան պատերազմ» (Ջիհադ) հայտարարվեց: Պետությունը իսլամ զանգվածներին նախապատրաստում էր հայերի բնաջնջման իր ծրագիրն իրագործելու համար:

Հայերի բնաջնջման որոշումը տրված էր: Երկրի իշխանության գլուխ անցած «Իթթիհաթ վե թերեքքը» կուսակցության ղեկավարները՝ Էնվերը, Ջեմալը և Թալեաթը որոշել էին վերջ դնել հայերի ներկայությանը Օսմանյան կայսրության մեջ, իսկ պատերազմը լավ առիթ էր այդ որոշումը իրագործել տալու համար:

Հայերի ջարդը գաղտնի պահվեց: 1915 թ. մարտից մինչև հոկտեմբեր հեռագրով ուղարկված ջարդի և տեղահանության հրամանները ոչնչացվեցին: Պատերազմից հետո էլ պետությունը փակեց իր արխիվները և ոչնչացրեց գրեթե բոլոր փաստաթղթերը: Արխիվները բացվեցին 1990–ական թվականներին: Բայց արդյոք այդ արխիվներում մնացե՞լ է «ճշմարտությունը»:

Պատերազմը հազիվ սկսված, կայսրության մեջ ճամփորդելն արգելվեց օտարներին, իսկ երկրից դուրս եկող գրությունները և տեղեկությունները, նույնիսկ դեսպանատներից ուղարկված, խիստ գրաքննության էին ենթարկվում: Գաղտնի ճանապարհով երկրից դուրս եկած լուրերը չէին կարող ցույց տալ իրականությունը: Պատերազմով տարված եվրոպական պետությունները չպետք է

կարողանային բողոքել կամ միջամտել: 1915 թ., հաղորդակցության միակ միջոցները թերթերն ու հեռագիրն էին, որոնք խիստ հսկողության տակ էին գտնվում:

Այսպես, հազարավոր հայեր տեղահան էին լինում, դեպի անապատ էին քշվում և կոտորվում, բայց աշխարհը կատարվածի ահագնության մասին հազիվ թե լուր ուներ: Բայց նույնիսկ եթե աշխարհն իմանար, հնարավոր կլիներ կամ փորձ կկատարվեր ոճիրը կասեցնելու:

Պահված է 1915 թ. սեպտեմբերին Թալեաթ փաշայի ուղարկած հեռագիրը Հալեպի կուսակալին, որ տեղեկացնում էր, թե կառավարությունը ջնջել է հայերի ապրելու և աշխատելու իրավունքը կայսրության մեջ: Հալեպ հասած գաղթականները, որ տեղահանվածների մի փոքր տոկոսն էին կազմում, պետք է անմիջապես բնաջնջման կայանները ուղարկվեին: Թալեաթը հրահանգում էր ոչնչացնել բոլորին և մանուկներին անգամ չխնայել:

15
ԻՆՉՊԵ՞Ս ԳՈՐԾԱԴՐՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Ինչպե՞ս գործադրվեց Հայոց ցեղասպանությունը»:

Հայերի բնաջնջումն աստիճանաբար՝ զանազան փուլերով գործադրվեց: Թուրքական կառավարության նպատակը հայ ժողովրդի դիմադրական ուժը թուլացնել և ղեկավարությանը ոչնչացնելն էր: Դրանից հետո անպաշտպան մնացած զանգվածներին բնաջնջելը դյուրին կլիներ:

Ցեղասպանության ծրագրի իրագործման առաջին փուլը **հայ զինվորների զինաթափումն էր**: Պատերազմի մեջ մտնելուց հետո Օսմանյան պետությունը զորակոչ հայտարարեց և բանակի մեջ ընդգրկեց հայ երիտասարդությանը ևս:

1915 թ. փետրվարին, սակայն, հրաման տրվեց զինաթափման ենթարկել հայ զինվորներին: Այսպես, հայ զինվորներին հեռացնում էին բանակից, զինաթափում, ապա տեղում գնդակահարում էին, կամ աշխատանքային վաշտերի (ամալէ թապուրի) մեջ դնում նրանց:

Ապա, ամեն տեսակ տաժանակիր աշխատանքների ենթարկելուց հետո, ոչնչացնում էին նրանց՝ սովամահ անելով կամ գնդակահարելով:

Երկրորդ փուլը կայսրության **հայ բնակչության զինաթափումն էր**, որն իրագործվեց ամենայն վայրագությամբ: Հայերը պարտավոր էին հանձնել բոլոր տեսակի զենքերը՝ որսի հրացաններ, ատրճանակներ և նույնիսկ դանակներ: Այս պատրվակով, թուրքերը հայերի տներն էին մտնում և բռնարարքներ գործում բնակչության դեմ: Շատերը, զինաթափման իմաստը ըմբռնելով, զենքերը չհանձնեցին: Նրանք, մոտալուտ վտանգը զգալով, պահում էին զենքերը՝ իրենց կյանքը, ընտանիքը, տունն ու ունեցվածքը պաշտպանելու համար: Չհանձնելու պարագայում, սակայն, անտանելի չարչարանք էր սպասվում զոհին:

Հենրի Մորգենթաուն, որ 1913–1916 թվականներին Օսմանյան կայսրության մեջ ամերիկյան դեսպանի պաշտոնն էր վարում, վկայում է, թե «ամենից խավար դարերը նույնիսկ» չեն կարողացել նման «զարհուրելի տեսարաններ» ներկայացնել: «Նույնիսկ կանանց և հոգևորականներին,— ասել է նա,— չարչարանքի էին ենթարկում, եկեղեցիներ ու դպրոցներ էին ավերում՝ պահված զենքեր հայտնաբերելու համար: Շատերն իրենց հարևան թուրքերից զենքեր էին գնում կառավարությանը հանձնելու և չարչարանքից ազատվելու համար: Բայց երբեմն այդ էլ չէր

օգնում: Մարդկանց տունը տակն ու վրա էին անում, ասելով, թե «դու ուրեմն տունը պահած զենք ունես»»:

Եվ դեռ ավելին՝ թուրքերը հավաքված զենքերն օգտագործեցին ցույց տալու, թե հայերը զինվել էին և ապստամբության էին պատրաստվում:

Ամբողջ երկրում, մասնավորապես Պոլսի և Իզմիրի **հայ մտավորականների, աշխարհական ու կրոնական ղեկավարների և քաղաքական գործիչների ձերբակալումը** ծրագրի երրորդ փուլն էր: 1915 թ. ապրիլի 23–24–ի ընթացքում, շուրջ 600 հայեր ձերբակալվեցին և, երկրի կենտրոնական մասերը քշվելով, չարչարանքներով սպանվեցին: Այդ պատճառով է, որ հայ ժողովուրդը ապրիլ 24–ը Մեծ եղեռնի զոհերի հիշատակության օր է նշանակել:

Այդ օրերին, բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ զոհվեցին: Նրանցից շատերը, ինչպես Սիամանթոն և Վարուժանը, երիտասարդ էին: Եթե նրանք ապրեին և շարունակեին ստեղծագործել, որքա՜ն գեղեցիկ բանաստեղծություններ պետք է թողնեին մեզ: Այսօր հաճույքով ենք երգում Կոմիտասի երգերը: Ասում են, թե նա հայտնաբերել էր հայոց հին երաժշտությունը կարդալու գաղտնիքը և նոր երգեր էր ձայնագրել: Մտածե՞նք, եթե ապրիլի 24–ին, երբ թուրք ոստիկանները նրան ձերբակալելու համար Պոլսի նրա սենյակն էին մտել, նրա թղթերը ոչնչացրած չլինեին, այսօր որքան ավելի շատ երգեր կունենայինք:

Առանց ղեկավար մնացած հայության (մեծ մասամբ կանայք, ծերեր և մանուկներ) **բնաջնջումը** վերջին փուլն էր արդեն, որ գործադրվեց 1915 թ. ապրիլից հոկտեմբեր ամիսներին: Օսմանյան կայսրության բոլոր շրջանների թուրք կառավարիչներին հրաման էր տրվել մաքրագործել իրենց շրջաններում բնակվող հայերին: Շատերն անմիջապես, իսկ ուրիշները դժկամությամբ ընդառաջում էին ու գործադրում հրամանը: Իսկ հրամանը չկատարողին հեռացնում էին և փոխարենը ավելի խիստ ու դաժան կառավարիչ էին նշանակում:

Ընդհանրապես բոլոր շրջաններում էլ նույն ձևն էր կիրառվում: Նախ շրջանում մնացած տղամարդկանց կանչում էին իբրև թե խորհրդակցության կամ կարևոր լուր հաղորդելու համար: Նրանց բանտ էին նետում անմիջապես և հետո իրար շղթայած դուրս էին ուղարկում գնդակահարության կամ աքսորի:

Այնուհետև, հերթը գալիս էր մնացյալներին, որոնց հրահանգվում էր վերցնել ինչ որ կարող են և ճամփա ընկնել: Կառավարությունը նրանց բացատրում էր, թե տեղահանությունը հայերին պատերազմական գոտիներից հեռացնելու մի միջոցառում է և խոստանում էր նրանց տներն ու ունեցվածքը ապահով պահել, մինչև որ վերադառնան: Նրանք, որոնք մի քիչ դրամ ունեին, կառք էին վարձում, մի քիչ պաշար էին վերցնում ու ճամփա էին ընկնում: Ուրիշները ճամփորդությունը ոտքով էին սկսում և վերցնում էին միայն այն, ինչ կարող էին կրել: Այդուհանդերձ, մի քանի օր անց, բոլորն էլ նույն վիճակում էին: Քարավանի վրա հարձակվող թուրք և քուրդ ավազակները խլում էին ունեցողների կառքը, ուտելիքը, դրամն ու ամեն ինչ:

Ապա, առանց բարդ միջոցների դիմելու, առանց ջրի, ուտելիքի ու ապաստարանի շաբաթներ ու ամիսներ տեղից տեղ պտտեցնելով, կառավարությունը ոչնչացնում էր տեղահանված հայերին:

Դեռևս 1914 թ. օգոստոսից սկսած՝ Պոլսում կյանքի կոչված հատուկ կազմակերպությունը (Թեշքիլաթը մահսուսե), ոճրագործներին բանտերից արձակում էր և երկրի ներսերը ուղարկում՝ հայերին սպանելու և շատ հաճախ գյուղերը ամբողջությամբ բնաջնջելու համար: «Չեթե» կոչվող այս ոճրագործները խմբերով գաղթականների վրա էին հարձակվում, կողոպտում էին նրանց, կանանց ու աղջիկներին փախցնում էին, տանում: Իսկ թուրք ոստիկանները (զափթիե) առանց միջամտելու, այս գործողությունների լուռ ականատեսն էին մնում:

Վերջին կայան — Միայն փոքրաթիվ հայեր ճամփի դժվարություններին՝ քաղցին, ծարավին, հոգնածությանը, անապատի ամռան տաքին ու ձմռան ցրտին և համաճարակ հիվանդություններին տոկալով, անապատի կայաններն էին հասնում, բայց կառավարությունը եկող խմբերին տեղ բացելու համար, նրանց անապատի մեջ էր ցրում՝ կորելու, կամ խումբ առ խումբ կոտորում էր նրանց՝ ողջ–ողջ այրելով, գնդակահարելով ու սովամահ անելով: Վերջին կայաններից մեկը Դեր–Էզ–Զօրն էր, որ այսօր Սիրիայում է գտնվում:

Հայոց ցեղասպանությունը կանխամտածված ծրագիր էր: Իսկ պատերազմը աշխարհի ուշադրությունից շեղում էր այդ ծրագրի իրագործումը: Հայերի տեղահանությունն ու կոտորածը պատերազմի հետևանք չէին, ինչպես պնդում են թուրքերը: Տեղահանությունը միայն արևելյան, ռուս–թուրքական սահմանին մոտ պատերազմական գոտիներից չէր կատարվում, ինչպես պատճառաբանում էր թուրքական կառավարությունը, այլ ամբողջ երկրի տարածքում՝ Պոլսից մինչև Զեյթուն ու Հալեպ:

16
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՌԻՎՆԵՐ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Մի շարք վայրերում հայերը կարողացան ինքնապաշտպանության դիմել»

Այսօր, երբ 1915 թ. ահավոր ջարդերի և տեղահանության պատմությունն ենք սերտում, մի հարց մեզ մտածել է տալիս, ինչո՞ւ հայերը հնազանդվեցին թուրքերին և կոտորվեցին: Ինչո՞ւ չպաշտպանվեցին: Գոնե կարող էին զենք վերցնել և կռվելով մեռնել: Չէ՞ որ այդպես մեռնելը ավելի պատվավոր կլիներ: Տեղին են այս մտածումները: Բայց փորձենք հասկանալ իրավիճակը և ապա դատենք մեր ուզած ձևով:

Հիշենք, որ 1914 թ. աշնանից սկսած, զորահավաքի, պատերազմական պատրաստությունների, ընդհանուր զինաթափումի և ձերբակալությունների փուլերով, կառավարությունը կարողացել էր հայությանը քայքայել, զրկել ղեկավարությունից և երիտասարդ ու մարտունակ տարրերից: Իսկ տեղահանության հանգրվանում, եթե հայերը ընդդիմանային հրամանին, կպատժվեին՝ հենց տեղում կոտորվելով:

Դիմադրության ոգին թուլացել էր նաև ողջ մնացած ղեկավարների մոտ: Մի շարք հեղափոխական ղեկավարներ վախենում էին այդ վտանգավոր օրերին հեղափոխական քայլերի դիմել և ժողովրդի ճակատագրի հետ խաղալ: Պահպանողական ղեկավարները և որոշ կղերականներ հավատում էին, թե պետք է հնազանդվել՝ կառավարությանը չգրգռելու համար: Նրանք անցյալի կոտորածներն էլ հեղափոխականների գործունեությանն էին վերագրում:

Այնուամենայնիվ, որոշ վայրերում հայերը կարողացան դիմադրել:

Ծանոթանանք մի քանի օրինակների:

ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԸ ԴԻՄԱԴՐՈՒՄ ԵՆ

Իթթիհաթականների կառավարությունը առաջին հերթին ջարդի ու տեղահանության իր քաղաքականությունը փորձեց գործադրել Զեյթունում: Զեյթունի քաջարի ժողովուրդը մինչ այդ կարողացել էր զինված դիմադրությամբ կիսանկախ վիճակ պահել: 1914 թ. օգոստոսին արդեն, զորահավաքի պատրվակով, հայ հոգևորականները համոզել էին զեյթունցիներին հպատակվել կառավարության

հրահանգներին: Նույնը տեղի էր ունեցել նաև 1914 թ. դեկտեմբերին, երբ հրաման էր տրվել զենքերը հանձնել:

Այնուամենայնիվ, բռնությունները ավելի էին սաստկանում: Ոստիկանները հայ աղջիկներին անպատվում էին, տները թալանում: 25 հայ երիտասարդներ Զեյթունի հայ բնակչությանը ոստիկանների ոտնձգություններից պաշտպանելու համար, զենք վերցրած հարձակման անցան: Արյունալի բախումներ տեղի ունեցան: Կառավարությունը Հալեպից 5000–անոց զորք ուղարկելով, պաշարեց Զեյթունը, պահանջեց հանձնել այդ 25 երիտասարդներին և հեռանալ շրջանից:

Տեղահանությունը սկսեց 1915–ի ապրիլ 8–ին: Զեյթունի ամբողջ հայությունը, երկու քարավաններով դեպի անապատները քշվեց և բնաջնջվեց, իսկ Բալկաններից փախած թուրքերն արդեն սպասում էին հայերի թողած տները գրավելուն և տեղավորվելուն:

ՎԱՆՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ

1915 թ. առաջին ամիսներին խստացած հալածանքների հետևանքով Վասպուրականի հայությունը խումբ առ խումբ գալիս էր Վան քաղաք՝ ապաստան գտնելու: Շրջանի Դաշնակցության ղեկավարները՝ Արամ Մանուկյան, Իշխան և Վռամյան (որը օսմանյան խորհրդարանի ներկայացուցիչ էր ընտրվել Վանից) կապի մեջ էին կառավարության հետ: Վասպուրականի նահանգապետ Թահսին փաշան բարյացակամ վերաբերում ուներ հայերի նկատմամբ: Ուրեմն, հույս կար, որ Վանի հայությունը պետք է կարողանար պատերազմական օրերը համեմատաբար խաղաղ կերպով անցկացնել:

1915 թ. մարտին, սակայն, Թահսին փաշան հետ կանչվեց և Վասպուրականի նոր նահանգապետ նշանակվեց Ջևդեթը, որ Էնվերի աներձագն էր:

Ջևդեթը Վասպուրականի բնակչությունից պահանջում էր անմիջապես կառավարությանը հանձնել դրամ, հագուստ, ուտելիք և 4000 զինվոր՝ թուրքական բանակի համար: Հրամանը չկատարելու պարագայում, սպառնում էր Վանի հայությանը կոտորել: Ապրիլի սկզբին, Ջևդեթը սպանել տվեց Իշխանին և ձերբակալեց Վռամյանին: Իսկ Արամ Մանուկյանը կարողացավ ազատվել ձերբակալությունից և ստանձնեց ժողովրդի ինքնապաշտպանության ղեկավարությունը:

Կազմվեց զինվորական մարմին Կայծակ Առաքելի, Բուլղարացի Գրիգորի և Արմենակ Եկարյանի (այս մեկը արմենական, ռամկավար) մասնակցութեամբ:

Ապրիլի 20–ին թուրքերը գերի են վերցնում Վան մուտք գործել փորձող մի խումբ կանանց և կրակ են բացում նրանց օգնության եկող հայերի վրա: Հրաձգությունը սկսվում է հայկական թաղերում, և հայերը ինքնապաշտպանության են դիմում:

Կռիվը տևում է ամբողջ մի ամիս: Արամ Մանուկյանը դառնում է ինքնապաշտպանության ոգին ու ղեկավարը: Մայիսի 19–ին Վան է մտնում հայկական կամավորական առաջին խումբը, հետո երկրորդը: Հաջորդ առավոտ, վերջապես Վան է ժամանում ռուսական զորաբաժինը: Թուրքերը փախուստի են դիմում՝ ճանապարհին կոտորելով շրջակա գյուղերի հայ բնակիչներին: Վանը ազատագրվում է: Ռուս հրամանատարի հավանությամբ, նահանգապետ է նշանակվում Արամ Մանուկյանը:

Վանի ազատությունը 70 օր է տևում միայն: Ռուսական բանակը անսպասելիորեն նահանջի հրաման է ստանում: Իսկ Վանի շրջաններից 200,000 հայեր կոտորածից խուսափելու համար, ռուս զորքի հետևից գաղթի սոսկալի ճամփան են բռնում:

Հայաստանում՝ Աշտարակի մոտ, կառուցված է Վանի հերոսամարտին նվիրված հուշարձան, որ արծվի մեկ թևն է ներկայացնում: Ասում են, թե արծվի մյուս թևը պիտի կառուցվի այն ժամանակ, երբ Վանը ազատագրվի:

ՏԱՐՈՆԻ ԱՇԽԱՐՀ

Հին անունով Տարոնի աշխարհ կոչվող շրջանը իր մեջ էր ներառում Մուշը, Սասունը և Բաղեշը: Այս շրջանի և մանավանդ Մշո դաշտի մեջ էր կենտրոնացած հայ հեղափոխական գործունեության մեկ կարևոր բաժինը:

Իհարկե, Սասունի պարագայում կառավարությունը էլ ավելի զգույշ էր, որովհետև սասունցիները, որոնք արդեն իսկ ինքնապաշտպանության էին պատրաստվում, կարող էին ընդհանուր ապստամբության դիմել:

Տարոնի մյուս շրջաններում, 1915 թ. փետրվարից ի վեր սկսել էր տեղահանությունը: Այս պայմաններում հայ ղեկավարությունը որոշեց Տարոնի և Սասունի մեջ ինքնապաշտպանության դիմել: Ընդհարումները տևեցին 1915 թ. մարտից մինչև օգոստոս: Իսկ շրջանի քրդերն ու կառավարության կողմից ուղարկված չեթեները անդադար հարձակումներով թալանում ու կոտորում էին շրջանի հայությանը: Հայ հեղափոխական գործիչ Ռուբենը (Տեր–Մինասյան) և մյուս ղեկավարները, դիմադրություններ կազմակերպելով, փորձում էին ժամանակ շահել՝ հուսալով, որ ռուսական զորքերը օգնության կհասնեն: Բայց ռուս զորքերը Մուշի ուղղությամբ առաջանալ սկսեցին այն ժամանակ միայն, երբ կոտորածներն արդեն ավարտվել էին: Շրջանը թալանով ու կոտորածներով թուլացնելուց հետո թուրքերը Մշո դաշտը և Մուշ քաղաքը դատարկեցին հայերից ու դեպի Սասուն ուղղվեցին:

Կոտորածներից ազատված հայերը և Մուշի դիմադրական վերջին կռիվներում ողջ մնացած մարտիկները Սասուն հասան և կռվողների ու ժողովրդի հետ Անդոկի բերդը քաշվեցին, սակայն դիմադրությունը երկար չտևեց: Այլևս ո՛չ ուտելիք էր մնացել և ո՛չ էլ՝ զինամթերք: Օգոստոսի 5–ին թուրքական բանակը գրավեց Անդոկը և կոտորեց այնտեղ ապաստանածներին:

ՇԱՊԻՆ–ԳԱՐԱՀԻՍԱՐ

Շապին–Գարահիսարի հայությունը, ընդառաջելով կառավարության զորակոչին, 400 զինվոր էր տվել: Բայց այդ զինվորները, բանակում բրտությունների ենթարկվելով, հասկացել էին կառավարության նպատակը և փախել հասել էին Շապին–Գարահիսար: Իսկ այդ շրջանում արդեն զանգվածային ձերբակալություններ էին կատարվում: 1915 թ. մայիսին, կառավարությունը ձերբակալեց քաղաքի երևելիներին և ժողովրդի աչքերի առջև կացնահարելով կամ հրացանազարկով մորթեց նրանց:

1915 թ. հունիսի 2–ին հայ ղեկավարները որոշեցին ժողովրդի հետ Գարահիսար բերդը բարձրանալ և պաշտպանվել՝ հուսալով, որ ռուսական զորքը պետք է հասներ և զորքի մեջ պիտի լիներ Շապին–Գարահիսարի զավակ Անդրանիկը: Բերդում ապաստանել էին ավելի քան 5000 հայեր, որոնցից միայն 150–ը կռվողներ էին: Հսկա աշխատանք էր պահանջվում ոչ միայն նրանց պաշտպանելու, այլ նաև պարենի, ջրի և այլ կարիքները հոգալու համար: Այդուհանդերձ, բարձր էր բոլորի տրամադրությունը: Ղուկաս Տեովլեթյանը (Ղուկաս Աղբար) ղեկավարում էր պաշտպանության գործը՝ օգնական ունենալով Վահան Հյուսիսյանին:

Անդադար հարձակումներից և բերդի մեջ ապրելու դժվարություններից թուլացած մարտիկները կարողացան քաջությամբ հետ մղել նաև թուրքերի 5–6–հազարանոց զորքի վերջին մեծ հարձակումը հունիսի 20–ին:

Սակայն, այն ինչ չկարողացավ անել թուրքը, արեց սովը բերդի մեջ: Կացությունը անտանելի էր: Երևակայեք, ինչպե՞ս պետք է կարողանային դիմանալ 5000 մարդ, 26 օր՝ ամբողջովին խզված դրսի աշխարհից և թուրքական բանակի կողմից շրջապատված: Որոշվեց անձնատուր լինել, իսկ կռվողները բերդից պիտի իջնեին և կռվելով նահատակվեին:

Հունիսի 28–ին բերդի վրա բարձրացավ անձնատվության դրոշակը: Իսկ թուրքը հաղթական բերդ մտավ՝ մնացյալ տարեցներին, հիվանդներին, անկարողներին, կանանց ու երեխաներին կոտորելու:

Շապին–Գարահիսարի հերոսական պաշտպանության մասին գրել է արևմտահայ գրող Արամ Հայկազը, որ ինքն էլ, 15 տարեկան պատանի, մասնակցել է այդ կռիվներին: Նա ասում է. «Մեր պատմության մեջ պարտութեանց փառքեր շատ կան: Հատ մըն ալ Գարահիսարը»:

Արամ Հայկազի նկարագրած պաշտպանությունից մի հատված «Պզտիկ հերոսը» վերնագրով առաջարկված է հինգերորդ դասարանի համար (էջ 75–77):

ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Է ՏԱՆՈՒՄ

Մուսա լեռան լանջին գտնվող Սուետիայի շրջանի 6 հայաբնակ գյուղերում արդեն զանազան կողմերից աքսորի ու կոտորածների ահավոր լուրեր էին հասնում: Զեյթունի տարագրությունը և կատարված վայրագությունները ցույց էին տալիս, թե թուրքական կառավարությունը ինչ նպատակ էր հետապնդում: Տեղի հեղափոխականները և Վերապատվելի Տիգրան Անդրեասյանը փորձում էին համոզել ժողովրդին՝ Մուսա լեռ բարձրանալ և պաշտպանվել:

Այնուամենայնիվ, Սուետիայի բնակիչների մի մասը, հավատալով թուրքերի խոստումներին, թե տեղահանությունը ժամանակավոր է, աքսորի ճամփան բռնեց: Մնացյալը, շուրջ 4200 հոգի, 1915 թ. հուլիսի 31–ին, Մուսա լեռ բարձրացավ և 53 օր քաջաբար կռվեց՝ անդադար հետ մղելով թուրքերի հարձակումները:

Մովսես Տեր–Գալուստյանը ղեկավարում էր Մուսա լեռան ինքնապաշտպանությունը:

Կազմակերպված էր պատանեկան խումբ, որ, հրահանգները դիրքից դիրք փոխանցելով, վտանգավոր պարտականություն էր կատարում: 12–16 տարեկան այդ քաջ պատանիները լեռներն էին մագլցում՝ լուրեր տեղ հասցնելու համար: Այդ օրերին ոչ ձայնասփյուռ կար և ոչ էլ հեռախոս: Պատանիներն այդ դերն էին կատարում՝ թուրք բանակի գնդակների տակ իրենց կյանքը վտանգելով:

Եվ վերջապես, հերոսական պաշտպանությունը իր արդյունքին հասավ: Միջերկրական ծովով անցնող ֆրանսիական մի ռազմանավ լեռան վրա ապաստանած հայերին առավ և դեպի Եգիպտոս, դեպի ազատության փոխադրեց:

Ավստրիացի հրեա գրող Ֆրանց Վերֆելը, ներշնչված հայերի այս հերոսական պայքարից, գրի է առել «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի վեպը, որ Հայոց ցեղասպանության գրականության հաջողված կտորներից մեկն է:

ՈՒՐՖԱՅԻ ՔԱՋԵՐԸ ԹՈՒՐՔ ԲԱՆԱԿԻ ԴԵՄ ԵՆ ԾԱՌԱՆՈՒՄ

1915 թվականի ապրիլից ի վեր Օսմանյան կայսրության մեջ ծայր առած զանգվածային ձերբակալությունների, սպանությունների և տեղահանությունների մասին լուրեր էին հասնում Ուրֆայի հայությանը: Զեյթունից հասնող առաջին գաղթականները ահավոր բաներ էին պատմում:

Հունիսի 8–ին ձերբակալությունները սկսվեցին Ուրֆայում: Հայ բանտարկյալներին մի քանի օր Ուրֆայում պահելուց հետո, նրանց դեպի Ռագգա կամ Տիգրանակերտ (Դիարբեքիր) ճամփեցին, բայց, տեղ չհասած, բոլորին էլ կոտորեցին: Օգոստոսի սկզբներին թուրք զինվորները և չեթեները հարձակվեցին 1500 հայ զինաթափված զինվորների վրա և կոտորեցին նրանց:

Ինքնապաշտպանության դիմելուց և պատվով մեռնելուց բացի, ուրիշ ելք չէր մնացել:

Ուրֆայի հերոսամարտը սկսվեց սեպտեմբերի 29–ին, քաղաքի զույգ եկեղեցիների զանգերի ղողանջով: Մկրտիչ Յոթնեղբայրյանը ղեկավարում էր ինքնապաշտպանությունը:

Հայ կտրիճները առաջին հերթին գրավել էին քաղաքի պահակատունը, և մեծ թվով զենքերի տիրանալով, դիրք էին բռնել հայկական թաղերում: Մեծ քաջության ու զոհաբերության գնով հնարավոր էր դարձել քաղաքի վրա հարձակում գործող թուրք բանակի թնդանոթներից պաշտպանվել: Ուրֆայի ինքնապաշտպանական կռիվներին մասնակցում էին նաև կանայք՝ Մարիամ Չիլինգիրյանի ղեկավարութեամբ:

Կռիվը տևեց մինչև հոկտեմբերի 20–ը: Իսկ մինչ այդ թուրքական բանակին անդադար նոր ուժեր էին ավելանում, իսկ հայերի դիմադրական ուժը հետզհետե նվազում էր: Հոկտեմբերի 20–ից 23–ը մեկ առ մեկ ընկնում են հայկական դիրքերը:

Ուրֆայի ինքնապաշտպանության նկարագրությունը տվել է նաև դանիացի միսիոներուհի Քարեն Եփփեն, որի կատարած բարեգործությունների հիշատակին Հալեպում «Քարէն Եփփէ»–ի անվան ճեմարան է հիմնվել:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԴԱՏԵՆՔ

Մտածենք Զեյթունի, Վանի, Տարոն աշխարհի, Շապին–Գարահիսարի, Մուսա լեռան և Ուրֆայի ինքնապաշտպանական կռիվների մասին: Արդյոք նկարագրված պայմաններում հնարավոր կլինե՞ր ավելին անել: Եթե դրսից օգնություն հասներ, եթե հնարավոր լիներ զենք ու պարեն հասցնել կռվողներին, եթե կոտորածների լուրերը տարածվեին ամբողջ աշխարհով և ճնշում գործադրվեր թուրքական կառավարության վրա՝ պաշարումն ու ջարդը դադարեցնելու: Այս բոլորը արդյոք կկարողանայի՞ն փոխել կացությունը: Կար նաև մի այլ պարագա: Եթե հայերը բոլորովին զենքի չդիմեին, կացությունը կփոխվե՞ր արդյոք:

Որքան ավելի խորանանք, այնքան ավելի պարզ է դառնում ցեղասպանության անխուսափելի լինելը: Իսկ **ինքնապաշտպանության կռիվները մեր պատմության մեջ կմնան իբրև հայ ժողովրդի ամենից խոսուն պոռթկումները անարդարության դեմ**:

Եվ այսպես, արևմտահայությունը, թուրքին թողնելով իր տունը, ունեցվածքը հարստությունը, հայրենի հողը և նրա վրա կառուցած դարերի իր մշակութային ժառանգությունը, տեղահանվեց, սպանդի ենթարկվեց և նրա մնացորդացը աշխարհի չորս կողմը ցրվելով՝ Սփյուռք դարձավ: Ապրեց հայրենի կարոտը իր հոգու, իր գրականության, իր արհեստի, իր երգերի մեջ: «Առաջ Մասիս սարը մերն էր» մեկն է այդ երգերից: Առաջարկվում է նաև «Պիտի գնանք վաղ թե ուշ» երգը:

ԱՌԱՋ ՄԱՍԻՍ ՍԱՐԸ ՄԵՐՆ ԷՐ

Հայաստանից մեզ հանում են,
Խոսեք Հայաստանի լեռներ,
Մայրը որդուց բաժանում են,
Խոսեք Հայաստանի լեռներ:
Ասեք լեռներ, խոսեք լեռներ
Առաջ Մասիս սարը մերն էր:
Ես հիշում եմ այն օրերը,
Պապս լծում էր արորը,
Ու վարում էր դաշտն ու ձորը,
Խոսեք Հայաստանի լեռներ:

Ասեք լեռներ, խոսեք լեռներ
Առաջ Մասիս սարը մերն էր:
Ո՞ւր է Մուշը, ո՞ւր է Վանը,
Ո՞ւր է հայոց Արդահանը,
Ո՞ւր է հայոց դաշտն ու ձորը
Խոսեք Հայաստանի լեռներ:
Ասեք լեռներ, խոսեք լեռներ
Առաջ Մասիս սարը մերն էր:

ՊԻՏԻ ԳՆԱՆՔ ՎԱՂ ԹԵ ՈՒՇ

Ա՜խ էն երկրի հողին մատաղ, պիտի՛ գնանք վաղ թե ուշ,
Սիրով լինի, սրով լինի, պիտի՛ գնանք վաղ թե ուշ,
Արարատի գլխին դրոշ պիտի՛ դնենք վաղ թե ուշ,
Հերթով լինի, երթով լինի, պիտի՛ գնանք վաղ թե ուշ:

Կորցրեցինք մեր հողերը, երբ մեր ազգը թուլացավ,
Բահ ու գրիչ շատ սիրելուց զենք բռնելը մոռացավ,
Հույսը միայն Աստծո վրա՝ սրի դերը ուրացավ,
Խաչով լինի, գրչով լինի՝ պիտի՛ գնանք վաղ թե ուշ:

Դրա համար պայքար է պետք, ուրիշ ճամփա չեմ տեսնում,
Սրով խլված հողը սիրով տիրոջը չեն նվիրում,
Ուժն է հարգի, լա՛վ իմացեք, թույլ ազգերին չեն սիրում,
Սիրով լինի, սրով լինի, պիտի՛ գնանք վաղ թե ուշ:

Հայկազունն եմ՝ չեմ վախենում մարդկության նենգ դավերից,
Հալածանքից, բռնությունից, Աստծո տված ցավերից,
Թեկուզ անանց պարիսպներով մեզ բաժանեն մեր երկրից,
Հրով լինի, սրով լինի, պիտի՛ գնանք վաղ թե ուշ:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Ինչպե՞ս գործադրվեց հայոց ցեղասպանությունը» և «Ինքնապաշտպանության կռիվներ»:

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Դասավանդման ավարտին, աշակերտը պետք է կարողանա ըմբռնել, թե ինչ դեպքեր նախորդեցին 1915 թ. Հայոց ցեղասպանությանը, ինչո՞ւ օգտագործվեց պատերազմն իբրև առիթ, ինչ փուլերով կատարվեց ցեղասպանությունը և ինչո՞ւ այդ փուլերով: Պետք է որոշ գաղափար ունենա ինքնապաշտպանության կռիվների մասին և թե դրանք ինչ արդյունք ունեցան: Աշակերտը պետք է կարողանա հայ համայնքների բնաջնջմանը վերաբերող դեպքերի և օսմանյան կառավարության ընձեռած միջոցների ու մեթոդների ժամանակագրական կարգը ճշտել, այսինքն՝ հասկանալ պատմության ժամանակագրական բնույթը:

Նյութեր/միջոցներ

1. Առաջարկված դասանյութ:
2. Վարժության թերթիկ:
3. Մուշեղ Իշխանի «Սարսափի գիշեր» հատվածը:

Քաջալերանք, մղում: Նախքան դասը սկսելը ուսուցիչը հարցնում է, թե աշակերտներն ինչ գիտեն Հայոց ցեղասպանության մասին, որտեղ են լսել կամ կարդացել, ընտանիքի մեջ վերապրող ունեցել են, անցյալ տարվա սովորածներից ինչ են հիշում:

Եթե ուսուցիչը հնարավորություն ունի սահիկահանդես (power point presentation) կատարելու, դասարանում կցուցադրի Հայոց ցեղասպանության մասին խոսող զանազան կայքէջերից առնված մի քանի նյութեր:

Ապա ուսուցիչը հարց է տալիս, թե ինչո՞ւ հայերը չկարողացան պաշտպանվել և միաժամանակ շարունակում: «Ուրեմն, տեսնենք, թե ինչպե՞ս եղավ և ինչո՞ւ շատ քիչ վայրերում հայերը կարողացան դիմադրել»:

Դասավանդման հաջորդականություն

ա. Ուսուցիչն առաջնորդում է առաջարկված դասանյութի ընթերցումը դասարանում: Popcorn մեթոդով բարձրաձայն ընթերցումը կարող է օգտակար լինել: Այս մեթոդը բացատրված է նախապես. բայց նորից կրկնենք: Ուսուցիչը սկսում է կարդալ նյութը. մի քանի տող կարդալուց հետո, մի աշակերտի անուն է կանչում,

և աշակերտը շարունակում է կարդալ. ապա աշակերտը մի այլ աշակերտի անուն է տալիս և այդ աշակերտը պետք է շարունակի. այսպես՝ մինչև ընթերցման ավարտը: Այս մեթոդը օգնում է դասարանին՝ արթուն և աշխույժ մնալ:

բ. Դասարանը սկսում է քննարկել կարդացած նյութը և ուսուցիչը քննարկումը առաջնորդում է այնպիսի ուղղությամբ, որ ավարտին աշակերտները վերը նշված հարցերի պատասխանը ունենան:

Անհատական աշխատանք: Մուշեղ Իշխանի «Սարսափի գիշեր» հատվածի դասավանդումից հետո աշակերտները պարտականություն են ստանձնում գրել իրենց տպավորությունը կամ հատվածի ամփոփումը:

Հավելյալ աշխատանք

ա. Աշակերտները կարող են իրենք իրենց Առաջին աշխարհամարտի ընթացքում պատկերացնել և նամակներ գրել տարբեր երկրների իշխանություններին, բացատրել իրավիճակը և նրանցից օգնություն հայցել:

բ. Աշակերտները նամակ են գրում քաղաքային գրադարաններին և առաջարկում են հայ ժողվրդի և Հայոց ցեղասպանության մասին գրքեր գնել գրադարանի համար: Կամ՝ դրամ հավաքելով մեկ գիրք են գնում և դասարանի կողմից նվիրում են տվյալ գրադարանին:

Գնահատում/Արժևորում: «Վարժություն»–ը, ընթերցանության և քննարկման մասնակցությունը, նամակները:

Վարժություն

Դեպքերը պատմության մեջ տեղի են ունենում մեկը մյուսի հետևից: Այս վարժության մեջ թիվ 2, 4, 5, 7, 9 և 10 պարբերությունները լրացրեք այնպես, որ դեպքերի ժամանակագրությունը պահված լինի 1–11:

1. Սուլթան Աբդուլ Համիդը անտեսեց հայերի և եվրոպական պետությունների կողմից կատարված դիմումները և հայերին պատժելու ելավ:

2. _____

_____

_____

_____

_____

_____

_____

3. Երիտասարդ թուրքերի կամ «Իթթիհաթ վե թերաքքը» կուսակցության հեղաշրջումը 1908 թ. և հավասարության և արդարության խոստումները մեծ հույս ներշնչեցին հայ ժողովրդին:

4. _____

_____

_____

_____

_____

_____

_____

5. _____

_____

_____

_____

_____

_____

_____

6. 1915 թ. փետրվարին հրաման տրվեց հայ զինվորներին զինաթափման ենթարկել:

7. _____

_____

_____

_____

_____

_____

_____

8. Օսմանյան կայսրության հայ բնակչությունը զինաթափվեց: Հայերը պետք է իրենց զենքերը հանձնեին: Բոլորը պետք է ենթարկվեին հրամանին, եթե ոչ, զոհին չարչարանք և մահ էր սպասվում:

9. _____

_____

_____

_____

_____

_____

_____

10. _____

_____

_____

_____

_____

_____

_____

11. Տեղահանված հայ գաղթականների վերջին կայաններից մեկը Դեր–Էզ–Զորն էր, որ այսօր Սիրիայի անապատում է գտնվում:

17
ԸՆԹԵՐՑՈՒՄ – «ՍԱՐՍԱՓԻ ԳԻՇԵՐ»

✧ ✧ ✧

ՍԱՐՍԱՓԻ ԳԻՇԵՐ

Մուշեղ Իշխան (1914–1990)

Հատված «Մնաս բարով, մանկություն» հուշագրությունից

Սուգ է մեր տան մէջ: Արցունք կայ ամենուն աչքին խորը, բառերը կարտասանուին հատ–հատ եւ կիսաձայն, ինչպէս եկեղեցին: Ամենէն խոր սուգը պատած է սակայն իմ հոգիս: Հայրիկին հետ ես կորսնցուցի նաեւ իմ էշս, իմ ընկերս, մտերիմս, ուրախութիւնս:

— Էշը անօթի էր, դեռ ուտելիք չէի տուած,— կը հեկեկամ բարձրաձայն:

— Նայէ՛,— կ'ըսէ մայրս,— խելքդ գլուխդ հաւաքէ՛, դուն այլեւս չօջուխ չես, դուն մեր տունին այր մարդն ես…

Իսկապէս ես եմ միակ այր մարդը: Եղբայրս հաշուի չառնուիր, մատ մը տղայ է տակաւին եւ տակը կ'աղտոտէ: Մնացեալները կին են. մեծ–մայրիկը, հաճի մաման, մայրիկը, քոյրիկը: Մեզի միացած է ջարդերէն հրաշքով ազատած հօրաքրոջս աղջիկը եւ դարձած նոր քոյրիկ:

Գիշերը նոր ամրութիւններ կը դիզենք փողոցի դրան ետեւ եւ ճրագը կը մարենք կանուխէն: Հայկական թաղը գերեզմանատուն է կարծես. ամայութիւն, լռութիւն…

Եւ ահա սրտաճմլիկ ճիչեր կը լսուին գիշերուան խորէն: Մէկը օգնութեան կը կանչէ խելագարի պէս: Կնոջ ձայն է, կասկած չի վերցներ: Մարմինս փուշ–փուշ կ'ըլլայ անկողնիս մէջ:

— Յիսուս–Քրիստոս, ջարդը սկսաւ,— կը բացականչէ մայրիկը:

— Փախինք,— կ'ըսեմ մեքենաբար: Տան էրիկ մարդը այժմ ես եմ, բայց վախէս փորս կը սկսի ցաւիլ: Մութ է. ոչ մէկուն դէմքը կը տեսնեմ: Ճիչը քանի մը անգամ կը կրկնուի, յետոյ ամէն ինչ կ'ընկղմի խոր լռութեան մէջ: Չենք քնանար մինչեւ առաւօտ եւ վայրկեանէ վայրկեան կը սպասենք, որ խորտակեն նաեւ մեր դուռը:

Երբ լոյսը կը բացուի, եւ փողոցը իր սովորական երեւոյթը կը ստանայ, մայրիկը սիրտ կ'ընէ դուրս ելլելու: Եօթը բերան ենք, հացի պէտք ունինք: Վերջապէս վերադարձին հաճի մամային ականջին կը փսփսայ.

— Երէկ գիշեր պոռացողը Գալուստենց հարսն է եղեր: Թուրք զինուոր մը տուներնին մտեր եւ փորձեր է պատուին դպիլ: Յոյները ուշանան նէ դեռ շատ բաներ պիտի գան գլուխնուս:

«Փորձեր են պատուին դպիլ» բառերը կը լսեմ, բայց չեմ հասկնար անոնց բուն իմաստը: Ինչպէ՞ս կը դպին մէկուն պատուին: Մտքիս մէջ վեր ու վար կը դնեմ մայրիկին խօսքը, կը մոտեցնեմ ջարդին, դանակին, ծեծին եւ չեմ կրնար լուծել: Ի վերջոյ կը դիմեմ իրեն:

— Գալուստենց հարսին ի՞նչ ըրեր են:

— Բան չկայ, ատ ալ մի հասկնար,— կը ջղայնանայ մայրիկը:

— Ի՞նչ ըսել է «պատուին դպեր է»,— կը յամառիմ ես:

— Տէր Աստուած, աս ինչ հետաքրքիր տղայ է,— կ'ըսէ մայրիկը եւ իբր թէ կը բացատրէ,— այսինքն՝ գէշութիւն ուզեր են ընել:

Խնդիրը լրիւ չի պարզուիր անշուշտ մանուկի հասկացողութեանս մէջ, սակայն «գէշութիւնը» շատ բան կը փրկէ: Այս կամ այն ձեւով թուրքին ըրածը միշտ գէշութիւն է: Ամենէն մեծ գէշութիւնը ջարդն է:

Անձկալից սպասումի քանի՞ օր կը տեւէ. քանի՞ շաբաթ գիշերները մեզի համար կը դառնան ահաւոր մղձաւանջ՝ չեմ կրնար ըսել: Կը յիշեմ սակայն, որ իրիկուն մը քոյրիկս սկսաւ բարձրաձայն լալ եւ հաց ուզել: Բոլորս ալ անօթի էինք, բայց կը լռէինք թուքերնիս կլլելով: Մայրիկը քօղածածկ դուրս կ'ելլէր երբեմն եւ մեզի կտոր մը հաց կը բերէր՝ չեմ գիտեր ինչպէս եւ ուրտեղէն: Այդ օրը չէր համարձակած փողոց ելլել: Ընդհատ–ընդհատ զէնքի ձայներ կը լսուէին:

Քրոջս լացը կը սաստկանար եւ կը վարակէր նաեւ զիս ու եղբայրս: Այդ պահուն է, որ յանկարծ մայրիկը դարձաւ մեզի եւ ըսաւ.

— Այս գիշեր գիտէ՞ք, Կաղանդ է: Եթէ ձայներնիդ կտրէք ու բարի կենաք՝ Կաղանդ Պապան մեզ ալ կը յիշէ եւ այցելութեան կու գայ, Կաղանդ կը տօնենք:

Սենեակին մէջ իսկոյն լռութիւն տիրեց: Ոչ ես, ոչ ալ քոյրիկս լրիւ կ'ըմբռնէինք Կաղանդին նշանակութիւնը, բայց մայրիկին յայտարարութիւնը կախարդական տպաւորութիւն գործեց մեր վրայ: Կաղանդը աղուոր, բարի, հրաշալի բան մը ըլալու էր: Լսած էինք Կաղանդ Պապայի բերած նուէրներուն եւ տեսակ–տեսակ ուտելիքներուն մասին: Ինծի թուեցաւ, թէ մեր սենեակը մէկ անգամէն պիտի լուսաւորէր եւ մեր առջեւ պիտի բացուէր փառաւոր սեղան մը:

Նստեցանք գետինը ծալապատիկ, քով քովի եւ սպասեցինք շունչերնիս բռնած:

Մայրիկը անկիւնէ մը մոմ մը հանեց, վառեց, ամրացուց շիշի մը բերանը եւ դրաւ դողդղացող մեր ծունկերուն միջեւ: Յետոյ բերաւ ափ մը լէպլէպի, յաղթական շարժումով մը թափեց մեր առջեւ ու աւելցուց.

— Տեսէք, Կաղանդը ձեզի ինչ համով բան կը բերէ, կերէք եւ աղօթեցէք:

Լէպլէպիներու բաժանումը ես կատարեցի քրոջս, եղբօրս եւ իմ միջեւ՝ հատիկ–հատիկ համրելով: Ոչ մէկ հատ աւելի, ոչ մէկ հատ պակաս: Բայց համրուած բան մը ի՞նչ կը դիմանայ: Ձեռքերնիս տեսաւ, բերաննիս չտեսաւ. մէկ վայրկեանի մէջ կերանք լմնցուցինք: Սպասեցինք քիչ մը, յուսալով, որ ետեւէն ուրիշ աղուոր բաներ ալ կու գան. ի զո՞ւր: Մոմի տկար լոյսին տակ մայրիկին դէմքը շատ տխուր երեւոյթ մը առած էր:

Պահ մը լուռ ու մունջ դիտեցինք մոմին երերացող եւ ցուրտ բոցը, ապա լսուեցաւ քրոջս լալկան ձայնը, որ կ'ըսէր.

— Սուտ է, կը խաբէք, ասիկա Կաղանդ չէ. մէկ մոմով Կաղանդ չի գար:

— Ասիկա սուտ Կաղանդ է,— ձայնակցեցայ ես, մէկ–երկու լէպլէպիով Կաղանդ չի գար:

Մայրիկը ձայն չհանեց. կարծեմ աչքերը կը սրբէր, արցունքները մեզմէ պահելու համար: Հաճի մաման է, որ քաջութիւնը ունեցաւ պատասխանելու.

— Ինչ ընենք, Կաղանդ Պապան մեր տան ճամբան մոռցեր է…

Այդ վայրկեանին ուժգին հարվածներով սկսան մեր դուռը ծեծել: Քոյրս ոտքի ցատկեց բացականչելով. «Կաղանդ Պապան է»: Մայրիկը խենթի պէս առաջ նետուեցաւ եւ մոմը մարեց: Իր շարժումէն հասկցանք, թէ սարսափելի վտանգ մը կար մեր դրան առջեւ: «Յիսուս–Քրիստոս»,— շշնջեց մեծ մայրիկը: Այդքան. անկէ ետք չհասկցայ, թէ ինչ եղաւ: Ու՞ր է մայրիկը, ինչ կ'ընէր հաճի մաման: Մութը այնքան զօրաւոր էր, որ մէկուն աչքին մէջ մատդ կոխէիր՝ չէր տեսներ: Վախէս կը դողայի եւ ակռաներս իրար կը զարնուէին: Դուրսէն թրքերէն հայհոյանքի բարձրաձայն խօսքեր կը հասնէին ականջիս:

Մեր դուռը դիւրին–դիւրին չէր բացուեր: Դրան ետեւը դրած էինք խոշորկեկ սնտուկը եւ հաստ գերան մը: Քանի մը անգամ լսեցի իրարու զարնուող երկաթներու ձայներ եւ դուռին զարնուող ուժգին հարուածներ: Շունչս բռնած՝ մտքէս կ'աղօթէի, որ Աստուած պաշտպանէ մեր դուռը: Իսկապէս ալ այդ գիշեր ան անխորտակելի մնաց:

Ի վերջոյ թուրքերը հեռացան…

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Սարսափի գիշեր»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարողանան կարդալ Մուշեղ Իշխանի «Սարսափի գիշեր»–ը և խմբերի բաժանված քննարկել, թե ինչպես կարող է այս հատվածը օրինակ ծառայել պատկերացնելու համար ցեղասպանության ընթացքը՝ ընտանիք միավորի կործանումով սկսած: Աշակերտները հատվածը կվերլուծեն որպես մեկը նման դեպքերից, որոնք հայ ժողովրդին այդպիսի անօգնական վիճակի մատնեցին և իրենց ազդեցությունը թողեցին նաև հաջորդ սերունդների վրա: Աշակերտները իրենց խմբերում մտորելով կպատկերացնեն, թե ինչ կարող էր պատահած լինել այդ դեպքից մի օր առաջ և ինչ է պատահելու հետո այդ ընտանիքին և հատկապես փոքրիկ տղային և կբեմադրեն սցենարը:

Քաջալերանք, մղում: Ուսուցիչը հարց է տալիս, թե եթե աշակերտների բնականոն կյանքում հանկարծ մի վատ բան պատահեր, և նրանք իրենց հարազատին կամ հարազատներին կորցնեին, և իրենք նոր պատասխանատվությունների բեռան տակ գտնվեին, ուր արագ կողմնորոշվել և որոշումներ կայացնել էր պետք, երբ այդ որոշումներից էր կախված նույնիսկ իրենց կյանքը, նրանք ի՞նչ կզգային և ի՞նչ կանեին: Հետո ուսուցիչը թելադրում է աշակերտներին իրենց զգալ պատմության փոքրիկ տղայի տեղում և այս բոլորը պատկերացնել որպես մի փոքրիկ տղա, որ ապրում է ցեղասպանության օրերին:

Դասավանդման հաջորդականություն և անհատական աշխատանք: Աշակերտները խմբերի են բաժանվում, կարդում են պատմությունը խմբերում և քննարկում են դեպքը՝ թե՛ անձնական և թե՛ հավաքական տարբերակով: Կարծիքներ են հայտնում, թե ինչ կարող էր պատահած լինել այդ գիշերից մեկ օր առաջ և հետո՝ մյուս օրերին: Խումբը համաձայնվում է մեկ սցենարի վրա և փորձեր է անում դա բեմադրելու համար:

Խմբերն իրենց սցենարները ներկայացնում են դասարանի առջև:

Այլ խմբերի աշակերտները հարցումներ են տալիս՝ սցենարի մասին ավելի լուսաբանելու համար:

Գնահատում/Արժևորում: Ուսուցիչը շրջում է խմբից խումբ, լսում է աշակերտների քննարկումները և տրված լուծումները: Սցենարներն ու աշակերտների դերակատարություններն էլ արժևորվում են այն հիմքի վրա, թե որքան իրապաշտ է պատկերացվածը և որքան համընկնելի ցեղասպանության ընթացքին ու ժամանակին:

ԲԱԺԻՆ 3. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ցանկալի է, որ ուսուցիչը նախորդ տարվա դասանյութը բազմացնի և ցրի աշակերտներին: Նախապես սովորածները կարևոր են յուրացնելու համար այս տարվա համար առաջարկված նյութերը՝ «Անպատիժ մնացած ոճրագործների դատաստանը» և «Թուրքերն ուրանում են Հայոց ցեղասպանությունը», որոնք մատուցված են այստեղ և որոնք նույնպես պետք է բազմացնել և բաժանել աշակերտներին:

Որպես հավելյալ ընթերցանություն՝ նկատի է առնված Լևոն Բաշալեանի «Ցեղին ձայնը» պատմվածքը և առաջադրված է համապատասխան դասածրագիր:

Առաջարկված է նաև Սարմենի «Հայրենի տուն» բանաստեղծությունը, որ վերապրումի և ապագայի հույսի գաղափարներ է արտահայտում:

18
ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԱԾ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Անպատիժ մնացած ոճրագործների դատաստանը»

ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԱԾ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ասվում է, թե թուրք ջարդարարներին մահապատժի ենթարկելու որոշումը տրվեց 1919 թ. աշնանը՝ Երևանում կայացած ՀՅ դաշնակցության 9–րդ ընդհանուր ժողովում: Որոշումը ծայր աստիճանի գաղտնի լինելով (ժողովի արձանագրություններում ոչինչ չի պահված)՝ միայն ակնարկվում է «Հատուկ գործի» մասին, որ «Նեմեսիսի գործողությունն» էր: Որոշված էր որոնել ջարդարարների թաքստոցը, ինչ կեղծանուններով և ինչ ծպտումի տակ էլ լինեին նրանք:

Նշանակված էր «Հատուկ հանձնախումբ»՝ Արմեն Գարոյի ղեկավարությամբ:

Ինչպես Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանն է գրում. «Հայերը տեսան և հասկացան քաղաքակիրթ կոչված մեծ ազգերի խոսքի արժեքը և դրանից հանեցին տրամաբանական եզրակացություն. ***Մուրճ կամ զնդան պետք է լինիս, ճշմարտություն չկա ուրիշ…***»:

Երբ հայերի բնաջնջման պատասխանատուները պատժի չէին ենթարկվում, հայի վրիժառու ձեռքը ինքը պետք է պատժեր ոճրագործներին:

Եվ այդպես, 1921 թ. մարտի 16–ին Բեռլինում, Սողոմոն Թեհլերյանի գնդակով գետին փռվեց Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատու՝ Թալեաթ Փաշան:

1921 թ. հուլիսի 19–ին Պոլսում, Միսակ Թոռլաքյանի ձեռքով սպանվեց Բաքվի հայերի ջարդարար՝ Ջիվանշիրը:

1921 թ. դեկտեմբերի 6–ին Հռոմում, Արշավիր Շիրակյանի գնդակով իր պատիժը ստացավ պատերազմի օրերին Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշան:

1922 թ. ապրիլի 17–ին Բեռլինում, Արշավիր Շիրակյանը և Արամ Երկանյանը միասին գործադրեցին Մեծ եղեռնի երկու այլ պատասխանատուների՝ Բեհաեդտին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը:

1922 թ. հուլիսի 25–ին Թիֆլիսում, Չեկայի շենքի առջև, Ստեփան Ծաղիկյանը, Պետրոս Տեր–Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը գետին փռեցին Մեծ եղեռնի պատասխանատուներից՝ Ջեմալ փաշային:

1922 թ. օգոստոսին Դուշանբեի մոտ գտնվող մի գյուղում սպանվեց Էնվեր փաշան: Ըստ վերջերս բացահայտված փաստերի՝ սպանողը կարմիրբանակային, հետախուզական ջոկատի հրամանատար, հայազգի Հակոբ Մելքումովն է եղել:

Էնվեր փաշան թաղված էր Տաջիկստանի մի գյուղում: 1996 թ. նրա աճյունը բերվեց Պոլիս և թաղվեց մեծ շուքով:

Թալեաթը ավելի բախտավոր էր: Նրա աճյունը 1943 թ. Բեռլինից Թուրքիա վերադարձվեց: Թուրք մամուլը, արձագանքելով Թուրքիայի այդ մեծ հերոսի վերադարձին, գրեց՝ «Նրա իդեալները իրականացած են այժմ»: Եվ իրոք, 1943 թ. հայությունը Թուրքիայում ջնջված էր արդեն: Հստակ է նաև մի այլ իրողություն, որ հայ ժողովրդի ջարդարարները այսօրվա Թուրքիայի ազգային հերոսներն են համարվում:

Թալեաթի և Ջիվանշիրի ահաբեկիչները ձերբակալվեցին, բայց անպարտ արձակվեցին: Նրանց արարքը կոտորածի ենթարկված ազգի արդար վրիժառություն համարվեց: Իսկ Խորհրդային Ռուսաստանում Ջեմալ փաշայի սպանության առիթով ձերբակալվեցին հարյուրավոր երիտասարդներ, որոնցից շատերն առանց դատավարության Սիբիր աքսորվեցին:

Երբ այսօր կարդում ենք այդ անձնուրաց հայորդիների հուշերը, հասկանում ենք նրանց մղում տվող հոգեվիճակը: Նրանք անսահման սեր ու նվիրում ունեին հայրենիքի հանդեպ և ցասում ու վրեժի խոր զգացում նրանց նկատմամբ, ովքեր փորձեցին բնաջնջել հայությանը:

19
ԹՈՒՐՔԵՐՆ ՈՒՐԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն սովորեցինք Հայոց ցեղասպանությանը նախորդող կոտորածների և 1915 թ. ծայր առած տեղահանությունների ու սպանդի մասին: Լսել ենք պատմություններ մեր տատիկներից ու պապիկներից, կարդացել ենք ականատեսների պատմածը: Բազմաթիվ հայ և օտար ցեղասպանագետներ, ուսումնասիրելով գոյություն ունեցող փաստաթղթերը, եզրակացրել են, թե՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի դեմ կատարվածը կարելի է անվարան **ցեղասպանություն** կոչել: Այդուհանդերձ, Թուրքիան ուրանում է, որ հայերի դեմ ցեղասպանություն է գործել:

Թուրքական ուրացումը Մեծ եղեռնի օրերից սկսվեց: Նախ գաղտնի պահվեց իրականությունը և ապա կատարվածը ներկայացվեց աննշան կարևորությամբ և հետո էլ արդարացումով:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ պարտված ու քայքայված Թուրքիան մեծ քայլերով դեպի կայուն իրավիճակ էր առաջանում: Իսկ այս նոր իրավիճակի մեջ եվրոպական երկրները և ԱՄՆ–ը փորձում էին Թուրքիայի հետ առևտրական կապերը վերահաստատել ու նրա տնտեսական և հանքային հսկա հնարավորություններն օգտագործել: Մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանը օգնության ձեռք էր պարզել Թուրքիային և սիրաշահում էր նրան՝ դաշնակիցների դեմ բարեկամ ունենալու նպատակով:

Աշխարհի մեծ պետությունների համար այլևս որևէ հետաքրքրություն ու կարևորություն չունեին Հայաստանը, հայ ժողովուրդն ու Հայ դատը: Իսկ Մուստաֆա Քեմալի ստեղծած նոր Թուրքիան ցանկանում էր մոռանալ անցյալը և կարիքն էլ չէր զգում խոսելու այդ մասին:

Օրինակ՝ 1922–1923 թթ., երբ Լոզանի խորհրդաժողովում մեծ պետությունները հայ գաղթականների հարցը բարձրացրին, Թուրքիայի ներկայացուցիչ Իսմէթ Ինոնյուն սպառնաց, թե եթե հայերի մասին որևէ հարց քննարկվի, ինքը ժողովը պիտի թողնի: Մեկ այլ օրինակ՝ 1934 թ., երբ հայ մեծանուն բեմադրիչ Ռուբեն Մամուլյանը Հոլիվուդի Մեթրո Գոլդուին Մեյըր ընկերության մեջ փորձեց ֆիլմի վերածել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, Թուրքիայի կառավարությունը կտրուկ սպառնալիքներով Միացյալ Նահանգների արտաքին գործերի նախարարությանը ստիպեց, որ միջամտի և արգելի ֆիլմի պատրաստությունը: Սպառնալու և Հայոց ցեղասպանության մասին խոսելն արգելելու ավանդույթը շարունակվում է: Թուրքիայի իշխանությունները սպառնում են կապերը խզել (կամ մի այլ սպառնալիք), եթե որևէ պետություն Հայոց ցեղասպանության հարցն արծարծի և ուզի այն ճանաչել:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աստիճանաբար կազմակերպված ու քաղաքական հասունության հասած հայերի մի կարևոր հատվածը Հայ դատի հետապնդման ճամփան բռնեց: Պայքարը ավելի մեծ թափ ստացավ Մեծ եղեռնի 50-ամյակից հետո, երբ հայերը Սփյուռքի տարբեր գաղթօջախներում, Մեծ եղեռնի 50-ամյակը նշող ցույցեր կազմակերպեցին և Թուրքիայից պահանջեցին ընդունել հանցանքը, ճանաչել ցեղասպանության փաստը: Միևնույն ժամանակ, Երևանում ևս չվախենալով քաղաքական ճնշումներից և հալածանքներից, հազարավոր հայեր փողոց դուրս եկան և «մեր հողերը» գոչելով՝ Արևմտահայաստանի հողերը հետ պահանջեցին Թուրքիայից:

Պահանջատիրության արարքներ էին նաև 1973 թ. սկսած մի շարք ահաբեկչական արարքներ՝ թուրք դիվանագետների դեմ: Նպատակը՝ աշխարհի ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելն էր:

Հայը պահանջատեր էր դարձել: Պետք էր արգելել: Եվ շեշտվեց ուրացման ու հակահայ քարոզչության Թուրքիայի քաղաքականությունը: Կարճ ժամանակի ընթացքում մեծ չափով գրականություն ստեղծվեց՝ «Հայկական հարցը» թուրքական տեսանկյունից բացատրելու համար: Թուրք պատմաբանները գրքույկներ հրատարակեցին՝ խեղճ, ծիծաղելի տրամաբանությամբ:

Ավելի ուշ, սիրաշահելով կամ բարձր վարձատրությամբ թուրքերը գործի լծեցին եվրոպացի և ամերիկացի պատմաբաններ և հրապարակեցին առերևույթ գիտական և համոզիչ, սակայն խեղաթյուրված ուսումնասիրություններ:

Այսօր, համացանցը լեցուն է Հայոց ցեղասպանությունը հերքող գրականությամբ և կայքէջերով: Բավական է Google-ի մեջ փնտրել օրինակ՝ Falsified Genocide, կամ՝ The Armenian genocide: The Turkish side of the story, www.tallarmeniantale.com կայքէջը մտնել, Justin Mc Carthy-ի կամ Heath Lowry-ի գրությունները ստուգել: Դրանք բոլորն էլ համոզիչ կերպով խոսում են այն մասին, թե Հայոց ցեղասպանություն ասվածը հայերի երևակայության արդյունքն է և հայ ազգայնամոլների հակաթուրք քարոզչությունը:

Մի քանի կեղծ պատճառաբանություններ թուրքական ուրացման գրականության հիմքն են կազմում: Հայոց ցեղասպանության պատմությունը սերտած յուրաքանչյուր հայ պատանի պետք է կարողանա հերքել այդ պատճառաբանությունները:

Հիշենք մի քանիսը.

- Դարեր շարունակ հայերն ու թուրքերը իրար կողք ապրել են խաղաղ: 19-րդ դարի կեսերին, հայերը սկսեցին ահաբեկչություններ կատարել, ապստամբություններ կազմակերպել և սարսափի մատնել թուրք իշխանություններին ու բնակչությանը: Երկրի ապահովությունը վտանգված էր. կառավարությունը պարտավոր էր պատժել հայերին:

- Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, հայերը ռուսների հետ միացած ուզում էին Թուրքիայում հեղաշրջում կատարել: Ապստամբությունը սկսվեց Վանից: Թուրք կառավարությունը պարտադրվեց մաքրել պատերազմական գոտիները և դավաճան հայերին արևելքի շրջաններից դեպի հարավ տեղափոխել:
- Հայերի տեղափոխության ընթացքում, մի քանի անհաճո դեպքեր պատահեցին: Որոշ թվով հայեր էլ չկարողացան ճամփի դժվարություններին դիմանալ և մեռան: Պատերազմի օրերին ավելի մեծ թվով թուրքեր զոհվեցին և շատերը՝ հայերի ձեռքով:
- Կատարվածը չի կարելի ցեղասպանություն կոչել, այլ՝ պատերազմի հետևանք, ուր տուժեցին երկուստեք:

2005 թ. և դարձյալ 2006 թ. ավելի ընդլայնված և նոր փաստաթղթեր ավելացված, թուրք պատմագետ Մուրաթ Բարդակչին հրատարակեց մինչ այդ գաղտնի մնացած Թալեաթ փաշայի «Սև գիրք» – ը, անձնական նշումների տետր, ուր մանրամասնորեն հիշատակված է յուրաքանչյուր վայր և այնտեղից տեղահանված հայերի թիվը: Այդ թվերի ընդհանուր գումարն է 924.158: Եվ սա այն պայմաններում, երբ թուրք և թրքամետ պատմաբանները պնդում են, թե պատերազմի տարիներին հնարավոր է, որ 300.000–600.000 հայ մեռած լինի, և որ տեղահանությունը կազմակերպված ծրագիր չի եղել:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Անպատիժ մնացած ոճրագործների դատաստանը» և «Թուրքերն ուրանում են Հայոց ցեղասպանությունը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտն արդեն քաղած պետք է լինի Հայոց ցեղասպանության մասին հիմնական գիտելիքներ: Այս դասանյութի նպատակն է ծանոթացնել հայոց արդարահատույց գործողություններին, այսինքն՝ պատմական արարքներ ընդդեմ ոճրագործների, որոնց դեմ Պոլսի դատարանը մահապատիժ էր արձակել, բայց որոնք ծպտված կամ ազատ ապրում էին դրսում: Աշակերտը պետք է սովորի նաև, թե ինչպես են թուրքերը ուրանում ճշմարտությունը և կարողանա դիմակայել հերքումներին:

Նյութեր.

1. Առաջարկված դասանյութ:
2. Մեջբերումներ:
3. Համացանց:
4. Լևոն Բաշալյանի «Ցեղին ձայնը»:
5. Սարմենի «Հայրենի տուն» բանաստեղծությունը:

Քաջալերանք, մղում: Նախքան դասը սկսելը, ուսուցիչը գրատախտակին գրում է Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և գործադրած թուրք ղեկավարների՝ Թալեաթ, Էնվեր…անունները. ապա հարցնում է դասարանին, թե ինչ գիտեն նրանց մասին և ինչ կատարվեց այդ անհատների հետ, երբ պատերազմը վերջանալուն պես բոլորն էլ փախուստ էին տվել Թուրքիայից: Ուսուցիչը քաջալերում է աշակերտներին կարդալ դասանյութը՝ պատասխանները իմանալու համար:

Ուսուցիչը դասարանում կարդում է ներփակված «Մեջբերումներ» Հայոց ցեղասպանությունը հաստատող և մերժող կարծիքները և շեշտում Հայոց ցեղասպանության ուրացման հսկա քարոզչության մասին: Դասանյութը, շատ համառոտ, հիմնական կետերի մեջ տալիս է դրանց պատասխանը:

Ուսուցիչը բազմացնում և դասարանին է ցրում դասանյութը կամ համակարգչով ներկայացնում:

Ապա սկսում է դասավանդումը:

Դասավանդման հաջորդականություն

ա. Ուսուցիչն առաջնորդում է առաջարկված դասանյութի ընթերցումը դասարանում: Popcorn մեթոդով բարձրաձայն ընթերցումը կարող է օգտակար լինել. նախորդ տարվա դասածրագրում բացատրված է մեթոդը:

բ. Դասարանը սկսում է քննարկել կարդացած նյութը, և ուսուցիչը քննարկումն առաջնորդում է այնպիսի ուղղությամբ, որ ավարտին աշակերտները վերը նշված հարցերի պատասխանն ունենան:

Անհատական աշխատանք

ա. Աշակերտները Վիքիպեդիայից կամ Հայոց ցեղասպանության թանգարանի կայքէջից կամ հենց անհատի անունով Google–ի մեջ, ցեղասպանության պատասխանատուներից մեկի մասին տեղեկություններ են քաղում, թե նա ինչ մասնակցություն ունեցավ Հայոց եղեռնի կազմակերպման և գործադրման մեջ և ինչ ճակատագիր և զեկույց են պատրաստում:

բ. Դարձյալ համացանցից, աշակերտները գտնում են թուրքական ուրացման մի կետ և դրա ընդլայնված դիմակայումը և զեկույց են պատրաստում:

Հավելյալ աշխատանք

ա. Աշակերտները կարդում են Սարմենի «Հայրենի տուն» բանաստեղծությունը և վերլուծական զեկույց են պատրաստում: Վերլուծումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- ի՞նչ տան կարոտի մասին է խոսում բանաստեղծը,
- ո՞ւր է այդ տունը և ինչո՞ւ է թախծոտ,
- ի՞նչ դեպքի հետևանքով են մարդիկ տունն ու արտերը լքել ու հեռացել,
- ի՞նչ տոնախմբության մասին է խոսվում:

բ. Անցյալ տարվա նման՝ աշակերտները նամակ են գրում քաղաքային գրադարաններին և առաջարկում են հայ ժողովրդի և Հայոց ցեղասպանության մասին գրքեր գնել գրադարանի համար: Կամ՝ դրամ հավաքելով մեկ գիրք են գնում և դասարանի կողմից նվիրում են տվյալ գրադարանին կամ նույնիսկ իրենց դպրոցի գրադարանին:

Գնահատում/Արժևորում: Ընթերցանության և քննարկման մասնակցությունը, համացանցում կատարած ուսումնասիրությունները և պատրաստված զեկույցները, նամակները գրադարաններին:

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ

Վանի ապստամբությունից հետո էր, որ թուրքական կառավարությունը որոշեց երկրի գոյությունը պաշտպանել:

(Էնվեր Զիա Քարալ, թուրք պատմաբան)

Բազմաթիվ գերմանացի սպաներ... վկայում են, որ մինչև 1915 թ. ապրիլ ամիսը, հայկական շրջանները բավական խաղաղ էին... Փաստորեն, գոյություն ունեցող բոլոր ապացույցները բերում են այն եզրակացության, որ արևելյան նահանգների հայ բնակչության տեղահանությունը արդեն որոշված էր... և Վանի և այլ վայրերի խռովությունները գործածվեցին իբրև հարմար պատրվակ՝ ի գործ դնելու համար զանգվածային տեղահանության ծրագիրը:

(Ուլրիխ Թրամփնըր, գերմանացի վկա պատմաբան)

Բոլոր արժանահավատ պատմաբանները նկարագրում են, թե հայերն ինչպես են ... ծրագրել Արևելյան Անատոլիայի ամբողջ թուրք բնակչության բնաջնջումը (ցեղասպանությունը), ինչպես հազարավոր անմեղ և անպաշտպան քաղաքացիներ են սպանել.... Նրանք նկարագրում են նաև ինքնապաշտպանության միջոցառումներ, որ իրավական կառավարությունը պարտադրվել է ձեռք առնել՝ պաշտպանելու համար օսմանյան պետականությունն ու նրա քաղաքացիներին:

(Ահմեդ Վեֆա, թուրք պատմաբան)

Դժգոհության ամեն մի արտահայտություն և բողոքի ամեն մի փորձ տեղական իշխանության կողմից նկատվում է որպես ապստամբություն: Իմ զեկույցում նկարագրածս քաղաքականությունը դեռ շարունակվում է՝ հայերին զրկել ազատությունից և ապահովությունից:

(Քլիֆորդ Լոյդ, Անգլիայի հյուպատոսը Էրզրումում)

Կասկածից դուրս է, որ գաղթի ընթացքում հայերը որոշ կորուստներ ունեցան: Դրա պատճառը որոշ չափով հայերի զինյալ դիմադրությունն էր, որոշ չափով էլ՝ հիվանդությունները, ավազակությունները, հարմար ճանապարհների և փոխադրության միջոցների չգոյությունը... Ուրեմն հայերի այն պնդումը, թե բռնագաղթի ընթացքում մեկ միլիոն հայ է կոտորվել ոչ այլ ինչ է, քան երևակայություն:

(Էնվեր Զիա Քարալ, թուրք պատմաբան)

Արևմտյան նահանգներից հայերի տեղահանության ընթացքի բնույթն ու տարողությունը ո՛չ մի կասկած չի թողնում, որ թուրքական կառավարությունը իրականության մեջ փորձում էր կայսրությունում հայկական ցեղը բնաջնջել:

(Ֆոն Վանգենհայմ, Գերմանիայի դեսպան Թուրքիայում)

Պատերազմի սկսելուց անմիջապես հետո, հայկական հրոսակախմբերը հարձակումներ էին կատարում ամբողջ արևելյան Անատոլուի տարածքում... Հրոսակախմբերը ռազմական մեծ վտանգ էին, ոչ թե աննշան գրգռություն:

(Ջասթին Մաքքարթի, ամերիկացի պատմաբան)

Հստակ է, որ օսմանյան իշխանությունը մտահոգված էր այն բանից, որ հայերը վտանգ են ներկայացնում՝ եթե ռազմավարական շրջաններում մնան և միտք ուներ հայերին այդ շրջաններից հեռու պահել: Նույնքան հստակ է, որ իշխանությունը միտք ուներ հայ բնակչությանը նոսրացնել, որպեսզի հայ վտանգավոր զանգվածը հեղափոխություն կազմակերպելու համար պետք եղած թիվը չունենար:

(Ջասթին Մաքքարթի, ամերիկացի պատմաբան)

Անիմաստ է թուրք կառավարության այն հայտարարությունը, թե «հայերին նոր բնակավայրեր են ուղարկում». կարավանների հետ վարվելու կերպը պարզորեն ցույց է տալիս, որ իսկական նպատակը բնաջնջում էր:

(Հենրի Մորգենթաու, Ամերիկայի դեսպան Թուրքիայում)

Ցավալի է թեկուզ եթե մեկ մարդ մեռնի, բայց դժբախտաբար պատմությունը լի է նման դեպքերի օրինակներով... և հստակ է, որ հայկական ապստամբությունների պատճառած թուրք և հայ անմեղ զոհերի համար պատասխանատու են հայ հեղափոխական կազմակերպությունները, որոնք հայերին թուրք իրավական իշխանության դեմ ապստամբության մղեցին:

(Ահմեդ Վեֆա, թուրք պատմաբան)

20
ԸՆԹԵՐՑՈՒՄ – «ՑԵՂԻՆ ՁԱՅՆԸ» ԵՎ «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ»

✧ ✧ ✧

ՑԵՂԻՆ ՁԱՅՆԸ

Լևոն Բաշալյան

(1863–1943)

Օր մը, մօտակայ գիւղացիները տղայ մը բերին ինծի, զոր ճամբուն եզերքը բռներ էին, միսմինակ քարի մը վրայ հանգչած ատենը: Հակառակ բոլոր բաղ-ձանքիս, ստիպուած էի մերժել այդ կարգի բոլոր դիմումները, որովհետեւ տեղ չունէի, բայց երբ տղան մօտէն զննեցի, անմիջապէս վար դրի զինք: Կորիւնի պէս բան մըն էր. գռուղ, առատ մազեր ունէր, երկու կողմէն ուռուցիկ ճակատով, կրակի աչքերով: Ուրկի՞ց էր, ո՞ւր կ'երթար: Չկրցաւ որոշ բան մը ըսել: Կը յիշէր միայն թէ հօտաղ մըն էր ինք: Օր մը Քիւրտերը լերան վրայ իր նախիրը քշեր տարեր էին՝ իրեն մէկ քանի հարուածներ տալէ ետք: Գիւղը դառնալուն արդէն մոխիր դարձած գտեր էր զայն, ու ա՛լ կենդանի էակ մը չկար հոն, ամէնքն ալ սպաննուած կամ փախած: Ինքն ալ ճամբայ ելեր էր, իրենները գտնելու յոյսով, ու անկից ի վեր կը թափառէր: Ձմեռ մը եկեր էր, գարուն մը անցեր էր, ու ան, այսպէս, կ'երթար լեռնէ լեռ, գիւղերէ ու քաղաքներէ անցնելով, առանց կանգ առնելու: Ինչպէս ապրեր էր, չէր գիտեր. ապրե՞ր էր: Ուրկի՞ց կու գար ձեռքովը լայն շարժում մը կ'ընէր, դէպի հիւսիս, Տերսիմի լեռնաշղթան:

Ալ ամբողջ հոգածութիւնս իրեն նուիրեցի: Խեռ, անհանդարտ, ապստամբ տղայ մըն էր: Ութ–ինը տարեկան ըլլալու էր, բայց անհաւատալի ոյժ մը ունէր, վայրի կատուի դիւրաշարժութիւն մը: Երեք անգամ վարժուհիին ձեռքէն փախաւ, անոր երեսը ճանկռելով ու շրջազգեստը բզկտելով: Երեք անգամուն ալ գիւղացիք գտան զինք հեռուները ու նորէն ինծի բերին:

Քիչ, քիչ, սակայն, կակուղցաւ, մարդոտեցաւ: Կերպարանափոխութիւնը սկսաւ այն օրէն, երբ սկսանք կարդալ սորվեցնել իրեն: Հարաւային Ամերիկայի մէջ, երբ վայրի ձիերու որսորդը պարանը կը նետէ ու անասունը իրեն կը քաշէ, ձին կը վրնջէ, կ'աքացէ, կը ծառանայ, փախչիլ, երթալու կատաղութեամբ մը: Այն ատեն որսորդը անոր ռունգերը կը բանայ, բերանը կը մօտեցնէ եւ իր շունչը կու տայ հոն, բոլոր ուժովը: Ա՛լ անասունը իրն է եւ տիրոջը կը հետեւի հեզ ու հաւատարիմ, առանց սանձի. անոր շունչը ունի իր մէջ:

Ինչ որ մեր բոլոր քաղցր խօսքերը, անոյշ վարմունքը չյաջողեցան ձեռք բերել, իրեն առջին դրուած այդ պզտիկ գիրքը կրցաւ ներգործել: Սագոյին հոգիին մէջ մեր շունչն էր, որ իր մէջ անցած էր, ու ալ մեզի կը կապէր զայն: Հիմա ժամերով

իր գիրքին վրայ գլուխը հակած կ'աշխատէր քակելու գիրերուն իմաստը, սորվելով մոլեգին ցանկությամբ մը: Հակառակ մեր բոլոր յորդորներուն կը յամառէր, կը մնար իր գիրքին վրայ, առանց մասնակցելու միւս տղոց խաղերուն:

Բան մը չէր գիտեր, վայրի տունկի մը պէս մեծցած՝ ազատ բնութեան մէջտեղ: Մէկ քանի շաբաթ ետքը, սկսանք իրեն խօսիլ տիեզերքի վրայ, Յիսուսի վրայ: Ան, աչքերը մեզի յառած, մտիկ կ'ընէր, հասկնալու տենչով մը՝ որ իր դէմքը կը մթագնէր: Իրեն կ'ըսէի թէ գերագոյն էակ մըն էր, որ բնութեան բոլոր բարիքները ստեղծեր էր մեզի համար, թէ անոր երախտապարտ մնալու էինք, որովհետեւ միշտ կը հսկէր մեր վրայ: Աղօթելու էինք, անոր ուղղելու էինք մեր մաղթանքները, որովհետեւ պիտի տար մեզի ինչ որ իրմէ խնդրէինք:

Իր կրկնապատկուած ուշադրութենէն կը հասկնայի, թէ ամբողջ ցնցում մըն էր, որ կը կատարուէր իր էութեանը մէջ:

— Ըսէ՛, Սագօ, դուն ալ բան մը ուզէ Աստուծմէ: Ի՞նչ կ'ուզես, որ տայ քեզի:

Գլուխը ծռեց ու պատասխան չտուաւ: Ի՞նչ կ'անցնէր իր մտքին ծալքերուն մէջ: Եղունգներովը ծունկին վրայ բացուած գիրքը կը թղթատէր, առանց ինծի նայելու: Վայրկեանները անցան: Կը ձգէի զինքը իր ներքին աշխատութեան հետ: Յետոյ, մէկէն, նորէն գլուխը վեր առաւ, իր վառող աչքերը ինծի յառեց ու ըսաւ.

— Կ'ուզեմ, որ խելք տայ ինծի:

Օ՛, գիրկս առի զինք ու սեղմեցի թեւերուս մէջ, անկուշտ համբուրելով իր աչքերը, որոնք հիմա թաց էին: Ցեղին ձայնն էր, որ կը խօսէր իր բերնով: Անգիտակցաբար, բնականօրէն, կը խնդրէր այն զէնքը, որ պիտի ապրեցնէր զինք ներկայ քաղաքակրթութեան մէջ. միակ ուժը, որ իրեն անհրաժեշտ էր: Արիւնին մէջ ունէր այդ պէտքը դէպի իմացականութիւնը, դէպի յաղթանակը: Ատով էր, որ իր Ցեղը տեւեր էր ու պիտի տեւէր:

— Չէ՛, այդ ձգտումով, դէպի այդ հորիզոնները լարուած կամքով մը, վախ չկայ, որ Հայությունը կորսուի, Պարո՛ն, յարեց բժիշկը՝ ոտքի ելլելով: Ամիսէ մը նորէ՛ն Հայաստան պիտի դառնամ:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Ցեղին ձայնը»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ — Աշակերտները պետք է կարողանան կարդալ և քննարկել Լևոն Բաշալյանի «Ցեղին ձայնը»: Խմբերի բաժանվելով, պետք է կարողանան պատրաստել մի ցանկ, որ պարունակում է իրենց կարծիքով այն, ինչ որ կարևոր է հայության համար՝ իր ձայնը լսելի դարձնելու այժմ և ապագայում: Անհատաբար, յուրաքանչյուրը պետք է կարողանա պատրաստված ցանկից ընտրել իր կարծիքով ամենակարևոր կետը և շարադրություն գրելով և օրինակներ բերելով, բացատրել, թե ինչո՞ւ է դա կարևոր:

Քաջալերանք, մղում — Ուսուցիչը հարց է տալիս. «Ձեր կարծիքով, կարդալ գիտենալը ինչո՞ւ է կարևոր»: Քննարկման ուղղությունը պետք է տանի նրան, թե արդյոք բավակա՞ն է միայն կարդալ գիտենալ, թե կարդալը կարող է ուրիշ բաների առաջնորդել: Ուսուցիչն անձնական պատասխաններից ավելի պետք է ուղղորդի դեպի հարցեր, որոնք ընդհանրապես հայ ժողովրդի շահերին կառնչվեն և հատկապես պետք է շեշտվի ցեղասպանությունը վերապրելու և անհատական հաջողություններով ազգի հարատևումը ապահովելու խնդիրը:

Դասավանդման հաջորդականություն —

ա. Աշակերտները դասարանում կարդում են նյութը:

բ. Ուսուցիչը հարց է տալիս, թե ինչպե՞ս կարդալ սովորելը օգնեց տղային վերագտնելու իր խելքն ու բանականությունը: Քննարկումը պետք է դառնա գրաճանաչության արդյունքների շուրջ՝ կրթություն, լուսավորություն, մտքի և տրամաբանության արթնություն:

գ. Կարելի է վիճաբանության նյութ դարձնել հեղինակի միտքը, թե հայ ժողովրդի մտավոր կարողությունների պահպանմանը պիտի սատարեն գրքերն ու գրականությունը:

դ. Ուսուցիչը աշակերտներին խմբերի է բաժանում: Խմբերը պատրաստում են ցանկ այն բաների, որ իրենց կարծիքով կարևոր է հայության համար՝ իր ձայնը լսելի դարձնելով այժմ և ապագայում: Խմբերը ներկայացնում են իրենց ցանկերը, և քննարկումը սկսվում է:

Անհատական աշխատանք — Յուրաքանչյուր աշակերտ ընտրում է մեկ կետ, իր կարծիքով ամենակարևորը, պատրաստված ցանկից և շարադրություն է գրում, օրինակներ բերելով և բացատրելով, թե ինչո՞ւ է դա կարևոր:

Գնահատում/Արժևորում — Ուսուցիչը գնահատում է շարադրությունները և արժևորում աշակերտի հասկացողությունը, նաև՝ նրա մասնակցությունը դասարանային քննարկումներին:

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Սարմեն (1901–1984)

Ես քեզ երբեք չեմ մոռացել,
Հոգեհատոր հայրենի տուն.
Մերթ եկել եմ՝ դուռդ բացել,
Կրակ վառել ձմռան ցրտում.
Մերթ դու ես քո հեռուներից
Թախիծիդ մեջ ինձ ժպտացել,
Իմ թանկագին, իմ սրտակից,
Ես քեզ երբեք չեմ մոռացել:

Վանա ծովին բարև արա,
Նրան ես շատ եմ կարոտել…
Բարդու գլխին էն բունը կա՞,
Ծեր արագիլն ապրո՞ւմ է դեռ:

Հավատարիմ մեր շունը կա՞,
Խաղո՞ւմ է դեռ մեր չար կատուն:
Ա՜խ, նրանց էլ բարև արա,
Իմ պաշտելի հայրենի տուն:

Ով ապրում է քո հարկի տակ,
Իրեն հավետ տե՞ր է կարծում:
Իմ զոհված հոր շիրիմը թանկ
Ո՞վ է այդպես անարգ պղծում…
Մեր արտերը ո՞վ է ցանում,
Ո՞վ է քաղում վարդերը մեր…
Ինչպես կրակն ատրուշանում,
Հույսս պահել եմ միշտ անմեռ…

Քո փրկության օրն էլ կգա,
Իմ հոշոտված հայրենի տուն:
Մեր դրոշի ցոլքը վկա՝
Տոն կլինի ու ցնծություն:

Լույսերն անշեջ կբոցկլտան,
Կանցնեն շարքերը փառապանծ,
Կհնչի երգը ցնծության
Այգաբացից մինչ այգաբաց:

ԲԱԺԻՆ 4. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Այս տարվա համար նախատեսված նյութերը, «Մշակութային ցեղասպանություն» և «Հայասպանության հարցը Միավորված ազգերի կազմակերպության մեջ» ավելի լավ ըմբռնելու համար, դարձյալ ցանկալի է, որ ուսուցիչը նախորդ տարվա դասանյութին անդրադառնա և աշակերտներին կարդալ տա այն: Իսկ այս տարվա համար առաջարկված նյութերը, որոնք մատուցված են այստեղ, պետք է բազմացնել և բաժանել աշակերտներին:

Որպես հավելյալ ընթերցանություն՝ նկատի է առնված Շահան Շահնուրի «Հայոց զանգակները»՝ «Թերթիս կիրակնօրյա թիվը» գրքից: Առաջադրված է նաև Արամ Անտոնյանի «Բան չկայ...» պատկերը նրա «Այն սև օրերուն» հավաքածուից:

Իններորդ դասարանի դասանյութն ավարտվում է քսաներորդ դարում իրագործված ցեղասպանությունների և մարդու իրավունքների կոպիտ խախտումների մոտավոր ցանկով:

21
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Մշակութային ցեղասպանություն»

Երիտթուրքերի կառավարությունը Արևմտյան Հայաստանը հայությունից դատարկեց: Մնում էր, որ հազարամյակների ընթացքում այդ հողերի վրա կառուցած նրա մշակութային կոթողներն էլ ոչնչացներ, որպեսզի իր տիրած երկրի վրա հայությունից ո՛չ մի հետք չմնար:

Առաջին հերթին փոխվեցին հայկական տեղանունները: Քարտեզների վրայից ջնջվեց «Հայկական վիլայեթներ» անվանումը, որ իրականում Արևմտահայաստանն էր կամ Թուրքիայի արևելքի այն 6 նահանգները, ուր կենտրոնացած էր հայությունը: Աստիճանաբար փոխվեցին նաև հայկական գյուղերի և քաղաքների անունները: Եթե ձեր տատիկը կամ պապիկը ծնված լինի Արևմտյան Հայաստանի մի գյուղում կամ քաղաքում, հազիվ թե այսօրվա Թուրքիայի քարտեզի վրա կարելի լինի այն գտնել:

Ավելի վատ ճակատագրի ենթարկվեցին հայկական մշակութային կոթողները: 1915 – 1916 թթ. Մեծ եղեռնի ընթացքում, արդեն այրում կամ պայթեցնում էին եկեղեցիներ, հայկական դպրոցներ ու այլ շինություններ:

Շրջապատի գյուղացիները հայկական եկեղեցու քարերը և այլ շինանյութերը կողոպտում ու դրանցով իրենց տներն էին շինում:

Օտար ճարտարապետների և հնագետների խմբեր, դրանց մեջ նաև ինքնությունը ծածկած հայեր, այցելում են այս շինությունները՝ չափագրում են և նկարահանում: Նրանց զեկույցները ցույց են տալիս, թե ներկա վիճակն անհամեմատելի է նախքան 1915 թ. նույն շինությունների լուսանկարների հետ: Այս խմբերը վկայում են, որ ոչնչացումը կատարվում է միտումնավոր կերպով: Չավերելու պարագայում հայ եկեղեցիները մզկիթի, թանգարանի, նույնիսկ ախոռի են վերածում կամ գործածում են զինվորների նշանառության վարժությունների համար որպես թիրախ: Ճանապարհներ կամ ամբարտակներ կառուցելու պատրվակով ավերում են հայկական շինությունները, ինչպես ավերեցին Անիի Սուրբ Փրկիչը: Կիլիկիո հայկական եկեղեցիների և բերդերի քանդակները ջնջված են, և դրանք իբրև բյուզանդական շինություններ են ներկայացվում: Կառավարությունը Պոլսո հայկական շինությունները վերանորոգելու իրավունք չի տալիս, որպեսզի դրանք էլ աստիճանաբար փլուզումի ենթարկվեն:

Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտը հավաքածու է կազմել, ուր ցույց է տրվում շինությունների այսօրվա իրավիճակը ի համեմատություն 1915 թ. առաջ եղածի:

22
ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ

✧ ✧ ✧

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ — «Հայասպանության հարցը Միավորված ազգերի կազմակերպության մեջ»

1945 թ. մայիսի 7–ին, երբ 50 ազգերի ներկայացուցիչներ Սան Ֆրանցիսկո հավաքված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հիմնադրման աշխատանքներն էին տանում, Հայ դատի հանձնախումբը մի խնդրագրով դիմեց այդ բարձր ատյանին: Խնդրագիրը նկարագրում էր Թուրքիայում հայերի դեմ կատարված սպանդի ու տեղահանման արդյունքում իրենց հայրենիքից արտաքսված ու գաղթական դարձած հայ ժողովրդի վիճակը և խնդրում էր լուծում գտնել: Խնդրագիրը հիշեցնում էր Վուդրո Վիլսոնի գծած Հայաստանի քարտեզի մասին, ուր Հայաստանի համար նախատեսված տարածքի մեծ մասը այժմ Թուրքիայի տիրապետության տակ էր գտնվում: Խնդրում էր այդ տարածաշրջանից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից, արևելյան մասը, որ այդ օրերին Թուրքիայում հազիվ էր բնակեցված, Սովետական Հայաստանին կցել, որպեսզի աշխարհացրիվ հայությունը կարողանա հավաքվել ու ազատ ապրել:

ՄԱԿ–ի այդ օրերի նիստերին Հայկական հարցը նյութ չդարձավ. սակայն, միջազգային մամուլը արձագանքեց և նպաստավոր արտահայտություններ արեց Հայկական հարցի մասին: Նույնիսկ արծարծվեց Կարսի ու Արդահանի՝ Սովետական Հայաստանին կցելու հարցը:

Դրանից հետո՝ 1971 թվականին, ՄԱԿ–ի մեջ մի անգամ ևս հիշվեց հայերի ջարդերի և տեղահանությունների մասին: Այդ ժամանակ Ռաֆայել Լեմկինի ջանքերով արդեն հաստատված էր «ցեղասպանություն» հասկացությունը և թե ինչ պայմաններ լրացնելու պարագայում է, որ դեպքը ցեղասպանություն է կոչվում: 1971 թ. ՄԱԿ–ի ենթահանձնախմբերից մեկում ուսումնասիրվում էր ցեղասպանության կանխարգելման և ոճրագործներին պատժելու միջոցները: 1973 թ. ենթահանձնախումբը այդ նյութի շուրջ կատարած իր ուսումնասիրությունների արդյունքը ներկայացրեց ՄԱԿ–ի Մարդու իրավունքների հանձնաժողովին:

Տեղեկագրի հոդված 30–ը 1915 թ. Եղեռնը հիշատակում էր՝ 20–րդ դարի ցեղասպանական արարքների իբրև օրինակ: Տեղեկագիրը վավերացվեց, բայց Թուրքիայի իշխանությունն իր ամբողջ ուժերը լարած, քաղաքական կապերն օգտագործելով՝ հակաքարոզչության դուրս եկավ: 1978 թ. տեղեկագրում ջնջվեց հոդված 30–ը:

Սփյուռքի քաղաքական կազմակերպությունների, մանավանդ՝ Հայ դատի հանձնախմբի տարած աշխատանքի մի շարք երկրների ճնշումին և տեղեկագրի զեկուցաբեր Բենջամին Ուիթիքըրի խոր ուսումնասիրություններին իբրև արդյունք, հոդված 30–ը վերանայվեց և Հայոց ցեղասպանությունը նոր տեղեկագրի մեջ հոդված 24–ի մեջ դարձյալ հիշվեց որպես օրինակ: Ի հեճուկս թուրք քարոզչության և տարած հակահայ աշխատանքներին, տեղեկագիրը վավերացվեց 1986 թ.:

1988 թ. հետո Հայ դատի հանձնախումբը ՄԱԿ–ի զանազան հանձնաժողովներում հետապնդել է նաև Ղարաբաղի հիմնահարցը: Եվ այսպես՝ մինչև Հայաստանի անկախացումը՝ երբ Հայաստանի պետությունը այլևս հնարավորություն ուներ հետևելու Հայոց ցեղասպանության ընդունման և ճանաչման գործին թէ՛ ՄԱԿ–ում և թե՛ զանազան պետությունների մոտ:

Ներքևում բերված է այն երկրների ցանկը, որոնք պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը.

1. Արգենտինա
2. Հայաստան
3. Բելգիա
4. Բելառուս
5. Կանադա
6. Չիլի
7. Կիպրոս
8. Ֆրանսիա
9. Գերմանիա
10. Հունաստան
11. Իտալիա
12. Լիտվա
13. Լիբանան
14. Հոլանդիա
15. Լեհաստան
16. Ռուսաստան
17. Սլովակիա
18. Շվեդիա
19. Շվեյցարիա
20. Ուրուգվայ
21. Վատիկան
22. Վենեսուելա
23. Ավստրիա

Նաև՝ երկրներում նահանգներ կամ շրջաններ, որոնք առանձին ճանաչել են Հայոց ցեղասպանությունը.

1. Իսպանիայի Բասկերի շրջանը և Կատալոնիան
2. Ուկրաինայի Ղրիմը
3. Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսը
4. Կանադայի Քվեբեկը
5. Հարավային Ավստրալիան
6. Շոտլանդիան
7. Ուելսը
8. Հյուսիսային Իռլանդիան
9. ԱՄՆ–ի 50 նահանգներից 43–ը

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Մշակութային ցեղասպանություն», «Հայասպանության հարցը Միավորված ազգերի կազմակերպության մեջ»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտներն արդեն քաղած պետք է լինեն Հայոց ցեղասպանության մասին հիմնական գիտելիքներ: Այս դասանյութը յուրացնելով՝ նրանք պետք է կարողանան ըմբռնել, որ Հայոց ցեղասպանությունը միայն մարդկային կորուստ չէր: Թուրքերը բացի այն, որ Արևմտահայաստանը մաքրեցին հայերից, ջնջեցին նաև նրանց թողած մշակութային կոթողները, այսինքն՝ ֆիզիկական հետքերը: Այս դասանյութով, աշակերտները նաև պետք է որոշ չափով ծանոթանան ՄԱԿ–ի մեջ Հայոց ցեղասպանության նյութը արծարծելու Հայ դատի հանձնախմբի աշխատանքների հետ:

Նյութեր/միջոցներ

1. Առաջարկված դասանյութ:
2. Համացանց:
3. Վարժության թերթիկներ:

Քաջալերանք, մղում: Նախքան դասը սկսելը, ուսուցիչը հարց է տալիս, թե ինչո՞ւ են թուրքերը հայկական եկեղեցիներն ավերում և կամ այժմ էլ նույնը ազերիներն են անում հայկական կոթողներն ու խաչքարերը ավերելով: Ի՞նչ ազդեցություն ունեն դրանք մարդկային հիշողության վրա և ի՞նչ քաղաքական նշանակություն ունեն: Քննարկումը 10 րոպեից ավելի չպետք է տևի:

Ապա՝ երկրորդ քննարկումը՝ ևս 10 րոպե, ինչո՞ւ այսքան աշխատանք կամ ի՞նչ է պետք Հայոց ցեղասպանությունը աշխարհում ճանաչել տալու համար:

Ուսուցիչը բազմացնում և դասարանին է բաժանում դասանյութը կամ համակարգչով ներկայացնում: Ապա՝ սկսում է դասավանդումը:

Դասավանդման հաջորդականություն:

ա. Ուսուցիչն առաջնորդում է առաջարկված դասանյութի ընթերցումը դասարանում: Որևէ մեթոդի կիրառումը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

բ. Դասարանը սկսում է քննարկել կարդացած նյութը և ուսուցիչը քննարկումը առաջնորդում է այնպիսի ուղղությամբ, որ ավարտին աշակերտները վերը նշված հարցերի պատասխանն ունենան:

Անհատական աշխատանք:

ա. Աշակերտները Վիքիպեդիայից կամ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի կայքէջից կամ ընդհանրապես համացանցից գտնում են, թե բացի երկրներից համաշխարհային ո՞ր մեծ կազմակերպություններն են ճանաչել Հայոց ցեղասպանությունը և զեկույց են պատրաստում:

բ. Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի կայքէջը բազմաթիվ օրինակներ ունի հայկական մշակութային կոթողների ավերումը փաստագրող: Աշակերտները կարող են բերված օրինակները վերցնել և տեղադրել իրենց նկարած Թուրքիայի մոտավոր քարտեզի վրա: Այսպիսով՝ կստացվի որոշ պատկեր թուրքական ավերումներից:

գ. Աշակերտները լրացնում են վարժության թերթիկը:

Հավելյալ աշխատանք:

ա. Աշակերտները լրացնում են «Հայկական կոթողները Թուրքիայում» հարցաթերթիկը:

բ. Աշակերտները, դպրոցի գրադարանում ուսումնասիրություն կատարելով, ցանկագրում են Հայոց ցեղասպանության և Հայկական հարցին վերաբերող գրքերը և յուրաքանչյուրի մասին մի քանի տող ծանոթություն են գրում:

գ. Աշակերտները պարտականություն են ստանձնում կարդալ Արամ Անտոնյանի «Այն սև օրերուն» հավաքածուից: «Բան չկայ...» ն, որ բերված է հապավումներով: Դասարանում կազմակերպվում է զրույց–վերլուծություն Հայոց ցեղասպանության գրականության այս նմուշի և պարփակած թեմաների շուրջ:

դ. Ներփակված է մի մոտավոր ցանկ 20–րդ դարում իրագործված ցեղասպանություններից և մարդու իրավունքների ծայրահեղ խախտումներից: Աշակերտները խմբերի բաժանված վերցնում են յուրաքանչյուրը մեկ օրինակ և համացանցում ուսումնասիրություններ կատարելով՝ կարճ զեկույց են պատրաստում:

Գնահատում/Արժևորում: Ընթերցանության և քննարկման մասնակցությունը, համացանցում կատարած ուսումնասիրությունները և պատրաստված զեկույցները, վարժության թերթիկների լրացումը:

Վարժություն

Ընդհանրացումները հիմնավորել փաստերով:

Ներքևի նախադասությունները ընդհանրացումներ են, որոնցից յուրաքանչյուրը պետք է կարողանաք հիմնավորել երկու փաստերով:

1. Օսմանյան կառավարությունը հայերի բնաջնջման իր ծրագիրը շատ գաղտնաբար էր գործադրում:

ա)

բ)

2. Հայոց ցեղասպանության վերաբերող նյութերը քիչ են Թուրքիայի պաշտոնական արխիվներում:

ա)

բ)

3. Օսմանյան կառավարությունը հայ ժողովրդի բնաջնջումը իրագործեց տարբեր փուլերով:

ա)

բ)

4. Ցեղասպանության հետևանքով հայ մշակույթը մեծ վնասներ կրեց:

ա)

բ)

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հայկական կոթողները Թուրքիայում

ՄԱԿ–ի «Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խմբակցություն»–ը Հայաստանին հատկացրած մի տեղեկագրի մեջ, 1976 թ., խոսելով Թուրքիայում հայկական մշակութային կոթողների դիտավորյալ փչացման մասին, եզրակացնում է՝

«Մենք պետք է ցանկանայինք տեսնել ավելի մեծ հոգածություն արևելյան Թուրքիայի հայկական կոթողների հանդեպ. թեպետ պետք է զգուշացնենք, որ արևմտյան պետությունները կամ ՅՈՒՆԵՍԿՕՆ Թուրքիայի վրա այս խնդրի վերաբերյալ որևէ ճնշում չբանեցնեն. նման ճնշումը կարող է միայն արագացնել դեռ կանգուն մնացած կոթողների ավերումը»:

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ «Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խմբակցություն»–ը այսքան մեղմորեն և առանց պահանջի է արծարծում հայկական կոթողների պահպանման հարցը:
2. Ձեր կարծիքով ինչո՞ւ Թուրքիայի վրա որևէ ճնշում կարող է արագացնել հայկական կոթողների ավերումը:
3. Ի՞նչ է ՅՈՒՆԵՍԿՕՆ (UNESCO) և արդյոք կարո՞ղ է հայկական կոթողների պահպանման հարցը հետապնդել. եթե կարող է, ինչո՞ւ չի անում:

23
ԸՆԹԵՐՑՈՒՄ – «ՀԱՅՈՑ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ»

✧ ✧ ✧

ՀԱՅՈՑ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ

Շահան Շահնուր (1903–1974)

— Ո՞րն է այն ուժը,— հարցուց Մուսթաֆա Քեմալ տոքթ. Զիպպէրմանին,— որ հայոց հայրենասիրութիւնը կ'ամրապնդէ, հակառակ իրենց կրած ազգակործման ջարդերուն: Ահեղ ուժ մըն է ան, անօրինակ եւ արտասովոր բան մը, որուն պէտք է ծանօթանանք, կարենալ գործելու համար ըստ այնմ:

— Հաւատացէ՛ք, որ ծանօթ պիտի չըլլայի բնաւ հայոց արտասովոր հայրենասիրութեան պատճառին, եթէ դիպուածը օգնած չըլլար ինծի,— պատասխանեց տոքթ. Զիպպէրման:

— Ճշմարիտ գիտունը միշտ համեստ կ'ըլլայ,— ըսաւ Քեմալ:

— Ժողովուրդի մը հայրենասիրական զգացումները ջնջելու համար,— սկսաւ տոքթ. Զիպպէրման,— անհրաժեշտ է ջնջել ժողովուրդն իսկ: Այդ նպատակով է, որ մենք ձեզի թելադրեցինք խմբական տեղահանութիւնը աւելցնել՝ տեղական ջարդերու ձեր հին մեթոտին վրայ, մեթոտ՝ որ անբաւական էր: Արդիւնքը ծանօթ է ձեզի: Բայց ժողովուրդ մը՝ միայն ներկայ չէ, այլ նաեւ անցեալ, միայն միս ու ոսկոր չէ, այլ նաեւ անշունչ իր: Այդ պատճառով է, որ դուք քանդեցիք նաեւ անցեալը, որ կ'ապրէր անշունչ իրերու մէջ եւ բնաջնջեցիք ձեռագիրն ու տպագիրը, պայթեցուցիք Անիի աւերակները եւ խաչքարով պատեցիք փողոցները: Բայց, ափսո՛ս, դուք մոռցաք անհետացնել ու բնաջնջել առաւելապէս հիմնական բան մը, բան մը՝ որ հայ ժողովուրդին զգացումները իր մէջ կը խտացնէր առաւելագոյն չափով…

Գիտուն մարդը աւելցուց.

— Մոռցաք հայոց զանգակները:

Ու մինչ Քեմալ բողոքի շարժում մը կ'ընէր, գիտունը յարեց.

— Բարեբախտաբար մենք կայինք: Գերման զինարանները, որ անհրաժեշտ պահանջքը ունէին մետաղի, պատերազմի այդ տարիներուն. դիմեցին ձեզի՝ եւ ղրկեցիք գերման զինարանը: Կը յիշէք թերեւս, որ այն ժամանակ գնդապետի աստիճան ունէի ես եւ կը հսկէի փոխադրութեանց:

Զանգակներուն թիւը շատ մեծ էր: Կային, որ պապերու պէս յաղթամարմին էին եւ կային, որ թոռնիկներու պէս նուրբ՝ իրենց արդարի ձայնով: Կային, որ իրենց վրայ ունէին արձանագրութիւններ եւ զարդեր, կային, որ մերկ էին: Կը յի-

շեմ նաեւ իրենց խլուած լեզուները: Այո՛, փրցուցիք իրենց լեզուները, զիրենք լռեցնելով վերջնապէս: Պիլէմէտիկէն մինչեւ Էսկիշէհիր ուղեկցեցայ իրենց վակոններուն. շոգեկառքը գիծէ դուրս ելաւ երկու անգամ: Կարծէք կը մերժէին մեկնիլ զանգակները հայոց աշխարհէն. անոնք, որոնք եկած էին Վասպուրականէն եւ Մշոյ դաշտէն, Ակնայ գաւառէն եւ Տաւրոսէն, անոնք որ եկած էին լեռնային գիւղերէն կամ բերրի այգեստաններէն:

Զանգակները կը մերժէին երթալ, քաջ գիտնալով, որ իրենց մեկնումով պիտի լռէր վերջին ձայնը հայուն: Բայց գացին ու ծուլուեցան…

— Ձեզ մտիկ կ'ընեմ,— ըսաւ պարզապէս Մուսթաֆա Քեմալը:

— Դժբախտաբար մենք միշտ կը մոռնանք,— աւելցուց գիտունը,— որ մարդ էակին արարքներէն ո՛չ մէկը կատարեալ է: Այդ իսկ պատճառով դուք չկրցաք բնաջնջել ամէն ինչ հոս մնաց զանգակ մը՝ վերջինը: Հայոց այդ վերջին զանգակն է, որ կը հնչէ անվերջ եւ ձայն կու տայ իրեններուն, անոնց՝ որոնք ցրուած են աշխարհէ աշխարհ, ծովէ ծով: Կ'ըսեն, թէ աւերակ եկեղեցիի մը մէջ մնացած զանգակ մըն է ան, շատ հին եւ տեսքով անշահ, բայց ան կը ղօղանջէ անդադար: Իր ճիշդ մօտը գտնուող թուրքը բան չի լսեր, մինչ երկրագունտիս ամենէն հեռաւոր անկիւնն իսկ ինկած հայերէն ոմանք՝ իրենց զանգակը կը լսեն յստակութեամբ: Սփիւռքի մէջ կան նաեւ հայեր, որ անգիտակ են: Անոնք իրենց ձեռքը կը դնեն իրենց կուրծքին եւ կ'ըսեն. «Սիրտս խօսեցաւ»… Անոնք չեն գիտեր, որ հեռաւոր հողին խորերէն եկող ձայնն է, որ լեզու ելած է:

— Կ'ընդունիմ, ըսաւ Քեմալ իր կանաչ աչքերը թարթելով, կ'ընդունիմ, որ առասպելը գեղեցիկ է եւ իմաստալից, միայն թէ ես իրապաշտ եմ, կը հիմնուիմ իրականին վրայ եւ ոչ թէ երեւակայականին…

— Ոչի՛նչ այնքան իրական է, ընդմիջեց տոքթ. Զիպպէրմանը, որքան մեր երեւակայութիւնը եւ միայն մեր երեւակայութիւնն է, որ իրական է:

— Իրակա՞ն… Ուրեմն ցոյց տուէք մեզի այդ զանգակը, ցոյց տուէք մեզի անոր տեղը…

— Ամենայն սիրով,— ըսաւ գերմանացին:

Բայց մեր զանգակը միշտ կը հնչէ, ան ամէն ժամ եւ անվերջ կը ղօղանջէ, որովհետեւ թուրքերը չկրցան գտնել զայն:

ԴԱՍԱԾՐԱԳԻՐ՝ «Հայոց զանգակները»

Ուսուցիչ/ներ _____

Դպրոց _____

Դասարան _____ ***Տևողություն*** _____

Նպատակ: Աշակերտները պետք է կարդան և վերծանեն խոհրդապաշտության դերը Շահան Շահնուրի «Հայոց զանգակները» գրության մեջ, ուշադրությամբ ընկալեն զանգի նշանակությունը, նրա իմաստը և դերակատարությունը և թե ինչո՞ւ է զանգը գործածվել որպես հայ ժողովրդի հարատևման խորհրդանիշ: Խմբերի բաժանված, աշակերտները կհասնեն տվյալ նյութի լիարժեք հասկացողության և բարձր մակարդակի մտածողության, հարցումներ կձևակերպեն:

Քաջալերանք, մղում: Ուսուցիչը դասարանին է ուղղում նույն հարցը ինչ որ տրված է գրության սկզբում. այն է՝ «Ո՞րն է այն ուժը, որ հայոց հայրենասիրությունն է ամրապնդում՝ հակառակ իրենց կրած ազգակործան ջարդերի»:

Դասավանդման հաջորդականություն: Դասարանում որևէ ազդեցիկ մեթոդով կարդացվում է նյութը:

Ուսուցիչը հարցեր է տալիս՝ վստահ լինելու համար, որ աշակերտները հասկացել են կարդացածը:

Սկսում է քննարկումը խորհրդապաշտության և զանգի շուրջ:

Ուսուցիչը մեկ առ մեկ թվում է ներքևում բերվածները, և աշակերտները պատասխանում են, թե յուրաքանչյուրն ինչ իմաստ է ներկայացնում տվյալ պատմության հետ կապված.

Մուսթաֆա Քեմալ.

Ջիպպէրման.

Հայերին բնաջնջելու համար թուրքերի գործածած միջոցները.

Զանգակներ.

Գերմանացիների մասնակցությունը.

Գնացքներ.

Սփյուռքահայ.

Հայկական հոգին կամ հայրենասիրությունը և այն խեղդելու փորձեր:

Անհատական աշխատանք: Խմբերի մեջ բաժանված, աշակերտները հարցումներ են պատրաստում: Հարցումները պետք է լինեն պարզ, որին կարելի է պատասխանել մեկ երկու բառով, կամ՝ ավելի բացատրական, որի պատասխանը ավելի առարկայական է և նյութի իմացություն ու նյութի վերաբերյալ կողմնորոշում է պահանջում: Յուրաքանչյուր խումբ իր պատրաստած հարցումները ուղղում է դասարանին: Դասարանից պատասխանում է նա, ում թիվն է կանչվում. այսինքն՝ տրված հարցի պատասխանը գտնում է խումբը միասին, վստահ լինելով, որ խմբի անդամները բոլորն էլ յուրացրել են պատասխանը, որովհետև խումբը խոսնակ չունի. պատասխանում է նա, ում թիվն է կանչվել:

Գնահատում/Արժևորում: Արժևորումը կատարվում է՝ հիմնված աշակերտների պատրաստած հարցերի և տված պատասխանների վրա, որոնցով պարզ է դառնում, թե նրանք որքան են հասկացել և յուրացրել նյութը:

ԸՆԹԵՐՑՈՒՄ – «ԲԱՆ ՉԿԱՅ...»

✧ ✧ ✧

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻ (1875–1951)

«Այն սեւ օրերուն» հատորից

Ա

Երրորդ առտուն էր, որ կ'արթննայինք Գարլըքի այդ բարձունքը, այծեմազէ հիւսուած խոշոր սեւ քուրձի մը տակ, որ երկու անտաշ կոճղերու ծայրը հաստատուած՝ իբր վրան կը ցցուէր մեր վրայ: Աւելի քան յիսուն հոգի էինք այդ վրանին տակ, կին՝ էրիկմարդ, պզտիկներ, խառն ի խուռն, սեղմուած կուրծք կուրծքի, ոջիլներու եւ հազար տեսակ ճճիներու ճշմարիտ ովկիանոսի մը մէջ:

Եօթ ամիսէ ի վեր դէպի Մէսքէնէ քշուող բոլոր գաղթականները այդ լերկ ու քարոտ սարին կատարը բանակած էին եւ ամէն մէկ կարաւան՝ ճամբաներուն երկայնքէն հաւաքուած ոջիլները բերեր այդտեղ ձգեր էր անապատ իջնելէ առաջ: Գետինը՝ քարացած հողին մէջ մխուած քուրջի կտորներ, այլեւս գունաթափ մետաքսի ծուէններ, աղտոտ ու անճանաչ երանգներու մօզաիք մը, որ իբր տախտակամած ծածկեր էր ամբողջ տարածութիւնը: Եւ հերուան հագուստներու այդ աւերակներուն վրայ այն սոսկալի մակաբոյծները կը վխտային, կ'ոստոստէին՝ ինչպէս եռացող հեղուկի մը փրփուրը կազմող պղպջակները:

Մարդիկ վարժուեր էին այլեւս անոնց եւ երբեմն կը քաշէին կը հանէին այդ քուրջերէն մէկը ու խնդալով ցոյց կու տային իրենց քովիններուն: Ոջիլները անոնց վրայ կ'եռային, կը խժային կարծես՝ խորիսխներուն երկայնքը խռնուած մեղուներու բանակի մը պէս:

Հալէպը մեր դէմն էր, հազիւ կէս ժամ հեռու, բայց արգիլուած քաղաքն էր մեզի համար որ մասնաւոր հսկողութեան տակ կը գտնուէինք եւ չէինք կրնար Գարլըքէն հեռանալ: Մօտը, գրեթէ տաս վայրկեան անդին, պիստակի գաճաճ ծառերու եզերուած պողոտայի մը ծայրը, ահագին ջրամբար մը կար, բայց մինչեւ հոն երթալու եւ լուացուելու համար ստիպուած էինք ենթարկուիլ հազար տեսակ ձեւակերպութիւններու, ու նորէն չէինք կրնար դէպի ջրամբարը ուղղուիլ, առանց ժանտարմայի մը ընկերակցութեան: Եւ այդպէս առտու կանուխ՝ տակաւին քնատ ժանտարմները շատ տրամադիր չէին ըլլար «անասունները ջուրի տանելու», ինչպէս կ'ըսէին ծիծաղելով:

Բայց արդէն ուրիշ գործ ունէինք: Մարմիննիս մաքրելէ առաջ պէտք էր մեր հագուստները ստկել: Որովհետեւ գիշերուան ընթացքին բիւրաւոր ոջիլներ բոյն դրած պէտք է ըլլային անոնց մէջ:

……

Պզտիկ տղաքը միայն լաւագոյն ջարդը կու տային անոնց, երբ պատահմամբ լրագիր մը կամ ուրիշ որեւէ թուղթի կտոր մը կ'անցնէր ձեռքերնին: Իսկոյն կը բռնկցնէին զայն ու կը նետէին այդ անհամար բազմութիւններուն վրայ: Եւ այն պաշտելի անգիտակցութեան տարիքին մէջ ուր կը գտնուէին այդ դժբախտ տղաքը, հերուան բոլոր զբօսանքներուն խնծիղէն որբացած իրենց պզտիկ սիրտը անսահման ցնծութեամբ մը կը լեցուէր երբ բոցերուն ազդեցութեան տակ այն բիւրավոր ոջիլները յաջորդաբար խարկուելու կը ճարճատէին ու կը ցատկէին հրթիռներէ խուսող կայծերու պէս:

Ճշմարիտ հրախաղութիւն մը, որ կը շէնցնէր իրենց զրկուած հոգին եւ խել–խօլ ոստոստումներու, պարերու, բայց մանաւանդ ուրախութեան կանչերու խառնարանի մը կը վերածէր կեանքին բոլոր երանութիւններէն խլուած այդ մանուկներուն սովորաբար տխուր ու ողբագին խումբերը:

Բ

Հրացանի հարուած մը յանկարծ մեզ սթափեցուց մտալլկիչ երազանքէն՝ որուն տակաւ մատնուէր էինք այդ անախորժ ու սպանիչ զբաղման մէջ, որ տաժանք մըն էր ինքնին:

Քանի ատեն կար որ զէնքի ձայները մեզ չէին զարմացներ եւ ճամբուն ընթացքին այլեւս բոլորովին վարժուեր էինք մեր գլխուն մօտէն անցնող, երբեմն նոյնիսկ մեր մազերը խանձող գնդակներու չարագոյժ սուլիւնին: Չվախցանք այդ հրազէնի ձայնէն: Բայց կայքին մէջ առաջ եկած իրարանցումը եւ հետաքրքրութիւնը մեզ ստիպեցին, որ ետեւնիս դառնանք:

Անմիջապէս՝ երեք–չորս հարուածներ ալ, յետոյ համախումբ հրացանաձգութիւն մը միանգամայն տասը ժանտարմաներու կողմէ, որոնք Գարլըքի աջ կողին եզերքը դիրք բռներ էին ու նշան կ'առնէին բանի մը որուն ինչ ըլլալը չէինք տեսներ:

Բարձունքը՝ այդտեղ՝ բոլորովին սեպ էր, ուր կը քօղարկէր գառիվայրը որ Մէսքէնէ իջնող կառուղիին կը յանգէր: Կ'երեւայ՝ հրացանաձգութեան առարկան այդ զառիթափին վրայ կը գտնուէր որ չէինք կրնար տեսնել:

Ոտքի ելանք եւ փութացինք յառաջանալ: Բայց ժամտարմա մը, հայհոյութիւններու տարափ մը բերնին, հրամայեց, որ առաջ չանցնինք:

Յետոյ նորէն համախումբ հրացանաձգութիւն մը ըրին, բայց կ'երեւայ թէ ան ալ ապարդիւն մնաց, որովհետեւ դժգոհ էին ու կը հայհոյէին: Այլեւս դադրեցուցին զէնքի արձակումը: Իրենցմէ երկուքը՝ մինչեւ մօտակայ պահակատեղին վազեր եւ մէյ մէկ ձիու վրայ ցատկելու արագօրէն կը սուրային սարին կողն ի վար:

Կին մը կը պոռչտար վրանի մը մօտ, շրջապատուած ուրիշ հինգ–վեց կիներէ որոնք արիւն–քրտինք կը մտնէին զայն զսպելու համար:

— Զարկի՛ն, մեռցուցի՛ն,— կը պոռար հեւալէն:

— Չէ՛, հոգ մի՛ ըներ, բան չկայ,— կ'ըսէին միւսները՝ աշխատելով զայն ապահովցնելու: Բայց յայտնի էր, որ իրենք ալ վստահ չէին ըսածին, որովհետեւ, ամէն

անգամ, որ կը յաջողէին զայն քիչ մը հանդարտեցնել ու շունչ առնել, իսկոյն անէծք մը կը թրթռար իրենց շրթունքին ծայրը:

— Կոտրտի՛ն… օր արեւ չտեսնե՛ն…

Ապահովաբար այն հրացանաձգութիւն կատարող ժանտարմաներու համար էին այդ անէծքները:

Բայց կնոջ հանդարտութիւնը երկար չէր տեւեր: Հազիւ կը յաջողէին զայն զսպել, ու նորէն կը սկսէր մաքառիլ, աշխատելով խորտակելու թեւերու այն շղթան, որ զինքը կը կաշկանդէր: Եթէ ազատ ըլլար, տարակոյս չկայ, որ պիտի խոյանար դէպի ժանտարմներու խումբը, որոնք այլեւս դադրեցուցած էին հրացանաձգութիւնը եւ հետաքրքրութեամբ սարն ի վար կը նայէին:

Նայուածքը երբէք չէր բաժնուեր անոնցմէ եւ ահաւոր ատելութեան մը հուրքը կը ժայթքէր աչուքներէն:

Մյուսները չէին թողուր զինքը, նոյն իսկ կը խոշտանգէին ալ, այդպէս զսպելու աշխատած ատեննին, որովհետեւ գիտէին, որ եթէ թողուն՝ ժանտարմաներուն վրայ պիտի վազէր, պիտի նախատէր զանոնք, պիտի զարնէր անոնց:

Եւ զինքն ալ պիտի սպաննէին:

Տռամը որուն հանդիսատես կ'ըլլայինք, պարզ էր, մեկնութեան պէտք չունէր: Բայց նորէն հարցուցինք, թէ ի՞նչ կայ՝

— Բան չկայ,— ըսաւ մէկը:

Հալէպ մտնելը խստիւ արգիլուած էր Գարլըքի այդ դժոխքին մէջ գտնուողներուն: Այն ճուացող կնոջ զաւակը, տակաւին հազիւ տասնըչորս տարեկան մանչ մը, փախեր էր քիչ մը առաջ: Քաղաքը ազգական մ'ունէին ապահովաբար զայն տեսնելու կ'երթար: Ժանտարմա մը տեսեր ու ձայն տուեր էր իր ընկերներուն, որոնք հրացան պարպեր էին տղուն վրայ:

— Ո՞վ գիտէ, թերեւս ալ սպաննեցին եւ մարդը, որ այս տեղեկութիւնը տուաւ մեզի,— պէտք տեսաւ աւելցնելու:

— Բան չկայ… բան չկայ…

Տղայ մը կը սպաննէին… մայրը… մէկ հատիկն էր… իր սրտին զարհուրելի ցաւը կը պոռար… կը հատնէր անձկութենէն, որ այլեւս յուսահատութիւն մըն էր… կեանք մը կը մարէր… ոչինչ կ'արդարացնէր ոճիրը, բայց կը գործուէր ամենաանողորմ կերպով եւ ապաշաւ չպիտի ունենար… ժանտարմաները զայն կը գործէին զբօսանք մը ընելու պէս… կը խնդայի՛ն սպաննած ատեննին… կրնային բոլորն ալ սպաննել, միշտ իբր զբօսանք, խնդալո՛վ …

— Բան չկայ… բան չկայ,— ըսաւ մարդը անգամ մըն ալ:

Եւ իրօք, ի՞նչ էին այս պզտիկ տռամները բաղդատմամբ այն զարհուրանքին որմէ անցեր էին մարդիկը:

Գ

Սակայն անդին՝ կ'երեւայ տեսարանը բոլորովին հետաքրքրական կը դառնար, որ գաղթականներու խումբերը այլեւս կարեւորութիւն չէին ընծայեր ժանտարմաներու արգելքին. հետզհետէ կը մօտենային բարձունքին կողերուն, եւ

իրարու վրայ խռնուած՝ իրենց աչուըներուն միանգամայն անհանգիստ ու սարսափահար նայուածքը կ'երկարէին սարն ի վար:

Մօտեցանք եւ սկսանք նայիլ մեր կարգին:

Բուն տռամը ճիշդ այդ պահուն էր, որ տեղի կ'ունենար:

Տղան չէր զարնուած: Այն բոլոր գնդակները ի զուր արձակուեր էին այդ խորտուբորդ զառիթափն ի վար՝ ուր հողի իւրաքանչիւր ցցունք պատնէշի մը պաշտպանութիւնը կ'ընծայէր: Բայց այն երկու ձիաւոր ժանտարմները սուրացեր կտրեր էին ճամբան ուրկէ պզտիկը կրնար իր վայրէջքը շարունակել՝ կառուղիին հասնելու համար: Եւ հիմա, կը հրամայէին անոր, որ իջնէ ու անձնատուր ըլլայ:

Բայց տղան չէր շարժեր գտնուած տեղէն: Հրացանաձգութեան առթած սարսափը զինքը կեցած տեղին գամեր էր: Իր անշարժ, կարծես գետինը մխուած սրունքներուն վրայ՝ իրանն ու գլուխը անընդհատ կը դառնային մէյ մը այս, մէյ մը այն կողմ, տենդագին արագութեամբ մը: Աչուըները՝ գլխուն իւրաքանչիւր շարժումին հետ՝ անհանգիստ ակնարկներով շուրջբոլորը կը զննէին, կարծես փախուստի ճամբայ մը փնտռելու: Երբեմն՝ յանկարծական դող մը կը ցնցէր ամբողջ մարմինը, թերեւս այն պահերուն, երբ աչուըներուն նայուածքը իր շուտիկ հետազօտութեան ընթացքին փախուստի ճամբայ մը չտեսնելու՝ յուսահատ կ'ամփոփուէր ինք իր վրայ եւ կափարիչները կը գոցուէին դանդաղօրէն, ինչպէս նոր կանգ առած թռչուն մը կը գոցէ իր լայնաբաց թեւերը:

Խեղճ պզտիկ: Կը փակէր աչուըները՝ չտեսնելու համար այն ժանտարմաները որոնք եկեր իր ազատութեան ճամբան կտրեր էին: Բայց աչուըները փակելէն վերջ կ'երեւայ երազանքի պահ մը կը սկսէր իրեն համար, եւ այդ տեսակ մը ներքնահայեցութիւնը անշուշտ աւելի սոսկալի բան մըն էր, իրեն ցոյց կու տար սարսափելի անցքերը այն ամբողջ մարտիրոսութեան որուն պիտի ենթարկուէր՝ անգամ մը անոնց ձեռքը անցնելէն վերջ, որ իսկոյն կը բանար աչուըները, խոշոր–խոշոր կը բանար, վայրկեան մը առաջ լոյսին վերադառնալու, այդ այլեւս մօտալուտ հեռանկարէն խուսափելու աճապարանքով մը:

Ու կը հեւար, կը հեւար իր արշաւասոյր վայրէջքին յոգնութենէ՞ն արդեօք, թէ վախէն:

Ժանտարմաները կը շարունակէին հրամայել, որ վար իջնէ, կ'ապահովցնէին, թէ բան մը չպիտի ընեն, բայց պզտիկը չէր վստահեր: Ո՞վ գիտէ ինչեր տեսած էր իր բոյնէն խլուելէն ի վեր, այն սպանդի անվերջանալի ճամբաներուն վրայ, որոնց մէջ՝ չարչարանքի ամենէն սոսկալի բաժինը պզտիկներուն վիճակեր էր:

Վերէն՝ մարդիկ կը քաջալերէին զինքը.

— Գնա՛,— կը պոռային,— իջի՛ր, չեն զարներ:

Իրօք կը վստահէի՞ն ժանտարմաներու խօսքին, թէ իրենց սեփական մորթին ապահովութիւնը կը փնտռէին այդպէս «յանցանքի» մէջ բռնուած մէկը «ուղղութեան» բերելու աշխատելով: Աւելի՝ ժանտարմաներուն աչքը մտնելու փորձ մըն էր իրենց ըրածը: Եւ թերեւս այդ խորհուրդը տուած ատենին բոլորն ալ վստահ էին,

թէ պզտիկին պատիժը սարսափելի պիտի ըլլար: Այնքա՜ն այդ մորթի ապահովութեան մտահոգութիւնը վատ դարձուցեր էր մարդիկը:

Տղան սակայն կը յամառէր չիջնելու: Խեղճը կը զգար անշուշտ, թէ ի՞նչ կը սպասէ իրեն եւ կը փորձէր կարելի եղածին չափ երկարաձգել անստուգութեան, վտանգի, բայց նաեւ ազատութեան այդ րոպէները:

Այն ատեն՝ ժանտարմաներէն մէկը ձին քշեց առաջ, դէպի սարը: Բայց բարձրունքը ցից էր: Անասունը, հազիւ քանի մը քայլ կրցաւ յառաջանալ ու կեցաւ ետեւի ոտքերուն վրայ՝ որոնց սմբակները գետինը մխուեր էին հողի ու քարերու կրկին հոսանք մը իջնեցնելով սարն ի վար: Ձիուն այդ աշտանակումը այնքա՜ն անակնկալ կերպով տեղի ունեցեր էր, որ ժանտարման քիչ մնաց վար իյնար: Հազիւ թէ անասունին բաշերուն կառչելով յաջողեցաւ պահել հաւասարակշռութիւնը:

Ձին խոնարհեցուց իրանը: Բայց ալ չկրցաւ կենալ այդ ցից դիրքին վրայ եւ նորէն հողի ու քարերու ահագին յորձանք մը գոյացնելով նահանջեց:

Պզտիկը աչքէ կորսնցուցեր էինք այդ տեսարանը դիտած ատեննիս: Երբ որ իրեն դարձանք՝ տեսանք, որ կծկուեր նստեր է գետնին մէկ ցցունքին ետին, ինք իր վրայ ծալլուած, աջ թեւը գօտիի մը պէս աչուքներուն շուրջը բոլորած, մօտեցող պատուհասին այն սարսափելի պատկերը չտեսնելու համար:

Ձիուն նահանջին հետ՝ գլուխը վերցուց, մէյ մը վար նայեցաւ, յետոյ մեր կողմը դառնալով՝ երկար ակնարկ մը ուղղեց սարին կողերուն շուրջբոլորը խռնուած բազմութան: Ի՞նչ խօսուն բան մը կար այդ ակնարկին մէջ աչքերը կը նայէ՞ին իրօք, թէ կը պոռային, կը պաղատէ՞ին:

Տարաբա՜խտ տղայ: Օգնութիւն կը հայցէր:

Օգնութի՜ւն... բայց բոլորս ալ կ'ուզէինք... այնքա՜ն սրտայոյզ բան մըն էր այն ահաւոր վտանգին առջեւ ճխլած այդ պտըտիկ յուսահատ դրութիւնը:

Եւ սակայն չեմ յիշեր աւելի սպառիչ չարչարանք մը քան այդպէս վտանգի մատնուած մէկու մը օգնութեան հասնելու անդիմադրելի ըղձանքով լեցուած ըլլալ եւ բան մը, բան մը չկարենալ ընելը...

Ի՞նչ ատելութիւն կար նոյն պահուն մեր մէջ՝ այդ ժանտարմաներուն համար, երբ այդ խեղճ պզտիկը իր վախուն ահաւոր խորութենէն այն անբարբառ պաղատանքը կը հասցնէր մեզի՝ աչուքներուն այն խելայեղ ու խելայեղիչ նայուածքով:

Անզօ՛ր ատելություն, գերագոյնը տանջանքներուն...

Պիտի տեսէ՞ր տակաւին այս սոսկումի տեսարանը: Տղուն հետ՝ հիմա մենք ալ կը հեւայինք անհամբեր: Լմննա՜ր: Որովհետեւ այլեւս անտանելի դարձած էր այս տաժանքը:

Դ

Բայց արդէն՝ բարձունքին ստորոտը նոր անցքեր կը դառնային: Երրորդ ժանտարմա մըն ալ, առանց ձիու, եկեր միացեր էր միւսներուն, չուանի հիւսք մը անցուցած թեւին եւ անոնց հետ կը խորհրդակցէր: Կ'երեւայ որոշում մը տուին, որովհետեւ նորեկը, միւսներէն բաժնուելով, սկսաւ սարն ի վեր դէպի պզտիկը յառա-

ջանալ: Վերելքը դիւրին չէր: Ժանտարման տաժանքով կը բարձրանար, գրեթէ իւրաքանչիւր քայլի սահելով: Շատ հեղ կ'ընկրկէր քան կը յառաջանար: Եւ սակայն միշտ աւելի կը մօտենար այն հողի ցցունքին, որուն ետին պզտիկը կծկուեր կեցեր էր:

Տռամը պիտի վերջանա՞ր, թէ նոր պիտի սկսէր: Անստուգութեան մէջ էինք:

Ժանտարման կը մօտենար, եւ խեղճ տղան որ կը տեսնէր զայն, այլեւս աչուընները չէր անջատեր անկէ: Ակռաները կը կափկափէին չարաշուք աղմուկով մը զոր աւելի կը զգայինք քան կը լսէինք եւ այնքա՜ն տենդով կը դողար, որ իր վախուն այդ քստմնելի սրսփուքը վարակիչ բան մը դարձեր էր: Մենք ալ վերը կը դողայինք:

Այլեւս երկար չտեւեց: Ժանտարման հասեր էր պզտիկին: Եւ խեղճ տղան նորէն աջ թեւը իբր գօտի պլլեր էր աչուընեռուն վրայ կը սեղմէր զայն դէմքին շուրջը, կը սեղմէր կրքով, մոլեգնութեամբ չտեսնելու, չտեսնելու, չտեսնելու համար: Ու կը պոռար՝… ի՞նչ… որո՞ւ… ինք ալ անշուշտ չէր գիտեր…

Երբ ժանտարման իր մօտ հասաւ, տղան ոտքի ելաւ ընկրկելու համար, բայց շատ տեղ չունէր երթալիք: Հազիւ քանի մը քայլ առաւ եւ կռնակը կպաւ այն հողի ցցունքին, որուն ստորոտը կեցեր էր: Թեւերը վար առած էր այլեւս իրանին երկու կողմերէն՝ կախուած էին կոտրած ճիւղերու պէս եւ ջղաձգական դող մը անընդհատ կը շարժէր զանոնք:

Ժանտարման գրեթէ երկու քայլ անդին կեցած, հետը բերած չուանին հիւսքը կը քակէր: Պիտի կապէ՞ր տղան: Բայց ի՞նչ պէտք կապելու: Այդ պզտիկ, շատ պզտիկ մարմինը արդէն վախէն կապուէր էր: Ժանտարմային մէկ մատն իսկ այլեւս կը բաւէր զայն ուզած տեղը առաջնորդելու: Ուրեմն ինչո՞ւ այդ չուանը: Չէինք հասկնար:

Ու մինչդեռ ժանտարման կը շարունակէր չուանով զբաղիլ, տղուն իրանը տակաւ կը հակէր սրունքներուն վրայ: Քիչ մըն ալ եւ կարծես իր կախուած թեւերը գետնին պիտի քսուէին, ու մարմինը բուրգի մը ձեւը պիտի առնէր: Չէր խօսեր, բայց շրթունքները միշտ կը կափկափէին անիմանալի մրմունջով մը, զոր դարձեալ կը զգայինք քան կը լսէինք: Կ'աղօթէ՞ր, թէ՞ կը պաղատէր:

Ինչ կը դողար նորէն: Բայց չէ՞ որ մէնք ալ միասին կը դողայինք: Այդ վտանգը մեզի չէր սպառնար, բայց վախը մեր մէջ ալ կը ծաւալէր, կը տարածուէր մեր էութեան նոյնիսկ ամենախոր ալքերը ինչպէս կաղապարի մը բերանն ի վար թափուած ատրաշէկ հեղուկ մը, որ կը տարածուի մինչեւ անոր ամենէն մանուածապատ անցքերուն մէջ եւ զայն կը լեցնէ ամբողջովին:

Կը վախնայինք մանաւանդ անոր համար, որ տակաւին բան մըն ալ չէինք հասկնար տղուն մօտը գտնուող այդ ժանտարմային անոր միւս երկու ընկերներուն մտադրութենէն: Եւ անստուգութիւնն ալ վախ մըն է արդէն:

Բայց այլեւս երկար չպիտի տեւէր ատիկա: Սո՛ւր, ցնցող կանչ մը լսեցինք:

— Մայրի՛կ… մայրի՛կ…

Առաջին աղաղակն էր, որ տղան կ'արձակէր:

Ժանտարման զինքը պառկեցուցեր էր, ծունկը փակցուցեր էր կուրծքին, եւ…

Բայց սոսկալի բան էր ատիկա…

Տղան կը տապլտկէր իր պզտիկ տկար իրանին վրայ ահագին բանի մը պէս ծանրացող այն ծունկին տակ, կը գալարուէր՝ ոտուըներէն բռնուած թռչունի մը սարսափահար թեւթափով ու կը պոռար, կը պոռար.

— Մայրիկ… մայրիկ…

Թերեւս տակաւին շատ բաներ ունէր ըսելիք, բայց չէր կրնար ուրիշ ոեւէ բառ արտաբերել:

— Մի՛ ըներ, մեղք է, չէր գիտեր, պոռացին մէկ քանի հոգի ժանտարմային:

Որովհետեւ անոր կռնակը կը քօղարկէր տղուն իրանն ու դէմքը եւ ամէնքս ալ անանկ կը կարծէինք, թէ այդպէս ծռած՝ զայն կը խեղդէ:

Եւ այդ չուանը՝ ապահովաբար տղուն դիակը վար քաշելու համար բերած պէտք է ըլլար իրեն հետ:

— Մի՛ ըներ… մի՛ ըներ… մեղք է,— պոռացին նորէն նոյն մարդիկը:

Սակայն կ'երեւայ այլեւս լմնցած էր ամէն բան, որովհետեւ տղուն ձայնը չէր լսուեր, ու ժանտարման ոտքի կ'ելլէր:

Մարդիկ դարձուցին իրենց աչուընները, վախնալով, որ շանթահարիչ պատկեր մը պիտի տեսնեն: Բայց հետաքրքրութիւնն այնքա՛ն անողորմ բան մըն է, որ չդիտելու այդ յամառութիւնը գրեթէ վայրկեանաբար խորտակուեցաւ իրենց մօտ: Գլուխները փութով այն կողմ դարձան եւ աչքերը սկսան նայիլ: Եւ առաջին ակնարկին իսկ՝ անպատում զարմանքի արտայայտութիւն մը լեցուց զանոնք:

Պզտիկը ողջ էր, միշտ պառկած գետնին վրայ ու գլուխը կէս մը բարձրացուցած՝ կը նայէր իր աջ ոտքին: Մարդոց աչքերը իր ակնարկին հետեւեցան: Այն ատեն միայն հասկցան, թէ ինչ ըրած էր ժանտարման՝ տղուն վրայ խոնարհած ատենը: Չուանը՝ մէկ ծայրէն բռնած՝ օղակ կը պլլէր իր ձախ թեւին շուրջը:

Ի՞նչ պիտի ընէր: Ոչ ոք բան մը կը հասկնար տակաւին: Բայց ժանտարման գործը լրացուցեր էր: Երբ ամբողջ չուանը պլլեց, թեւին վրայէն հանեց կազմած շարք–շարք օղակը եւ քանի մը անգամ կողն ի վեր ճօճելէ ետք նետեց ձիաւոր ժանտարմաներէն ամենէն մօտաւորին, որ արդէն ատոր կը սպասէր կարծես: Չուանին օղակները՝ անջրպետին մէջ քակուելով, քակուելով ձեւացուցին երկար գիծ մը, որ պահ մը այդպէս առկախ թրթռալէ ետք ինկան գետին: Ծայրը հասեր էր մինչեւ սպասող ժանտարմային, որ իսկոյն վերցուց զայն եւ իր հեծած ձիուն վզին շուրջը պլլելով սկսաւ կապել՝ հանգոյցները կարելի եղածին չափ ամուր դարձնելով յայտնի ճիգով մը:

Ե

Եւ յանկարծ, սարսափ աղաղակ մը թռաւ բարձունքին վրայ խռնուած բազմութենէն: Բոլորը մէկ պոռացեր էին, անանկ որ՝ կարծես մէկ հատիկ բերան մը արտաբերեր էր այդ ահաւոր աղաղակը: Ու տակաւին բան մը չէր եղած վարը: Բայց ամէն մարդ հասկցեր էր, թէ ի՞նչ պիտի ըլլայ:

Հեծեալ ժանտարման՝ չուանին ծայրը ձիուն վզին կապելէ վերջ՝ ցցուեր էր անասունին վրայ ու կը խթանէր զայն՝ խարազանը շաչեցնելով անոր քամակին երկայնքը: Անասունը՝ այդ անակնկալ խթանումէն ու խարազանի հարուածներէն խելայեղ՝ պահ մը վարանեցաւ, ապա սկսաւ արշաւել քառատրոփ: Առաջին մէկ քանի քայլերուն՝ չուանը, որ պտուտակի մը գալարումներով ինկած էր բարձունքն ի վար, սկսաւ շտկուիլ, ուղղաձիգ գիծ մը դարձաւ, եւ այդ գիծը եղերական արագութեամբ կ'երկարէր միշտ վեր, միշտ աւելի վեր, մինչեւ այն խեղճ պզտիկը, որ անոր միւս ծայրին կապուած էր ոտքէն: Մեզի անմնկ կու գար, թէ վառօդի տակառի մը յանգող բռնկած պատրոյգ մըն էր որուն երկայնքէն կայծերը դէպի տակառը կը սուրային ցնորեցուցիչ արագութեամբ մը: Պահիկ մըն ալ, եւ ձիուն արշաւասոյր վազքին հետ՝ չուանին մնացած մէկ քանի վէտվէտումներն ալ պիտի շտկուէին եւ անկէ ետք… այդ սուրացող ձին… անոր վզին կապուած չուանը… չուանին միւս ծայրին կապուած տղան… սարն ի վար…

Բայց արդէն կ'ըլլար այդ սոսկալի բանը: Հեւասպառ ծռեր էինք իրարու վրայ, կը նայէինք սարսափէն խոշորցած մեր խեղճ աչուըներով: Չուանը՝ ձիուն վիզէն մինչեւ այն տարաբախտ պզտիկին ոտքը՝ քանակով քաշուած ուղիղ գիծ մըն էր դարձեր: Կը նայէինք ձիուն… ոստում մըն ալ, եւ արդէն…

Տեսանք այդ ոստումը: Խթաններու նոր եւ աւելի ուժեղ մղումի մը վրայ, միանգամայն երկու կողերէն խոցատուած անասունը ըրաւ այդ վճռական ոստումը, յետոյ ուրիշ մըն ալ, ուրիշ մըն ալ…

Փլուզման աղմուկ մը, հողի՝ քարերու անկման ձայնը, որ կ'երկարաձգուէր ողբագին զանգիւններով, մեզ ստիպեց որ տղուն դառնանք: Փոշիի ամպ մը, որ հետզհետէ կը ծաւալէր ու կ'անգայտանար եւ անոր գուլաներուն ճիշդ կեդրոնը պզտիկին մարմինը, որ յանկարծ խլուէր էր գետնէն ու կը սաւառնէր անջրպետին մէջ, զառիթափն ի վար, կորսնցուցած իր բնական ձեւերը, խառնափնթոր եւ այլեւս անճանաչ բանի մը պէս: Այն բարձրութենէն ուրկէ կը խլուէր, ինկաւ հողի ուրիշ ցցունքի մը վրայ, եղերական աղմուկով մը, յետոյ նորէն բարձրացաւ, նորէն ինկաւ ու զարնուեցաւ ուրիշ հողի ցցունքի մը, միեւնոյն սարսափելի աղմուկով, որ այելեւս չէր դադրեր կարծես, որովհետեւ իր արձագանգները մեր մէջն էին, մեր հոգիին ամենախոր ոլորտներուն մէջ, ու կը թնդային, կը թնդային… կը թնդան տակաւին հիմա ալ՝ երբ տարիներ անցած են ատկէ ի վեր… միշտ պիտի թնդան, պիտի թնդան…

Այն զահանդական արագութեան մէջ ուր տեղի կ'ունենար այս ահաւոր անցքը, մեզի անանկ եկաւ, որ տղուն մարմինը երրորդ անգամ մըն ալ կը բարձրանայ անջրպետին մէջ: Ասիկա տպաւորութիւն մըն էր զոր ունեցանք, բայց կ'երեւայ սխալեր էինք, որովհետեւ տղուն մարմինը հոն պէտք է ըլլար ուր ինկեր էր իր երկրորդ ոստումէն ետք, հողի ցցունքին առջեւ որուն զարնուէր էր ինկած ատենը: Գոնէ իր գլուխը որոշ կը տեսնէինք մանաւանդ ողբագին նայուածքն իր աչուըներուն որոնք մեզի կը նայէին անպատում արտայայտութեամբ մը,–– միանգամայն ցաւի, չարչարանքի, աղաչանքի, բայց մանաւանդ յանդիմանութեան արտայայտութեամբ մը…

Եւ սակայն… հակառակ անոր, որ այդ գլուխը եւ անոր վրայ այդ աչքերը կը տեսնէինք այնքա՜ն իրական կերպով մը, դարձեալ այն տպաւորութիւնը ունեցանք, որ տղուն մարմինը իրօք նոր ոստում մը ըրած է, նորէն կը սաւառնի անջրպետին մէջ: Եւ այս անգամ՝ այս տպաւորութիւնը նոյնքան իրական էր, որքան տղուն գլուխը տեսնելնիս: Կարծես կրկներեւոյթի մը առջեւն էինք եւ կարծես մէկի տեղ երկու մարմին կապուած էին այն չուանին, զոր ձին կը քաշէր իր արշաւին հետ: Որովհետեւ որոշ կը տեսնէինք տղուն գլուխը՝ աչուըներուն այն սարսափելի նայուածքով, այն հողի ցցուքին քով եւ որոշ կը տեսնէինք նաեւ անոր մարմինը, որ անկէ մօտաւորապէս տասը մէթր հեռուն՝ կը սաւառնէր անջրպետին մէջ, այն խառնիճաղանճ ու ողբալի երեւոյթով:

Ապշահար՝ մէյ մը այն անշարժ գլխուն, մէյ մըն ալ այն մյուս սաւառնող մարմնին կը նայէինք փոխն ի փոխ: Աննկարագրելի շփոթութեան պահ մը եղաւ ասիկա: Բայց երկար չտեւեց: Եւ յանկարծ, սոսկումի խուլ աւաչ մը բարձրացաւ այդտեղ խռնուած եւ այն զարհուրելի բանը–– այն զարհուրելի բաները,— տեսնող բազմութեան մէջէն:

Ամէնքս ալ հասկցեր էինք այդ կրկներեւոյթին պատճառը: Իրարու վրայ խռնուած, գրեթէ կուշտ կուշտի, բարձունքին այդ եզերքին վրայ արձանացեր կեցեր էինք, միանգամայն յուզման, վախու, ընդվզումի, ատելութեան եւ կատաղութեան փոթորիկներու երկունքով մը յղացուած խմբանդրիի մը պէս, ու կը նայէինք անկուշտ հետաքրքրութեամբ մը, որ մեր աչուըներէն կը յորդէր: Թերեւս յավիտենականութիւն մը պիտի կրնայինք նայիլ այդպէս:

Բայց յանկարծ, այդ խմբանդրին սկսաւ քայքայուիլ: Խոշոր հոսանք մը ծայր տուած էր վերի կողմէն եւ մարդիկ իրար կը հրմշտկէին, իրարու վրայ կ'իյնային ոչխարներու պէս: Շփոթ ու թաւալուն աղմուկ մը որուն մէջ կ'որոշէինք խարազանի շաչիւններ եւ հրացանի բուներու ընդհարման խուլ ձայնը, մինչեւ մեզի կը հասնէր որոտման մը պէս: Հայհոյութիւններու, սպառնալիքներու, բայց մանաւանդ ցաւի ու սարսափի աղաղակներու կէտկիտուած գոռում գոչում մըն էր որ խուճապի մատնեց մարդիկը:

— Ցրուեցէք, ե՛ֆ, ե՛ֆ,— կը պոռային բարձունքին վրայ մնացած ժանտարմաները:

Ու կը զարնէին, կը զարնէին, միանգամայն խարազանով, հրացանի բուներով եւ իրենց ահագին մոյկերով:

Եւ մարդիկ կ'ընկրկէին իրար ոտնոտելով, վայրկեան մը առաջ ինք զինքնին ապահովելու համար այդ հարուածներէն: Բայց այնքան անզուսպ բան մըն էր հետաքրքրութիւնը իրենց քով, որ այդ խուճապին մէջն անգամ աչքերնին միշտ յառած կը մնար այն սոսկալի բաներուն,— այն անշարժ գլխուն եւ այն սաւառնող մարմնին,— որոնք առեղծուածային կրկներեւոյթի մը պէս երեւցեր էին իրենց պահ մը առաջ եւ զորս հիմա կ'ըմբռնէին այլեւս:

Երկրորդ անկումին՝ տղուն գլուխը անջատուեր էր իրանէն ու մնացեր էր այն հողի ցցունքին մօտ որուն զարնուէր էր ահաւոր ուժգնութեամբ, մինչդեռ գլխատո-

ւած մարմինը, ձիուն արշաւին հետ միջոց մը նորէն անջրպետին մէջ բարձրանալ ու սաւառնելէ ետք, հիմա դարձեալ կ'իջնէր վար: Այլեւս որոշ կը տեսնէինք զայն, կը տեսնէինք մանաւանդ վիզը, ուրկէ գլուխը կարծես պրկելով, պրկելով անջատեր էին եւ որուն ահռելի պատռուածքին բերանը սեւորակ թանձր արիւն մը կը խաղար տակաւին, սմքելու վրայ եղող ջրվէժի մը տկար ու ջղաձգական կայլակումներով:

Պահ մը վերջ, նորէն ինկաւ վար, զարնուեցաւ ուրիշ հողի ցցունքի մը: Լսեցինք նոյն եղերական աղմուկը, որ սոսկումի նոր սարսուռներ տուաւ մեր մարմնին, բայց ա՛լ նայելու ատեն չունէինք: Ամբոխին մղումը անդիմադրելի բան մըն էր դարձեր: Հազիւ վերջին ակնարկ մը կրցանք նետել այն դժբախտ պզտիկին գլխուն, որ միշտ անշարժ կը նայէր ինկած տեղէն, կը նայէր այն խոշոր աչուքներուն մէջ պաղած նայուածքով:

Եւ անոնց մէջ միշտ նոյն անպատում արտայայտութիւնը կը շողար նորէն, միանգամայն ցաւի, չարչարանքի, աղաչանքի, բայց մանաւանդ յանդիմանութեան, յանդիմանութեան, յանդիմանութեան արտայայտութիւնը:

— Ե՜ռ, ե՜ռ, ցրուեցէ՛ք,— կը պոռային ժանտարմաները:

Ու կ'ընկրկէինք բոլորս ալ, թերեւս ո՛չ այնքան իրենց հայհոյութիւններուն ու հարուածներուն երկիւղէն, որքան այն պզտիկ նահատակին աչուքներուն մէջ փայլատակող յանդիմանութեան զարհուրելի արտայայտութենէն խթանուած:

Գրեթէ շնչասպառ հասանք վրաններուն քով:

.....

Մայրը՝ միշտ այն վրանին մօտն էր, ուր զինքը կեցուցեր էին պահ մը առաջ, շրջապատուած կիներով նոյն խումբէն՝ որոնց ուրիշներ ալ միացեր էին:

Ցաւահար կինը տակաւին չէր գիտեր, թէ ի՞նչ բախտ վիճակուած է տղուն: Բայց իր մօր սիրտը կը նախազգար արդէն այն սոսկալի տռամը, որուն պիտի յանգէր զաւակին փախուստի փորձը:

Այլեւս չէր կրնար խօսիլ: Յուզումը եւ այն երկարատեւ մաքառումը, որով ի զուր փորձեր էր ճողոպրիլ զինքը զսպելու աշխատող կիներուն կաշկանդումէն, սպառեր էին զինքը: Կորովը՝ միջոց մը այնքան զօրեղ իր մէջ, շուտով հանգեր էր, ինչպէս տաշեղներու կրակ մը: Իր գունատ շրթունքները կը դողային ու կզակը անընդհատ կ'երերար պարապին մէջ, զահանդական կափկափումով մը:

Անշուշտ բան մը ըսել կ'ուզէր: Ու կ'երեւայ զինքը շրջապատող կիները կը հասկնային, թէ ի՞նչ կ'ըսեն այդ դողահար շրթունքները, որ կը շարունակէին ապահովցնել խեղճ կինը.

— Չէ՛, հոգ մի՛ ըներ, բան չկայ…

24
ՕՐԻՆԱԿՆԵՐ 20-ՐԴ ԴԱՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

✧ ✧ ✧

Օրինակներ 20-րդ դարի ցեղասպանություններից
և
մարդկային իրավունքների մեծածավալ խախտումներից

1904 թ. — Հերերո ցեղը Հարավային Աֆրիկայում
1915–22 թթ. — Հայոց ցեղասպանություն
1919 թ. — Հրեաների ջարդերը Ուկրաինայում
1932–33 թթ. — Ուկրաինացիների արհեստական սովը Խորհրդային Միության մեջ
1936–39 թթ. — Խորհրդային Միության հակաստալինյան տարրի մաքրագործումը իբրև ժողովրդի թշնամիներ
1941–45 թթ. — Հրեական Ողջակիզում
1950–59 թթ. — Բուդդիստները Տիբեթում
1965–72 թթ. — Հութու ցեղը Բուրունդիում
1966 թ. — Իբոնները Նիգերիայում
1972–79 թթ. — Աչէ հնդիկները Փարագուեյում
1975–79 թթ. — Կամբոջայում Կարմիր քմերների կազմակերպած ցեղասպանությունը
1980-ական թվականներից — Բահայիները Իրանում
1980-90-ական թվականներին — Հայերը՝ Ադրբեջանում
1980-ական թվականներից — Սոմալիում, քրդերը Իրաքում և Թուրքիայում
1980-90-ական թվականներին — Արևելեան Թիմոր
19 94 թ. — Թութսիները՝ Ռուանդայում
1998–1999 թթ. — Կոսովո
2003 թվականից — Դարֆուրում և այսպես 21-րդ դարում …

Հատուկ թույլտվությամբ օգտագործված հրատարակություններ, որոնց համար հայտնում ենք մեր շնորհակալությունը.

- Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի ազգային առաջնորդարանի հրատարակած հայոց լեզվի և Հայ դատի դասագրքերից՝ նյութեր:
- Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի ազգային վարժարանների խնամակալ մարմնի հրատարակած «Հայոց ցեղասպանութեան դասաւանդում հայկական վարժարաններուն մէջ» (2006 թ.), որը հիմք է ծառայել բարելավված և ընդլայնված էլեկտրոնային տարբերակի համար:
- «Փյունիկ» (Մանմար) հրատ. «7 Խրատական հեքիաթ» (1993):
- «Արևիկ» հրատ. «Ոսկու կարաս» (1995), նկարազարդում՝ Աիդա Բոյաջյանի:
- «Ամրոց» հրատ. «Ազնիվ տղան», հեղ.՝ Հարություն Հովնաթան, նկարիչ՝ Սուրեն Ներսիսյան:
- «Յեղափոխական ալպոմ», հատոր Ա. և Բ.:
- Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի կայքէջ:
- Centering Corporation (Omaha, NE) Grandfather Hurant Lives Forever by

Susanna Pitzer (2001), by special permission from the author, Centering Corporation, www.centering.org, 1–866–218–0101. Original copyright of English Edition 2001, Centering Corporation.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԱԽԱԲԱՆ. Խոսք ուսուցիչներին 5
ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 7

ՄՍՍ 1

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 9
1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՏԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ 9
2. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ 14
3. ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ (ընկերասիրություն) ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔ 17
4. ԵՂԵՌՆ 23

ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԵՐՐՈՐԴԻՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 28
5. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 28
6. ԳԹԱՍԻՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 33
7. ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ 38
8. ԿՈՐՈՒՍՏ ԵՎ ՔԱՋՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՃԱՌԱԾ ՑԱՎԸ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ 44
9. ՄԵԾ ԵՂԵՌՆ (երրորդ դասարանի համար) 51
10. ՄԵԾ ԵՂԵՌՆ (չորրորդ դասարանի համար) 61
11. ՄԵԾ ԵՂԵՌՆ (հինգերորդ դասարանի համար) 67

ՄՍՍ 2

ՆԱԽԱԲԱՆ. Խոսք՝ ուսուցիչներին 87

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ 88
12. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀՈՒՅՍՈՎ ՊԱՅՔԱՐԻ Է ԴԻՄՈՒՄ 90
13. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 93
14. ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ «ՀԱԶՐԵՆ» 98

ԲԱԺԻՆ 2. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ 102
15. ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԴՐՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 105
16. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՎՆԵՐ 108
17. ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ «ՍԱՐՍԱՓԻ ԳԻՇԵՐ» 120

ԲԱԺԻՆ 3. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ 124
18. ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԱԾ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ 125

19. ԹՈՒՐՔԵՐՆ ՈՒՐԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 127
20. ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ «ՑԵՂԻՆ ՁԱՅՆԸ» ԵՎ «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ».....134

ԲԱԺԻՆ 4. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ.....138
21. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 139
22. ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ 140
23. ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ «ՀԱՅՈՑ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ» ԵՎ «ԲԱՆ ՉԿԱ» 146
ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ «ԲԱՆ ՉԿԱ».....150
24. ՕՐԻՆԱԿՆԵՐ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ 160
Հատուկ թույլտվությամբ օգտագործված հրատարակություններ,
որոնց համար հայտնում ենք մեր շնորհակալությունները..... 161

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

պատմվածքների, հեքիաթների, զրույցների, բանաստեղծությունների, փաստական նյութերի միջոցով

Ուսումնաօժանդակ ձեռնարկ
հասարակագիտական բնագավառի առարկաների
ուսուցիչների, դասղեկների և կազմակերպիչների համար

Հրատարակչության տնօրեն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության գեղ. խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Շապիկի և միջուկի ձևավորումը՝ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ՍԵՐԺ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70×100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 10,25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1400

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak